



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



July ✓
200

В библиотеку Лазаревского
Института Востоковедения
в Пскове.

От профессоров
Т. Христофора Екишиевича
Лазарева.

1857г.

2 0 0 0

12

Dottrina Cristiana del P. Piero

July 5 P

200 ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱԴՐԵԱՆ

Ի Տ. ՅՈՎԱՆԻՔԱՅ ԱՒԵՐԱԴԱՅ

ՅԻՍՈՒՄԵԱՆ ԿՐՈՆԱՀԱՐՔ



411329

Ի ՎԵՆԵՏՈՒ

ԵՎԱՆՍ ՄՐԲՈՑՆ ՀԱԶԱՐԻ

1854

36526

ՅԻշասակ ՀՈԳԻՈՅ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՒ ԵՂԲՈՐ

ՆՈՐԱ ՊԱՐՈՆ ԲԱՂՏԱՍԱՐԱՅ

ՆԵՓԻՍԽԵԱՆՑ



28199

200 - 2001

այսի բառներում ։ Համապատասխան միջական
առաջնորդ քանի թե մաս այսուհետ զավանագույշ է ։
Այս մեջ մեծացնելու անունը մեջ առաջախռութան
առաջ պահպան պատ բառը ։ Ա նորության
մեջ պահպան պատ առաջ պահպան պահպան

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Այս համառօտ Քրիստոնէական վարչ
գաղետութիւնը հաւատացելոց դիւրու-
թեանը համար շարադրած է Հ. Յովսէփ
Գիէրարտ Յիսուսեան վարդապետը : Մեր
սուրբ հաւատքին գլխաւոր գիտնալիքները,
ու Քրիստոնէական բարեկաշտ վարուց
հարկաւոր սկզբունքները պարզ կերպով
բացատրելուն՝ դարոցներու մէջ շատ գոր-
ծածական է, ու շատ օգտակար եղած է
ամեն հասակէ հաւատացելոց : Խտալէրէն
բնագրին մէջ յորդորակիներ, ու Սուրբ
Գրոց պատշաճաւոր խօսքերու հաւաք-
մունքներ ալ կան Եկեղեցւոյ պաշտօնէից
դիւրութեանը համար : Բայց մենք ասոնք
դուրս ձգեցինք՝ միայն տղայոց օգուտը գըլ-
խաւորապէս գիտելով, ու միտք ունենա-
լովոր Եկեղեցւոյ պաշտօնէից գործածու-
թեանն համար պէտք եղածը առենօք ա-

ուանձին հրատարակենք : Մատենագիրը
իւրաքանչյւեր դասին ետև մշյմէկ երկերկու
Աստուածաշունչի պատմութիւններէն ալ
աւելցուցած է : Բայց այս պլատիկ հատո-
րիկը չբեռնաւորելու համար՝ անոնք ալ
դուրս ձգեցինք, տղոց համար Աստուածա-
շունչի պատմութիւնը համառօտ տպած
ըլլալով : Յուսանք որ աշխատովք ու բարե-
պաշտ վայելովք միաբան Աստուծոյ փառքը
մեծացընել ջանալով՝ իւրաքանչյւեր իրենց
հոգւոյն փրկութեանը պառւղ քաղեն այս
փոքրիկ գըքուկիս միջոցովն ալ :

90M1-60



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ա.

Աստուած ու վախճան մարդոյ .

Հ . Ո՞վ զքեղ ստեղծեր ու աշխարհը է
բերեր :

Պ . Աստուած :

Հ . Աստուած ի՞նչ է :

Պ . Երկնի և երկրի արարիչ և ամէն բա-
նի գերագոյն տէր :

Հ . Մարմին ունի՞ Աստուած :

Պ . Չէ . հապա ամենակատարեալ հո-
գեղէն էակ է :

Հ . Աստուած ոկիղըն ունեցեր է :

Պ . Չէ . ոչ ոկիղըն ունեցեր է , և ոչ
վախճան պիտի ունենայ . միշտ եղեր է , և
միշտ պիտի ըլլայ :

Հ . Աստուած ո՞ւր է :

Պ . Երկինքն է , երկրս է , և իր անսահ-
մանութեամբ ամէն տեղ է :

Հ . Աստուած ամէն բան գիտէ :

Պ . Հրամեր էք . մեր ծածուկ մտածութիւններն ալ կը տեսնայ ու գիտէ :

Հ . Աստուած մէկէ մը կախմունք մը ունի :

Պ . Չէ . Աստուած ամեննեին ուրիշէն չկախուիր . հասպա ամէն բան իրմէն կը կախուի :

Հ . Ի՞նչու համար Աստուած զքեզսաեղ ծեր ու աշխարհք է բերեր :

Պ . Չի՞քը ճանչնալու համար , զի՞քը սիրելու համար , իրեն ծառայելու համար , ու ետքը յաւիտենական կենաց արժանի ըլլալու համար :

Հ . Ի՞նչու կրնանք Աստուածոյ ծառայել որ յաւիտենական կենաց արժանի ըլլանք :

Պ . Թէ որ հաւատանք ու գործքով կատարենք այն ամենայն բան , որ քրիստոնէական ուղղափառ հաւատքը մեզի կը պատուիրէ :

Հ . Փրկութեան հասնելու համար քրիստոնէական հաւատքը ի՞նչ բան կը պատուիրէ :

Պ . Այս վեց բանը . հաւատք . Յոյս . Սէր . Ընդունել զմորհուրդս Եկեղեցւոյ . Փախչել 'ի չարէն . և Առնել զբարին :

Անշեն Քրիստոնէի . Հաւատք . Սուրբ
Երրորդորիւն:

Հ . Դու ի՞նչ ես :
Պ . Աստուծոյ շնորհքովը Քրիստոնեայ
եմ :

Հ . Քրիստոնեայ ո՞ւ կ'ըսուի :
Պ . Ու որ կը մկրտուի , ու կը դաւանի
Քրիստոսի վարդապետութիւնը , զորն որ
սուրբ ուղղափառ Եկեղեցին մեզի կը սոր-
վեցընէ :

Հ . Քրիստոնէի մը առջի Հարկաւոր
բանը ո՞րն է :

Պ . Հաւատքն է :
Հ . Հաւատքն ի՞նչ է :
Պ . Աստուծոյ շնորհքն է , որով կը
հաւատանք իրեն , և այն ամէն բանին՝ որ
ինքը սուրբ Եկեղեցւոյն յայաներ է թէ
դրուկ թէ աւանդութեամբ :

Հ . Հաւատքի բաներուն ի՞նչպէս պէտք
է հաւատանք :

Պ . Աչքութեսած բաներէն աւելի հաս-
տատութեամբ պիտի հաւատանք , վասն
զի մեր աչքը կրնայ խաբուիլ , բայց Աս-
տուած ոչ կրնայ խաբել և ոչ կրնայ խա-
բուիլ :

Հ . Ի՞նչ որ Աստուած Եկեղեցւոյն յայտ-

ներ է նէ՝ անոնց ամենուն ալ պէտք է հաւատալ ու գիտնալ :

Պ. Ինչ որ Եկեղեցին կը հաւատայ ու կը սորվեցընէ՝ անոնց ամենուն ընդհանրապէս պէտք է հաւատալ. իսկ մասմաւորապէս հաւատալ ու գիտնալ պէտք է գոնէ հաւատքի գլխաւոր խորհուրդները :

Հ. Հաւատքի գլխաւոր խորհուրդները որո՞նք են :

Պ. Ամենասուրբ Երրորդութեան, Մարդեղութեան ու փրկութեան խորհուրդները :

Հ. Աստուած քանի՞ է :

Պ. Աստուած մէկ է, և մէկէն եւել չկրնար ըլլուլ :

Հ. Անձինք քանի՞ են :

Պ. Իրեք Հայր, Որդի, և Հոգին սուրբ. և իրեք անձն ալ մի Աստուած է :

Հ. Այս իրեք անձինք իրարմէ զատ զատ են :

Պ. Հրամեր էք. անանկ որ Հօր Աստուածոյ անձը՝ Որդւոյ Աստուածոյ անձը չէ. Հօր Աստուածոյ և Որդւոյ Աստուածոյ անձը՝ Հոգւոյն սրբոյ անձը չէ :

Հ. Ուրեմն իրեք Աստուած են :

Պ. Չէ. իրեք անձինք են: բայց մի Աստուած է. և այս է որ կ'ըսուի խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան :

Հ. Հայր Աստուած Որդի Աստուածմէ ու Հոգին սուրբէն աւելի երեց ու աւելի կարող է :

Պ. Չէ. իրեք անձինքն ալ մէկ կերպով

յաւիտենական, կարող ու կաաարեալ են :

Հ. Ի՞նչպէս կըլլաց այդ բանիը :

Պ. Վասն զի էութիւննին ու աստուածութիւննին նոյն է :

Հ. Այս սբ խորհուրդը խելքի դէմշի:

Պ. Չէ. թէ այս և թէ ասոր նման ուրիշ խորհուրդներն ալ խելքէ վեր են, բայց խելքի դէմշին :

Հ. Ուրեմն խելուրնիս այս սուրբ խորհուրդին չի կրնար համնիլ :

Պ. Չէ. վասն զի Աստուած անսահման ըլլալով խելքով չենք կրնար ըմբռնել. բայց պէտք է հաւատանք, վասն զի ինքն որ անխաքելի ճշմարտութիւն է, ինքն է մեզի յայտներ այս սուրբ խորհուրդը :

Պ.

Խորհուրդ Մարդեղուրեան ու փրկուրեան և Նշան առշրջ խաչին .

Հ. Ամենասուրբ Երրորդութեան ո՞ր անձը մեզի համար մարդ եղաւ :

Պ. Որդին Աստուած :

Հ. Մարդ ըլլալ ի՞նչ ըսել է ;

Պ. Մեզի նման մարմին և հոգի առնել :

Հ. Որդին Աստուածոյ ի՞նչպէս մեզի նման մարմին և հոգի առաւ :

Պ. Ցարդանդի սուրբ կոյս Աստուածածնին չոգւոյն սրբոյ ներդործութեամբը մարդ ըլլալով :

- Հ . Քրիստոսքանի՞ բնութիւն ունի :
- Պ . Երկու . աստուածային ու մարդկային :
- Հ . Ինչո՞ւ համար կ'ըսես թէ Քրիստոս երկու բնութիւն ունի :
- Պ . Ասն զի ճշմարիտ Աստուած է ու ճշմարիտ մարդ :
- Հ . Քրիստոսքանի՞ անձ ունի :
- Պ . Մեմիայն , որ է անձն Որդւոյն Աստուածոյ :
- Հ . Ինչո՞ւ համար Որդին Աստուածոյ մարդ եղաւ :
- Պ . Մեզ մեղքէ ու գժոխքին առնջանքէն աղատելու համար , ու յաւիտենական կենաց արժանի ընելու համար :
- Հ . Քրիստոս զմեզ ի՞նչպէս փրկեց :
- Պ . Մեզի համար չարչարանքքաշելով և խաչին վրան մեռնելով :
- Հ . Քրիստոնէին նշանը ի՞նչ է :
- Պ . Սուրբ Խաչն է :
- Հ . Ի՞նչու կը խաչաչակնքես դուն զքեղ :
- Պ . Կախ աջ ձեռքս ճակատիս վրայ կը զնեմ , ետքը կուրծքիս վրայ , ետքը ձախ ուսիս ու ետքը աջ ուսիս ու կ'ըսեմ Յանուան Հօդ և Ուգույ և Հագույն սբենոյ :
- Հ . Սուրբ Խաչին նշանը մեզի ի՞նչ կը սորվեցրնէ :
- Պ . Գլխաւորապէս մեր հաւատքին երկու մեծ խորհուրդները , ամենասուրբ Երրորդութեան ու Փրկութեան խորհուրդը :
- Հ . Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը ի՞նչու կը ցուցընէ :

Պ . Աս խօսքերովս Յանան Հօր և Ու-
դաս, և Հագառյան սրբայ :

Հ . Փրկութեան խորհուրդը ի՞նչպէս կը
ցուցընէ :

Պ . Խաչին ձեզ ընելով, որուն վրայ որ
Քրիստոս մեղի համար մեռաւ, անոր հա-
մար Խաչիննշանը Որդւոյն Աստուծոյ Մար-
դեղութեան խորհուրդն ալ կը ցուցընէ :

Հ . Սուրբ Խաչիննշանը Երբ սկաբք է ը-
նել :

Պ . Առաւօտք մարդ արթընցածին սկէս,
իրիկունը սկառկելու ատեն, աղօթքին սկիզ-
բը ու ետքը, ու օրուան մէջ դիսաւոր դործք
մը սկսելու ատեն :

Հ . Կերտկուրէ առաջ ու ետե Խաչ հա-
նելը ամրէնալու բան է :

Պ . Չէ : Այս բանը քրիստոնէ ըլլալուն
վրայ ամրէնալ է : Քրիստոս իրեն ամօթ սկիտի-
սետէ զանոնք, որ զինքը ամօթ կը սեպէն :

Հ . Ի՞նչ բանի համար սուրբ Խաչիննշա-
նը շատ անդամ սկաբք է ընել :

Պ . Որպէս զի ինչ որ սկիտի ընենք Աս-
տուծ օրհնէ, ու սատանային որոգայթի-
ցը ու փորձութեանցը գէմ զօրանալու հա-
մար :

Հ . Ի՞նչպէս սկաբք է խաչ հանել :

Պ . Յարդութեամբ ու ջերմեանդու-
թեամբ, և ոչ անմտադրութեամբ, ինչպէս
որ շատերը կ'ընեն :

Դ.

Հանգանակ Առաքելոց , ու առաջին
մասը .

Հ . Քրիստոնէին հաւատալու բաները
որո՞նք են :

Պ . Այն ամենայն բան որ Հաւատամքին
մէջը կը բովանդակուի , և Հաւատամքը Հան-
դանակ կ'ըստեի :

Հ . Հանդանակը մէկ կերպ է :

Պ . Քանի մը կերպ հանդանակ կայ .
բայց որովհետեւ Առաքելոց ըսուած հան-
դանակը առաջին՝ ու մէկալ հանդանակինեւ
ըսւն հիմն է , անոր տեղեկութիւնը հարկա-
ւոր է :

Հ . Ինչո՞ւ Առաքելոց հանդանակ կ'ըսուի
այս հանդանակը :

Պ . Վասն զի երկոտասան Առաքեալք են
շարադրեր :

Հ . Ե՞րբ են շարադրեր :

Պ . Աւետարանը քարոզելու համար աշ-
խարհը ցըսւելէն առաջ :

Հ . Ինչո՞ւ համար են շարադրեր :

Պ . Որպէս զի ամենայն քրիստոնիեայք
մէկ հաւատք դաւանին :

Հ . Հաւատամքը բերնուց պէտք է դիմ-
նալ :

Պ . Հրամեր էք . ու շատ անդամ ալլ-
ուել պէտք է :

Հ . Ըսէ տեսնամ :

Պ . 1 ՀաւատամյԱստուած Հայրն ամենահակալ , յարարիչն երկնի և երկրի :

2 Եւ 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս յՈրդին միածին :

3 Որ յղացաւ 'ի Հոգւոյն սրբոյ և ծնաւ 'ի Մարիամայ կուօէն :

4 Զարչարեցաւ առ Պոնտիոսիւ Պիղատոսիւ , խաչեցաւ , մեռաւ և թաղեցաւ :

5 Եջ 'ի գժոխս , յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց :

6 Համբարձաւ յերկինսա , նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենահակալի :

7 Գալոց է 'ի գատել զկենդանիս և զմեռեալս :

8 Հաւատամ 'ի Հոգին սուրբ :

9 Ի սուրբ կաթուղիկէ Եկեղեցի , 'ի Հաղորդութիւն սրբոց :

10 Ի թողութիւն մեղաց :

11 Ի յարութիւն մարմնոց :

12 Եւ 'ի կեանսն յաւիտենականս : Ամէն :

Հ . Հաւատամ ինչըսել է :

Պ . Ըսել է՝ թէ կը գաւանիմ որ այս հանգանակիս մէջ ինչ որ կայ նէ՝ Աստուծմէ յայտնած ըլլալով , բոլորն ալ ստոյգ ու ճշմարիտ է :

Հ . Բաւական է այս ճշմարտութիւնները սրառվ միայն հաւատալ :

Պ . Բերնալ ալ պէտք է խոստովանիլ . և չուրանալու համար մարդ պէտք է կեանքն ալ տայ :

Հ . ՅԱԿԱՆ-ԱԾ ՀԱՅՐ ԲԻՆԵ ԸԱԵԼԵ :

Պ . Կը նշանակել թէ Աստուծոյ անձինքը
լրեք են , և առաջնոր Հայր Աստուած կ'ը-
սուի :

Հ . Ինչո՞ւ համար Աստուած Ամենաիալ
կ'ըսուի :

Պ . Վասն զի բան չկայ որ անկարելի կամ
դժուար ըլլայ Աստուծոյ . Աստուած կամե-
լովը ինչ որ ուզէ կրնայ ընել :

Հ . Ի՞նչը լաել է Արտեհեւ երինի և երիս :

Պ . Ըսել է՝ որ Աստուած իր ամենակա-
րողութեամբը ստեղծեր է երկինք , երկիր ,
ու ինչ որ կայ բոլոր տիեզերաց մէջ :

Հ . Աստուած երկինք ու երկիր ստեղ-
ծելու բոնադատութիւն մը ունէր :

Պ . Չէ . իրեն ազատ կանքով է ստեղ-
ծեր , և կրնար ուրիշ հազարաւոր աշխարհք-
ներ ալ ստեղծել ալ գեղեցիկ :

Հ . Աստուած երկինք ու երկիր ի՞նչը բա-
նէ ստեղծեց :

Պ . Ոչընչէ : Անոր համար Սազմոսը կ'ը-
սէ . Ասաց և եղեն , ինչն հրամայեաց և հաս-
պարեցան :

Հ . Աշխարհքս ի՞նքիրմէ կը պահպանուի :

Պ . Չէ . հապա պէտք է որ Աստուած
ամէն վայրկեան պահպանէ : Ասով կ'իմաց
ցուինաև Աստուծոյ գերագոյն տէրութիւ-
նը արարածոց վրայ :

Հ . Աշխարհքիս մէջը գիտուածով բան
մը չըլլար :

Պ . Չէ . Աստուած ամէն բան իր նա-
խախնամութեամբը կը կառավարէ :

Հ . Նախախնամութիւն ի՞նչըսելէ :

Պ . Ըսելէ որ՝ Աստուած իր անհուն իւմաստութեամբը ու բարութեամբը ամէն բան առաջուց գիտէ և առաջուց կը կարգաւորէ . ու աշխարհքիս մէջ ամէն բան կամ իր հրամանաւը և կամ իր թոյլ տալովը կ'ըլլայ :

Հ . Ուրեմն Բախտն ու Դիտուածն ի՞նչէ :

Պ . Բառեր են որ մարդիկ հնարեր են , ու կը գործածէն երբօր գործքի մը պատճառը չկարենան իմանալ :

Ե .

Հանգանակին առաջին , երկրորդ ու երրորդ մասը .

Հ . Աստուած աչքով տեսած բաներնիս միայն ստեղծեր է :

Պ . Չէ . Հապա ամէն երեւելի և աներեւոյթ բաները ինքն է ստեղծեր :

Հ . Աստուածոյ ստեղծած աներեւոյթ բաները որո՞նք են :

Պ . Մեր հոգին և Հրեշտակները :

Հ . Մեր հոգին ի՞նչ է :

Պ . Աննիւթական ու անմահ գոյացութիւն մըն է , որ Աստուած ստեղծեր ու մեր մարմնոյն հետ միացուցեր է :

Հ . Հրեշտակն ի՞նչ է :

Պ . Աննիւթական ու անմահ գոյացութիւն մըն է , որուն բնական կատարելու

թիւնները մարդէն վեր են , ու մարմին
չունի :

Հ . Աստուած հրեշտակները երբ և ի՞նչ
վախճանի համար ստեղծեր է :

Պ . Մարդս ստեղծելէն առաջ հրեշտակ-
ներն է ստեղծեր , որպէս զիյաւիտեան զին-
քը երկինքը փառաւորեն :

Հ . Ամէն հրեշտակները այդ վախճանին
հասա՞ն :

Պ . Չէ : Ոմանք Աստուծոյ հսկատակ ու
հնազանդ մնացին , ու կը վայելէն յաւիտե-
նական երանութիւնը . ոմանք ալ հսկարատ-
նալով ապստամբեցան , ու գժոիք դատա-
պարառուեցան . որ Ստանայ կըսուին :

Հ . Բարի հրեշտակները մարդկանց հետ
հաղորդակցութիւնն մը ունին :

Պ . Հրամեր էք . Աստուած շատ անգամ՝
անսոնց ձեռքավը իր կամքը մարդկանց յայտ-
ներ է . ու ամէն մէկերնուս մէյմէկ հրեշտակ
ալ գրեր է , որ մեզի ոլահասկան ու պաշտ-
պան ըլլան :

Հ . Սատանանները մարդկանց հետ ի՞նչ
վերաբերութիւն ունին :

Պ . Թէ որ Աստուած թոյլավու ըլլայ՝
կը ջանան որ մարդկանց ֆիաս մը հասցընեն
ու մեղք ձգեն , որպէս զի մարդիկն ալ
իրենց տանջանացը ընկեր ընեն :

Հ . Սատանանները ինչու կը ջանան որ
մարդիկը կորսնցընեն :

Պ . Կախանձի համար , վասն զի Աս-
տուած մարդիկը ստեղծեց , որ երկինքը ա-
պլստամբ հրեշտակներուն տեղը բռնեն :

Հ . Ի մ բ ի ս պ ո ս Յ ի ս ս ս , Ո ր դ ի ն մ ա ծ ի ն ը ս ե -
լ ո ւ լ ի ն չ կ ը հ ա ս կ լ ի ն ա ս :

Պ . Ա յ ս կ ը հ ա ս կ լ ի ն ա մ , ո ր ա մ ե ն ա ս ո ւ ր բ
Ե ր բ ո ր դ ո ւ թ ե ա ն ե ր կ ը ր դ ա ն ձ ն է , ու 'ի
յ ա ւ խ ո տ ե ն ի ց ծ ն ե ր է 'ի հ օ ր է , Ա ս տ ո ւ ա ծ
յ Ա ս տ ո ւ ծ ո յ , ու Հ օ ր Ա ս տ ո ւ ծ ո յ ն մ ա ն Ճ շ մ ա -
ր ի ա Ա ս տ ո ւ ա ծ :

Հ . Ի ն չ ո ւ հ ա մ ա ր Տ է ք է կ 'ը ս ե ս :

Պ . Ա վ ա ն զ ի ա մ ե ն ք ն ի ս ի ր ե ն հ ա լ ա տ ա կ -
ն ե ր ն ե ն ք . ի ր ի ւ Ա ս տ ո ւ ա ծ մ ե ր ա ր ա ր ի չ ն է ,
ու ի ր ի ւ Ա ս տ ո ւ ա ծ մ ա ր դ ա ց ե ա լ մ ե ր գ լ ո ւ ի ն
է , մ ե ր վ ա ր դ ա պ ե ա ն է ; մ ե ր թ ա գ ա ւ ո ր ն է
ու մ ե ր փ ր կ ի չ ն է :

Հ . Կ ՞ ն չ ը ս ե լ է Ո ր յ ա լ ա յ ա - 'ի հ ո գ ա յ ն ս ը բ -
բ ո յ :

Պ . Ը ս ե լ է ո ր Հ ո գ ւ ո յ ն ս ր բ ո յ ա ս տ ո ւ ա -
ծ ա յ ի ն ն ե ր դ ո ր ծ ո ւ թ ե ա մ բ ը Ո ր դ ի ն Ա ս տ ո ւ -
ծ ո յ յ ա ր դ ա ն դ ի ս ր բ ո յ կ ո ւ ս ի ն Մ ա ր ի ա մ ո ւ
մ ա ր դ ե ղ ա ւ :

Հ . Ո ր դ ւ ո յ ն Ա ս տ ո ւ ծ ո յ մ ա ր դ ե ղ ո ւ թ ե ա ն
տ օ ն ը ո ր կ ը կ ա տ ա ր ե ն ք :

Պ . Մ ա ր ա ի 25 ի ն Վ ւ ե տ մ ա ն օ ր ը :

Հ . Կ ՞ ն չ ը ս ե լ է Ա ւ ե տ մ ա ն :

Պ . Ը ս ե լ է ո ր Ա ս տ ո ւ ա ծ Գ ա բ ր ի է լ հ ր ե շ
ա տ ա կ ը ս ո ւ ր բ կ ո ւ ս ի ն խ ա ւ ր ե ց , ո ր ա յ ս մ ե ծ
խ ո ր հ ո ւ ր դ ը ի ր ե ն ա ւ ե տ ա ւ ո ր է :

Զ.

Հանգանակին երրորդ ու չորրորդ մասը .

Հ . Ք՞նչ ըսել է Ծնա - 'ի Մարիամայ կու -
սկա :

Պ . Ըսել է որ սուրբ Կոյսն Մարիամ Աս -
տուածածին ինը ամիս յղութենէ եաւ ա -
ռանց ցաւոց ու կոյս մնալով ծնաւ զմեր
փրկիչն Աստուած :

Հ . Յիսուս Երբ ծնաւ :
Պ . Աւետման օրէն ինն ամիս Ետքը՝ պե -
շերուան ժամանակ :

Հ . Յիսուս ուր ծնաւ :
Պ . Բեթղեհէմ, ինչպէս որ մարդարէն
ըսեր էր, մէկ մարի մը մէջ :
Հ . Յիսուս ինչու այնպէս աղքատ ծնա -
նիլ ուղեց :

Պ . Որպէս զի իր ծնկնդեան ատենեն
մեղի սորվեցընէ թէ աշխարհքիս մեծու -
թենէն ու զուարձութիւններէն հեռա -
նալու է :

Հ . Հայրն Աստուած Որդւոյն Աստո -
ծոյ խոնարհութիւնը ի՞նչ կերպով փառա -
ւորեց :

Պ . Անոր ծնունդը հրեշտակներու ձեռ -
քով հովիւններու աւետաւորեց, ու նոր
աստղով մը արևելեան մոգերուն, որ թէ
հովիւնները և թէ մոգերը եկան նորածին
Փրկչին երկրպագութիւն ըրին :

1000 - 000

Հ . Սուրբ Կոյս Մարիամ Մայր Աստուծոց կը կըսուի :

Պ . Հրամեր էք . վասն զի Յիսուսի մայրն է , Յիսուս ալ ճշմարիտ Աստուած է : Եւ Հոգոյն սրբոյ ներդործութեամբ ծնանելով զՅիսուս թէ ծնընդենէ առաջ և թէ ծնընդենէ ետքը միշտ կոյա մնաց :

Հ . Հաղա սուրբ Յովանէփ ո՞վ էր :

Պ . Արդար և սուրբ մարդ մը , որ Աստուած ընարեր էր , որ սուրբ Աստուածածածնայ փեսայ ըլլայ , ու Յիսուսի հայրագիր : Ու ինքը ու սուրբ Աստուածածին Դաւթի տնէն էին , ու Յուդայի ցեղէն . ինչպէս որ մարդարէք դուշակեր էին թէ այն ցեղէն պիտի ծնանի Մեսիայն :

Հ . Ի՞նչ ըսել է Զարւարէցաւ առ Պահպէտ Պիտագորէն :

Պ . Ըսել է թէ Յիսուս իր վարքովը ու քարողութեամբը ու անհուն հրաշքներով փրկութեան ճամբան սորվեցընելէն ետեւ Պոնտիոս Պիղատոսին Հրէաստանի դատաւորութեան ատենը ամէն տեսակ նախատինք ու չարչարանք քաշեց :

Հ . Ի՞նչ ըսել է Խաչեցաւ , մեռաւ :

Պ . Ըսել է որ Յիսուսնախ ծեծեցին ու փշով պսակեցին , ու ետքը ձեւուըները ոտուըները դամերով ծակեցին ու երկու աւազակի մէջ խաչ հանեցին , ու խաչին վրայ մեռաւ :

Հ . Խաչն ի՞նչ էր :

Պ . Զարագործ ու ցած մարդիկներու տանջանարան , բայց Յիսուսի արեամբը ե-

ղաւ մեզի գործի փրկութեան և Երկրսպա-
դութեան :

Հ . Պիղատոս ինչո՞ւ համար զՅիսուս դա-
տապարտեց որ խաչ հանեն :

Պ . Պիղատոս չդատապարտեց զՅիսուս ,
հապա մանաւանդ Հրեից առջեր վկայեց
թէ արդար է , բայց անիրաւութեամբ Հրեից
կամքը կատարեց , որ Յիսուսը կ'ատէին ու
վրան կը նախանձէին :

Հ . Յիսուսի մահուան ատենը ի՞նչ հան-
դիպեցաւ :

Պ . Իրեք ժամ արել խաւարեցաւ , եր-
կիր գողաց ու ուրիշ շատ հրաշքներ եղան :
Եւ այն պատճառաւ հօն դանուողներէն ո-
մանք զղացան ու դարձի եկան :

Հ . Ո՞ր օր կը կատարենք Քրիստոսի մա-
հուան յիշատակը :

Պ . Աւագ ուրբաթ օրը :

Հ . Աստուած Հրեից ազգին այս աշ-
խարհքս ալ պատիժ տուան դՅիսուս սպան-
նելնուն համար :

Պ . Հրամեր էք . ինչպէս որ Քրիստոս
մարդարէացեր էր , Երուապէմ ու տաճա-
րը կործանեցան . ու իրենք իրենց կուրու-
թեամբը ամէն ազգաց մէջ ցրուեցան , որ
ուրիշներուն խրատ ըլլան :

Է .

Հանգստեակիև ջրրորդ և հինգերորդ
մասը .

Հ . Յիսուս բռնադատուած էր չարչա-
րանքքաշելու ու մեռնելու :

Պ . Չէ . հասկա իր ուզելով չարչարուե-
ցաւ ու մեռաւ :

Հ . Յիսուս ինչո՞ւ համար չարչարիլ ու
մեռնիլ ուզեց :

Պ . Որպէս զի բոլորովին մեր մեղքերը
քաւէ , ու արքայութեան դուռը բանայ ,
ու մեր փրկութեանը համար հարկաւոր ե-
ղած շնորհքներուն մեղարժանի ընէ :

Հ . Ուրեմն մենք մեր մեղքերը չեմնք
կրնար քաւել :

Պ . Չէ . վասն զի մեղքը Աստուծոյ ան-
հուն մեծվայելցութեան դէմանորդ ստեղ-
ծուածոյ մը յանցանք ըլլալով՝ պէտք էր որ
քաւութիւնն ալ անհուն ըլլար :

Հ . Քրիստոս Աստուած ըլլալով ինչալէս
մեղի համար չարչարուեցաւ ու մեր մեղքե-
րը քաւեց :

Պ . Իբրև մարդ չարչարուեցաւ , և իբրև
Աստուած իրեն չարչարանքները անհուն
դին ունեցան :

Հ . Հարկաւոր էր որ Յիսուս մեր մեղքե-
րուն համար այնչափ չարչարուի :

Պ . Չէ , վասն զի իրեն էն պղտիկ չար-

չարանքն ալ անհուն գին ուներ , և բաւական էր հազարաւոր աշխարհքներ փրկելու : Բայց այնչափ չարչարուեցաւ որպէս զի մեզի լաւ մը հասկըցնե մեղքին դէշութիւնը ու իրեն սիրոյն մեծութիւնը :

Հ . Քրիստոս որուն համար մեռաւ :

Պ . Ընդհանրապէս ամէն մարդիկներու համար . բայց ամէնքը իրեն մահուան ու մեզի ըրած շնորհացը պառւզը չենքաղեր , անոր համար ամէն մարդիկ փրկութեան չեն հասնիր :

Հ . Քրիստոսի քաւութիւնը անհուն ըլլալով մեզի ալ ի՞նչ կը մնայ ընելիք :

Պ . Պէտք է որ սուրբ խորհուրդները ընդունելով ու բարի դորձքերով իրեն արդիւնքը մեզի մերձեցընենք :

Հ . Ի՞նչ կը նշանակէ թաղեցաւ , էջ՝ ի տժախա :

Պ . Կը նշանակէ թէ Յիսուս մեռնելէն ետեւ մարմինը գերեզման դրին . ու իրեն սուրբ հոգին Լիմբոս ինջաւ՝ այն աեզի հագիները միսիթարելու համար :

Հ . Լիմբոսն ի՞նչ է :

Պ . Այն տեղը , ուր որ արդարոց հօգիները Քրիստոսի դախառեանը կը սպասէին :

Հ . Յիսուս մեռնելէն ետեւ հոգին որ մարմինէն բաժնուեցաւ նէ՝ աստուածութիւնն ալ մարմինէն բաժնուեցաւ :

Պ . Չէ . վասն զի Յիսուսի մարմինն ու հոգին միշտ Որդւոյն Աստուածոյ անձին հետ միացած էին :

Հ . Ի՞նչըսել է Յերերդ առաջ Յարեաւ 'ի մեռնելոց :

Պ . Ըսել է որ իրեք օր մեռնելէն ետեւ
Յիսուսի հոգին մարմնոյն հետ միացաւ , և
ողջ ու փառաւոր՝ գերեզմանէն դուրս ե-
լաւ , ինչպէս որ առաջուց ըսեր էր :

Հ . Հրէայք ի՞նչ ճամբայ բռներ էին՝ որ
Յիսուսի յարութիւնը չյայտնուի :

Պ . Պիղատոսէն հրաման առեր էին՝ որ
գերեզմանին վրայի քարը կնկեն , ու զի-
նուորներ պահպանութիւն ընեն : Բայց
Աստուած անանկ ըրաւ , որ այդ ճամբով
յարութեան ճշմարտութեանը վրայ տա-
րակոյս չմնաց :

Հ . Յիսուս ի՞նչպէս յարութիւն առաւ :

Պ . Իրեն զօրութեամբը :

Հ . Յարութիւն առնելէն ետեւ նորէն
մեռաւ . ինչպէս ուրիշ յարութիւն առ-
նողներն որ մեռան :

Պ . Չէ . Յիսուս յարութիւն առնելէն
ետեւ անչարչարելի և անմահ էր , և յաղ-
թող մահու և դժոխոց :

Հ . Յիսուսի յարութիւն առած օրը
ի՞նչ կըսուի :

Պ . Զատիկ , որ ամէն տօներու դլսա-
ւորն է :

Բ.

Հանգանակիև վեցերորդ , եօրեներորդ ու
ոչրերորդ մասը .

Հ . Յիսուս յարութիւն առնելէն ետեւ
որչափ ատեն աշխարհքիս վրայ կեցաւ :

Պ . Քառասուն օր : Եւ այն քառասուն
օրուանը մէջ շատ անդամ իր աշտկերանե-
րուն երեցաւ , որպէս զի իրեն յարութեա-
նը վրայ ամենեւին տարակոյս չունենան , ու
անոնց սորվեցընէ թէ ի՞նչ պիտի ընեն , ու
ի՞նչպէս ամէն աշխարհք պիտի քարոզեն :

Հ . Քառասուն օրէն ետեւ ի՞նչ ըրաւ
Յիսուս :

Պ . Առաքեալները , ու Աշակերաներէն
շատը Ձիթենեաց լեռը տարաւ , ու հոնկէց
անոնց աճքին առջեւը երկինք համբարձաւ .
անոր համար այն օրը Համբարձումն կ'ըսուի :

Հ . Յիսուս ի՞նչպէս երկինք համբար-
ձաւ :

Պ . Նախ Առաքեալները ու Աշակերա-
ները օրհնեց , ու հրաման տուաւ՝ որ եր-
թան բոլոր աշխարհք աւետարանը քարո-
զեն , ու ետքը իր զօրութեամբը երկինք
վերացաւ :

Հ . Աստուած անմարմին ըլլալով՝ ի՞նչ
պէս կրնայ ըսուիլ թէ Քրիստոս նստաւ ընդ
աջմէ Աստուածոյ Հօր ամենակալի :

Պ . Ասանկ կ'ըսուի , որպէս զի հասկընանք

թէ Փրիստոս ամէն արարածներէ եւել
գերագոյն փառաց աստիճան հաւառ , և
հօր Աստուծոյ հաւասար կարողութիւն
ունի :

Հ . Ի՞նչըսելէ դաւոց է 'ի դապել զի՞նդա-
նիս և պիտեալ :

Պ . Ըսելէ որ Յիսուս 'ի կատարածի աշ-
խարհքիս յայանապէս երկնքէն պիտի դայ
ու դատէ որչափ որ աշխարհքիս վրայ մար-
դիկ եղեր են թէ բարիք և թէ չարերը :

Հ . Յիսուս աշխարհքիս ետքի օրը ի՞նչ-
պէս պիտի դայ :

Պ . Մեծ փառօք ու բազմութեամբ հրեշ-
տակաց , որ արդարները մեզաւորներէն պի-
տի զատեն :

Հ . Յիսուս համբարձում չառած աշա-
կերտներուն ի՞նչ խոսամունք եր ըրեր :

Պ . Խոստացեր էր որ Հոգին սուրբ խաւ-
րէ վրանին :

Հ . Հոգին սուրբ ի՞նչ է :

Պ . Ամենասուրբ Երրորդութեան եր-
րորդ անձը , երկու անձանց ամէն կերպով
հաւասար , մի և նոյն բնութեամբ :

Հ . Հոգին սուրբ ուսկից կը բիսէ :

Պ . Ի հօրէ և յՈրդւոյ . որովհետև Հօր
առ Որդի , և Որդւոյ առ Հայր գոյացական
սէրն է :

Հ . Հոգին սուրբ ո՞ր օր առաքելոց վրայ
եջաւ :

Պ . Հոգեգալստեան օրը , որ Պետր-
կոստէ կըսուի :

Հ . Ի՞նչ ձևով առաքելոց վրայ իջաւ :

Պ . Հրեղէն լեզուի ձեռվ ամէն մէկուն
դլսուն վրայ եկաւ հանգչեցաւ :

Հ . Այն հրեղէն լեզուները ի՞նչ կը նշա-
նակեն :

Պ . Կը նշանակեն շնորհաց լոյսը և սիրոյ
բոցը, որով որ լցան առաքեալք, ու լեզուա-
խօսութեան շնորհքն որ լնդունեցան :

Հ . Հոգին սուրբ միայն այն օրը՝ ու ա-
ռաքելոց վրայ միայն իջաւ :

Պ . Աներևութաբար ամէն հաւատացե-
լոց վրայ կ'իջնայ, թէ որ լաւ պատրաս-
տուած ըլլան :

Հ . Հաւատացելոց սիրտը Հոգին սուրբ
ի՞նչ աղդեցութիւն կ'ընէ :

Պ . Իրեն շնորհքներով ու պարգևնե-
րով կը լեցընէ, ու անոր համար Սրբարար
Հոգի կ'ըսուի :

Հ . Հայր և Որդի ալ զմեղ սրբացընելու
շնորհքներ չեն կրնար տալ :

Պ . Հրամեր էք . վասն զի Հայր և Որդի
և սուրբ Հոգի մի Աստուած է . բայց ի՞նչ
պէս արարչութիւնը Հօր Աստուածոյ կ'ըն-
ծայուի, ու փրկութիւնը Որդին Աստուած
մեզի համար մարդ ըլլալով կատարեց, այս
պէս շնորհաց աղդեցութիւնն ալ Հոգւոյն
սրբոյ կ'ընծայուի :

Թ.

Հանգանակին իններորդ մասը .

Հ . Եկեղեցին ի՞նչ է :

Պ . Ժողովքի բարիստոնեայ հաւատացելոց , որ օրինաւոր առաջնորդաց կառավարութեամբ նոյն հաւատքը ու նոյն օրէնքը կը դաւանին , ու գլուխնին մէկ է , որ է Հողմայ Սրբազն Քահանայապեաը :

Հ . Ուրեմն Եկեղեցին միայն արդարոց ժողովք չէ :

Պ . Չէ . Հապա արդարոց ու մեղաւորաց մէկակեղ . չէ նէ ի՞նչպէս կրնար երեւլի ըլլալ . որովհետեւ շատ անդամ չենք գիտեր թէ ճշմարիտ արդարք որո՞նք են :

Հ . Հարկաւոր է որ Եկեղեցին երեւլի ըլլայ :

Պ . Հրամեր էք . որպէս զի ամէն մարդիկ ճանչնան , ու իրեն հրտմանացը հնազանդին :

Հ . Եկեղեցին ի՞նչ նշաններ ունի որ ամէն մարդիկ կարենան ճանչնալ :

Պ . Չորս գլխաւոր նշաններ . Մի , Սուրբ , Կայուղինե կամ Ընդհանուր և Առաքելական :

Հ . Այս նշանները ո՞ր Եկեղեցւոյ վայ կերեան :

Պ . Միայն Հռովմէական Եկեղեցւոյն վրայ :

Հ . Հռովմէական Եկեղեցին ո՞րն է :

Պ . Այն որ բոլոր աշխարհք տարածուած է, ու երեկի գլուխ կը դաւանի սրբոյն Պետրոսի յաջորդը :

Հ . Ինչու Հռովմէական կ'ըսուի :

Պ . Վասն զի սուրբ Պետրոս, որ աշխարհքիս վրայ Քրիստոսի փոխանորդն էր՝ իր աթոռը Հռովմ հաստատեց, ու իր իշխանութիւնը իր յաջորդներուն անցուց :

Հ . Ի՞նչպէս կրնայ մարդ Ճանչնալ թէ Հռովմէական Եկեղեցին է Քրիստոսի Ճըշմարիտ Եկեղեցին :

Պ . Ըստ դիւրաւ . վասն զի թէ որ մարդ անկեղծ սրաիւ քննելու ըլլայ, կը տեսնայ որ աս չորս նշաններն ալ ունի :

Հ . Հռովմէական Եկեղեցին ի՞նչպէս դէ :

Պ . Վասն զի ամէն տեղ մէկ հաւատք կը դաւանի, նոյն Խորհուրդները կը գործածէն մէկ երեկի գլուխ կը Ճանչնայ, որ է Սըրբազն Պատրլը :

Հ . Ի՞նչպէս Սառը է :

Պ . Վասն զի թէ հաւատքի վրայ եղերէ, թէ բարի վարուց վրայ ինչ որ կը սորմեցնէ՝ սուրբ է, ու թէ որ մէկը Եկեղեցւոյ պատուէրները լաւ ոլահէ, սուրբ կ'ըլլայ :

Հ . Ի՞նչպէս կաթողիկէն կոմը Շնդհանուր է :

Պ . Վասն զի բոլոր աշխարհք տարածուած է, ու առաքելոց ժամանակէն սկըսած՝ մինչև աշխարհքիս եաքը սիստի դիմանայ :

Հ . Ի՞նչպէս Առաքելուն է :

Պ . Վասն զի առաքեալք հիմներ են, ու

միշտ իրենց յաջորդներն են կառավարեր :
Հ . Հռովմէական Եկեղեցին Ճշմարիտ Ե-
կեղեցի ըլլալով սկզբք է իրեն հնագանդիլ :
Պ . Հրամեր էք . վասն զի արտաքոյ Եկե-
ղեցւոյ փրկութիւն ոչ գոյ :

Հ . Որո՞նք Եկեղեցիէն գուրս են :
Պ . Կւտապաշտները, անհաւատները, հե-
րետիկոսները, հերձուածովները ու բա-
նագրածները :

Փ.

**Դարձեալ Հանգանակին իններորդ
մասը .**

Հ . Հռովմէական Եկեղեցիէն զատ ուրիշ
Ճշմարիտ Եկեղեցի չկրնա՞ր ըլլալ :

Պ . Ձէ . վասն զի մի միայն կ'ըլլայ Ճշմա-
րիտ Եկեղեցին ու Ճշմարիտ հաւատքը :

Հ . Ինչո՞ւ համար մէկ սիտի ըլլայ Ճշմա-
րիտ Եկեղեցին ու Ճշմարիտ հաւատքը :

Պ . Վասն զի չկրնար ըլլալ որ Յիսուս ի-
բրե Ճշմարիտ հաւատք սորվեցընէ Եկեղե-
ցւոյ մը այն բանը, որն որ մէկալ Եկեղեցին
իբրե մոլորութիւն կը դատապարտէ . չէ
նէ իրեն դէմիօսած կ'ըլլար : Ասոր համար
է որ ըստ Քրիստոս Մի հօդ և մէ հավել :

Հ . Ի՞նչպէս կը ցուցընես թէ Հռովմէա-
կան Եկեղեցիէն բաժնուած աղանդները
Ճշմարիտ Եկեղեցւոյ նշանները չունին, ու
նախ միութեան նշաննը չունին :

Պ . Վասն զի Քրիստոսէ հաստատուած երեւելի գլուխը ընդունելով, որ է սուրբ Պետրոսին յաջորդը, միանալու կէտ մը չունին, և իրենց վարդապետութիւնները այլ և այլ կ'ըլլայ :

Հ . Ի՞նչպէս սրբութիւն չունին :

Պ . Վասն զի իրենք իրենց խօսքովը այս նշանը չեն ընդունիր, երբոր կ'ըսեն՝ թէ Եկեղեցին կրնայ սխալիլ. և մէջերնէն սուրբ մը եղած չէ. և ոչ ճշմարիտ հրաշք մը եղած է, ինչպէս որ Աստուած միշտ հռովմէական Եկեղեցւոյն մէջ այս բաններս յայտնի երեցուցեր է :

Հ . Բայց հռովմէական Եկեղեցին ալ ի՞նչպէս սուրբ կրնայ ըլլալ, որ մէջը այնչափ մեղաւորներ կան :

Պ . Վասն զի ամենայն մոլութիւնները կը դատապարտէ. խակ մէկալ Եկեղեցիներուն սկզբունքները սովորաբար ինքիրենը դէսլ 'ի անկարգութիւն կ'առաջնորդեն :

Հ . Ի՞նչպէս մէկալ աղանդները ընդհանրական չեն, որ ամէն տեղ հերետիկոս կը դանուի :

Պ . Վասն զի մէկալ ժողովները, հռովմէական Եկեղեցւոյն պէս՝ ամէն տեղնոյն չեն, ու ատեն ատեն կը փոխուին :

Հ . Ի՞նչպէս մէկալ ժողովքները Առքելական չեն :

Պ . Վասն զի իրենց հիմնադիրները կը ձանցուին որ առաքեալները չեն, ու իրենցնորահնար վարդապետութիւնը առաքելոցմէ շատ եաքը եղած է :

Հ . Ուսուցանող Եկեղեցին որն է :

Պ . Եպիսկոպոսներու ժողովքը իրենց դմայն՝ Հոսվայ քահանայապետին հետ միատեղ :

Հ . Ուսուցանող Եկեղեցին կրնայ խաբուիլ :

Պ . Ոչ երբէք . հաւատքի և բարի վարուց կանոններու մէջ միշտ անսխալ է՝ թէ մէկ տեղ ժողված ըլլայ և թէ ցրուած :

Հ . Ինչո՞ւ անսխալ պիտի ըլլայ Եկեղեցին :

Պ . Վասն զի Քրիստոս խոստացաւ՝ որ Երանեած Եկեղեցւոյ պիտի չյաղթեն , ու ինքը Եկեղեցւոյ հետ պիտի ըլլայ մինչև ՚ի հագարած աշխարհի , ու Հոգին սուրբ ամէն ճշմարտութիւն Եկեղեցւոյն պիտի սորովեցընէ :

Հ . Պէտք է որ ամէն հաւատացեալք Եկեղեցւոյ վճռոցը հնազանդին :

Պ . Հրամեր էք . վասն զի Յիսուս ըստ առաքելոց . Որ Յեղանձն ինչ լէ , և որ ԿՅԵՂ անարգէ՝ պիտի անարգէ : Եւ որ ու լէ Եկեղեցւոյն՝ Եղիշի իբրև պէտական և պատրիարք :

Հ . Բաւական չէ որ Սուրբ Գիրքը մեզի հաւատքի կանոն ըլլայ :

Պ . Չէ . վասն զի մէյ մը որ շատերը ոչ կրնան կարդալ և ոչ կրնան հասկընալ . մէկ մ'ալ՝ որ Ուսուցանող Եկեղեցին միայն Սուրբ Գիրքը մեզի կը ցուցընէ ու անոր իմաստը կրնայ բացատրել :

Հ . Ինչո՞ւ ամէն հաւատացեալք Սուրբ Գրքին իմաստները բացատրելու իշխանութիւն չունին :

Պ . Վասն զի կրնան սխալիլ , ու մէկը մէկ
կերպով կը բացատրէ , ու մէկալը ուրիշ կեր-
պով . ինչպէս որ հերետիկոսաց մէջ կը հան-
դիալի . անանիով հաւատքը մէկ չկրնար ըլ-
լալ :

Հ . Եկեղեցին հաւատքի նոր վճիռ մ'որ
ընելու ըլլայ , կամ հերետիկոսութիւն մը
դատապարտելու ըլլայ , հաւատքին նոր յա-
ւելուած մը ըրած չըլլար :

Պ . Չէ . հապա միայն ինչ որ միշտ հա-
ւատացեր է կը բացատրէ կամ կը հաւատա-
տէ , և կը դատապարտէ զանոնք որ նոր բան
մը կ'ուզեն խօթել :

ԺԱ.

**Հանգանակին իններորդ , տասներորդ ,
մետասաներորդ ու երկուտասաներորդ
մասը .**

Հ . Հանգանակին սրբոցն ի՞նչ է :

Պ . Ամենայն հաւատացելոց Եկեղեցւոյ
մէջ եղած պատարագաց , աղօթից ու բարե-
դործութիւններուն մասնակից ըլլալն է :

Հ . Հաղորդութիւն սրբոցը աշխարհքիս
վրայ եղած հաւատացելոց վրայ միայն կը
հասկըցուի :

Պ . Չէ . հապա արքայութեան մէջ եղած
սրբոց վրայ ալ և Քաւարանի հոգւոց վրայ
ալ . որովհետեւ բոլորը մէկէն Քրիստոսի Ե-
կեղեցի կ'ըսուին . աշխարհքիս վրայ Զինուո-

րեալ կ'ըստուի , Երկինքը Յաղթական , ու
քաւարանի մէջ Վշտակիր :

Հ . Երկինքի սուրբերուն հետ ի՞նչ հա-
զորդութիւն կրնանք ունենալ :

Պ . Այս որ մենք իրենց աղօթք կ'ընենք ,
իրենք ալ մեղի համար բարեխօս կ'ըլլան :

Հ . Քաւարանի հոգւոց հետ ի՞նչ հա-
զորդութիւն կրնանք ունենալ :

Պ . Այն՝ որ մեր ըրած աղօթքովը , բա-
րեգործութիւններովը ու պատարագնե-
րովը իրենց օգնութիւն կը հասնինք :

Հ . Ստորյու է թէ քաւարան կայ , ու
մենք ալ այն տեղի հոգւոց օգնութիւն կը բ-
նանք ընել :

Պ . Հրամեր էք , ու հաւատքի մասն է ,
ու Եկեղեցին միշտ մեռելոց համար աղօթք
ըրած է :

Հ . Քաւարանն ի՞նչ է :

Պ . Տեղ մը , ուր կ'երթան անոնք , որ թէ
պէտ Աստուծոյ շնորհաց մէջը կը մեռնին ,
բայց իրենց մեղաց համեմատ պատիժը դեռ
քաշած ըրլալով՝ հոն կը քաշեն ու կը մա-
քրուին :

Հ . Ի՞նչ ըսել է Առանութիւն մեղաց :

Պ . Ըսել է որ Եկեղեցին Քրիստոսէ իշ-
խանութիւն առած է որ ամէն մեղք կրնայ
թողուլ :

Հ . Եկեղեցւոյ մէջ թողութիւն մեղաց
ի՞նչպէս կ'ըլլայ :

Պ . Սուրբ խորհուրդներովք՝ որ Քրիս-
տոսի արդիւնքը մեղի կը մերձեցընեն :

Հ . Յարութիւն ճարհուց ի՞նչ ըսել է :

Պ . Ըսել է որ աշխարհքիա Ետքը ամէն
մեռած մարդիկներու հոգին մարմնոյն հետ
պիտի միանայ , որ Քրիստոսի առջև դա-
տաստանի Ելլան :

Հ . Ինչ մարմին որ հիմա ունինք , անովլ
յարութիւն պիտի առնենք :

Պ . Հրամեր էք :

Հ . Յարութիւն մարմնոց ինչո՞ւ պիտի
ըլլայ :

Պ . Որպէս զի մարմինն որ արդարոց ա-
ռաքինութեանցը ու մեղաւորաց ախաերուն
հաղորդ Եղեր է , անոնց վարձուցն ալ կամ
սկատժոցը մասնակից ըլլայ :

Հ . Ուրեմն ամէնքը նոր կերպով յարու-
թիւն պիտի չառնե՞ն :

Պ . Չէ . արդարք նոյն մարմնով պիտի
յարութիւն առնեն , բայց անկրական ու
փառաւոր . մեղաւորք ալ նոյն մարմնով ,
բայց պժդալի ու յաւիտեան Երելու դատա-
պարտուած :

Հ . Ի՞նչպէս կրնան կենդանանալ անոնք ,
որ դազանները կերեր են , կամ մոխիլ են
դարձեր :

Պ . Աստուծոյ ամենակարողութեանը ա-
ւելի դժուար չէ մոխիրներէ մեր մարմինը
շինել , քան թէ ոչընչէ բոլոր աշխարհք ըս-
տեղծել :

Հ . Յարութիւն մարմնոց ու դատաստա-
նին օրը Երբ պիտի ըլլայ :

Պ . Մարդ չկայ որ այդ բանը գիտնայ .
բայց Տէրն մեր ըստաւ , որ Երբոր աշխարհ-
քիս վրայ հաւատքը տկարանայ , ու անի-

բաւութիւնը շատնայ , այն առեմը՝ մարդ-
կանց չկարծած ժամանակը՝ պիտի գայ :

Հ . Ի՞նչ կը նշանակէ յա-իսկնատիւն կեանք :

Պ . Կը նշանակէ թէ անօնք որ Աստուծոյ
շնորհացը մէջ կը մեռնին՝ յաւիտեան երա-
նելի կեանք մը պիտի վայելէն :

Հ . Մեղաւորք ալ յաւիտեան կենդա-
նի պիտի չմնա՞ն :

Պ . Մնան պիտի . բայց կեանքերնին յա-
ւիտեան տանջանօք պիտի ըլլայ . անոր հա-
մար մտնաւանդ յաւիտենական մահ կ'ը-
սուի :

ԺԲ .

Յոյս , Յուսոյ դեմ մեղքերը , Աղօրք .

Հ . Յոյմն ի՞նչ է :

Պ . Աստուծոյ պարգևն է , որով վասա-
հութեամբ կը յուսանք՝ թէ Աստուծ մե-
զի պիտի պարգևն յաւիտենական կեանք ,
ու յաւիտենական կենաց արժանի ըլլալու
միջոցները :

Հ . Մեր յօյսը ի՞նչ բանի վրայ հաստա-
տուած պիտի ըլլայ :

Պ . Աստուծոյ բարութեան , ամենակա-
րողութեան , ու անստուտ խոստմանցը վրայ ,
ու Յիսուսի արգեանցը վրայ :

Հ . Ինչու համար կ'ըսես թէ յաւիտենա-
կան կեանքը Աստուծմէ պիտի յուսանք ,
բայց արժանի ալ պիտի ըլլանք :

Պ . Վասն զի յաւիտենական կեանքը վարձք մըն է , որուն արժանի կ'ըլլանք Յի սուսի արդիւնքը մեզի մերձեցընելով այն մի ջոցներով , որ ինքը հասաւատեր է :

Հ . Որո՞նք են այս միջոցները :

Պ . Ազօթք , խորհուրդք Եկեղեցւոյ , և բարեգործութիւնք :

Հ . Յուսոյ գէմ մեղքերը որո՞նք են :

Պ . Յուսահատութիւնն և յանդրդնութիւնն :

Հ . Յուսահատութիւնն ի՞նչ է :

Պ . Մեղք մըն է , որով որ մարդ Աստուծոյ բարութեանը վրայէն վստահութիւնը կը կորաընցընէ և կը կարծէ որ իր մեղաց թողութիւն պիտի չգտնայ , ու չկարենայ պիտի յաղթել փրկութեան համնելու գըժուարութիւններուն :

Հ . Յանդրդնութիւնն ի՞նչ է :

Պ . Մեղք մըն է , որով մարդ միտքը կը դնէ թէ առանց բարեգործութեան՝ փըրկութեան կընայ համնիլ , և օրէ օր կը ձգէ մեղքէ ետ կենալը :

Հ . Աստուծոյ գատաստանին վախը յուսոյ գէմ չէ :

Պ . Չէ . մանաւանդ թէ յուսոյ պէս առաքինութիւն մըն է . Աստուծոյ վախը հարկաւոր է մեղքէ զգուշանալու համար . խակ թէ որ թշուառութեամբ մեղք գործենք , հարկաւոր է յոյաք՝ թողութիւն գտնալու համար :

Հ . Մեղքի պէտք եղած շնորհները ընդունելու համար աւելի աղդու միջոցը ո՞րն է :

Պ . Աղօթքն է :

Հ . Աղօթքն ի՞նչ է :

Պ . Միաբը առ Աստուած վերցընել, մեզի պէտք եղած բաները խնդրելու համար։
Հ . Աղօթքը Աստուծոյ հրաման է չէ նէ խրատ։

Պ . Աստուծոյ հրաման է . վասն զի Աստուած մեզի հարկաւոր եղած բաները ազօթքի հետ կապած է :

Հ . Բայց որովհետեւ Աստուած բոլոր մեզի հարկաւոր եղած բաները գիտէ, ուրեմն խնդրել ի՞նչ պէտք է :

Պ . Ինքն ասանկ կ'ուզէ, որպէս զի մեր աղօթքովը զինքը փառաւառը ենք, և մեր սկարութիւնը խմանանք, և թէ իրեն օդնականութեանը կարօտ ենք :

Հ . Աղօթքին պառողն ի՞նչ է :

Պ . Աստուծմէ ամէն բան աղօթքով կ'ընդունինք . վասն զի Յիսուս խոստացաւ մեզի՝ թէ ի՞նչ որ իր անուամբը խնդրենք, կ'ընդունինք :

Հ . Հապա ինչու շատերը աղօթք կ'ընեն ու իրենց խնդիրքը չեն ընդունիր :

Պ . Վասն զի ի՞նչ որ պէտք է այն չեն խնդրեր, կամ ինչպէս որ պէտք է անանկ չեն խնդրեր :

Հ . Ե՞րբ պէտք է աղօթք ընել :

Պ . Մասնաւորապէս առաւաօքը և իրիկունը . ու զանց առնելը քրիստոնէի անվայել բան է :

Հ . Ի՞նչ բանի համար պէտք է առաւօտը աղօթք ընել :

Պ . Աստուծոյ շնորհակալ ըլլալու համար՝ որ զմեղ ստեղծեր ու մինչև այն օրը պահեր է . և խնդրելու համար՝ որ նոյն օրը սրբութեամբ անցընենք :

Հ . Խրիկունը ի՞նչ բանի համար պէտք է աղօթք ընել :

Պ . Նոյն օրուան մէջ Աստուծոյ մեզի ըրած երախտեացը շնորհակալ ըլլալու համար , մեր մեղացը թողութիւն խնդրելու ու գիշերը ամէն վտանգէ զմեղ պահելու համար :

ԺԳ .

Տէրունական Աղօրք , և առաջին , երկրորդ ու երրորդ խնդրուածները .

Հ . Մեր Աստուծմէ ընելու խնդիրքները ի՞նչ բանի մէջ համառօտուած է :

Պ . Հայր Ներին մէջը , որ Տէրունական Աղօթք կ'ըսուի :

Հ . Ինչո՞ւ Տէրունական Աղօթք կ'ըսուի :

Պ . Վասն զի այս աղօթքը ի՞նքն Յիսուս մեզի սորվեցուց , անոր համար ամէն աղօթքէ գերազանցն է :

Հ . Բերնուց գիտե՞ս այս աղօթքը :

Պ . Հրամեր էք . և ամէն քրիստոնեայ պէտք է գիտեայ և շատ անգամ ըսէ :

Հ . Ըսէ տեսնամ :

Պ . Հայր մեր որ յերկինս ես ,

1 Առւրք եղիցի անուն քո .

2 Եկեսցէ արքայութիւնքո .

3 Եղեցին կամքքո որպէս յերկինս և
յերկրի :

4 Զհաց մեր հանառազորդ տուր մեզ
այսօր .

5 Եւ թող մեզ զպարտիս մեր , որպէս
և մեք թողումք մերոց սպարտապանաց .

6 Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն .

7 Այլ փրկեա զմեզ 'ի չարէ . Զի քո
է արքայութիւն և զօրութիւն և փառքյա-
վիտեանս . տմէն :

Հ . Ինչո՞ւ համար կ'ըսես հայր մեր ու յե-
ինս էս :

Պ . Որպէս զի ցուցընենք թէ ի՞նչ յար-
դութեամք ու վատահութեամք որդիքը
այնպիսի հօր մը առջև պիտի ելլան , որքան
զամենայն հայր մեծ ու բարի է :

Հ . Ինչո՞ւ զԱստուած հայր կը կոչես :

Պ . Վասն զի ի՞նքը մեր արարիչն է . և
դարձեալ վասն զի Յիսուսի իր միածին Որ-
դւոյն արդեամբքը իրեն որդեգիր եղանք :

Հ . Ինչո՞ւ կ'ըսես հայր մեր , և ոչ հայր իմ :

Պ . Որպէս զի ցուցընենք թէ Աստուած
մեր ամենուս հայրն է , և մենք մէկմէկու
եղբարք , ու պէտք է որ իրար եղբօր պէս
սիրենք , ու չէ թէ միայն մեզի համար , հա-
պա ուրիշներուն համար աշ պէտք է աղօժք
ընենք :

Հ . Ինչո՞ւ կ'ըսես ԱՌ յերինս էս , երբոր
Աստուած ամէն տեղ է :

Պ . Վասն զի գլխաւորապէս Աստուած
երկինքը կը թագաւորէ , և մեր ժառանգու-

թիւնն ու հայրենիքը Երկինքն է , որուն որ
միշտ պիտի փափաքինք :

Հ . Սուրբ Էղիոն անուն + ըսելով Աս-
տուծմէ ի՞նչ կը խնդրես :

Պ . Կը խնդրեմ որ ամենայն արարածք
զԱստուած Ճանչնան , փառաւորեն , ու Աս-
տուծոյ ծառայեն :

Հ . Ինչո՞ւ աս խնդրուածքը ամէն խըն-
դրուածքէ առաջ կ'ընես :

Պ . Ասմ զի Աստուծոյ որդի ըլլալով
ուրիշ բան այնչափ պիտի չխնդրենք , որ
չափ որ զԱստուած Հայր մեր ամէնքը փա-
ռաւորեն , ու ամէնքը իրեն ծառայեն :

Հ . Անոնք որ իրենց մեղքերովը ու չար
օրինակներովը կը նախատեն զԱստուած ,
ի՞նչ կ'ընեն :

Պ . Այս աղօթքովիրենք զիրենք կը դա-
տապարտեն , և բերնով ըսածնին իրենց
վարքովը սուտ կը հանեն :

Հ . Այս խօսքովս Եկեղեց արժայանելուն +
ի՞նչ կը խնդրենք :

Պ . Կը խնդրենք որ Աստուած մեղաց
թագաւորութիւնը կործանէ , ու իր շնորհ-
քովը ինքը մեր սիրաը թագաւորէ , և մեզ
շուտով երկնային թագաւորութեանը ար-
ժանի ընէ :

Հ . Ի՞նչ կը խնդրենք այս խօսքովս Ե-
կեղեն կամ + + որուն յերինս և յերիրի :

Պ . Կը խնդրենք որ մեր կամքը այնպէս
Աստուծոյ կամացը հպատակ ըլլայ , որ այն
կերպով իր կամքը կատարենք՝ ինչպէս որ
սուրբերը երկինքը կը կատարեն :

Հ . Միայն Աստուծոյ հրամանները կա-
տարելով Աստուծոյ կամքը կը կատարենք :

Պ . Այնպէս կամքերնիս Աստուծոյ կա-
մացը հպատակ պիտի ըլլայ , որ համբերու-
թեամբ քաշենք ամէն նեղութիւն ալ որ
մեզի խաւրէ :

ԺԴ.

Չորրորդ , հիմնգերորդ , վեցերորդ ու Կօր-
ներորդ խնդրուածքները .

Հ . Ի՞նչ կը խնդրենք այս խնդրուած-
քովս Զհաց մէջ հանապահութ պուր մէու այսօք :

Պ . Կը խնդրենք Աստուծմէ որ մեղե
պէտք եղած հոգևոր ու ժամանակաւոր
օգնութիւնները մեզի պարգևէ :

Հ . Աստուծմէ ի՞նչ հոգևոր օգնութիւններ կը խնդրենք :

Պ . Խրեն շնորհքը , իրեն աստուածային
խօսքը , ու սուրբ խորհուրդները , և մասնա-
ւորապէս սուրբ Հաղորդութիւնը :

Հ . Ի՞նչ ժամանակաւոր օգնութիւններ
կը խնդրենք :

Պ . Կերակուր , զգեստ , ու ինչ որ մեր
կեանքը պահելու հարկաւոր է :

Հ . Ուրեմն օրինաւոր է աշխարհքիս բա-
րիքները Աստուծմէ խնդրելը :

Պ . Հրամեր էք . միայն թէ անանկ խղին-
գրենք՝ որ մեր փրկութեանը վնաս չբերեն ,
որ ամէն բանե վեր պիտի սեպենք :

Հ . Ինչո՞ւ հաց միայն կ'ըսե՞նք , որ ամէն ու-
տելու բաներուն մէջ աւելի հասարակն է :

Պ . Վասն զի պէտք չէ որ փափուկ ու-
տելորդ բաներ խնդրե՞նք , այլ հարկաւո-
րովը գոհ ըլլա՞նք :

Հ . Ինչո՞ւ կ'ըսե՞նք հանագաղորդ , ու այ-
սօ՞ :

Պ . Որպէս զի ցուցընե՞նք թէ պէտք է որ
ամէն օր Աստուծոյ աղօթքը ընե՞նք , ու դա-
վարը Աստուծոյ մեր հօրը բարութեանը թո-
ղունք :

Հ . Աստուծած կ'արդիլէ որ դավարը չմը-
տածե՞նք :

Պ . Չէ . բայց կ'արդիլէ որ ըլլայ թէ
հոգ ընելով ու իրեն նախախնամութեանը
վատահելով մտածե՞նք :

Հ . Ի՞նչըսել է թոռ մէկ զարդարիս մէր :

Պ . Ըսել է թէ մարդ պիտոր զի՞նքը ան-
մեղ չսեալէ . հատկա ամէնքնիս ալ մինչև ցմահ
պիտի Աստուծոյ ողորմութեանը վատահինք :

Հ . Ինչո՞ւ կ'աւելցընե՞նք Ուղիս և մէ նո-
րածն մէրոյ պարպապանաց :

Պ . Վասն զի Աստուծած կերպով մը խօսք
տուեր է թէ՝ որոնք որ իրենց թշնամեացը
կը ներեն , Աստուծած անոնց թողութիւն
կու տայ . ուստի թէ որ մենք ուրիշներուն
չներենք նէ , ուարապ բան է Աստուծմէ
թողութիւն խնդրելը :

Հ . Ի՞նչ կը խնդրե՞նք այս խօսքերովս
ՄԻ պանիւ զմէկ 'ի Քորչունիւն :

Պ . Կը խնդրե՞նք որ փորձութեանց գէմ
կենալու համար մեզի օգնէ . վասն զի միշտ

փորձութեան մէջ կը ձգեն զմեղ աշխարհք ,
սատանայ , ու մեր մարմինը :

Հ . Ուրեմն խնդիրընիս այն չէ որ փոր-
ձութիւն քաշենք :

Պ . Չէ . վասն զի մեր ֆրկիցը փորձու-
թիւնքաշելէն ետքը , թոյլ կու տայ որ մենք
ալ փորձութիւնքաշենք , որպէս զի մեր
հաստատութիւնը երեան դայ , ու արթուն
կենանք :

Հ . Այս խօսքս Մի պանիր կմեռ , ցուցը-
ներ թէ փորձութեանց պատճառը Աս-
տուած է :

Պ . Չէ . հապա միայն կը ցուցընէ թէ
ինքը թոյլ կու տայ . բայց ոչ երբէք կը թո-
զու որ մեր կրցածէն աւելի փորձութիւն
քաշենք :

Հ . Անոնք որ կարծելով թէ փորձու-
թեան կրնան յաղթել , ու առանց հարկա-
ւորութեան զիրենք փորձութեան մէջ կը
ձգեն , կրնան վստահութեամբ այս աղօթքը
ընել , յուսալով որ Աստուած իրենց աղօ-
թիցը լաէ :

Պ . Չէ . վասն զի դործքով իրենց յան-
գրդնութիւնը կը ցուցընէն . ուստի շատ ան-
գամ այնպիսիները փորձութենէ կը յաղ-
թուին :

Հ . Ի՞նչ խնդիրը կընենք այս խօսքովս
Այլ է՞ւ կմեռ 'ի լարէ :

Պ . Կը խնդիրենք որ Աստուած պահէ
զմեղ այն ամէն հոգեոր ու մարմնաւոր չարէ ,
որ մեր հոգւոյն փրկութեանը վնաս կրնայ
հասցընել :

Հ . Խնջու ընդհանրապէս 'ի շաբէ կ'ը-
սենք , ու մասնաւորապէս ինչ չարէ է չենք
ըսեր :

Պ . Վասն զի այն որ մեզի չար կ'երևայ ,
ինչպէս հիւանդութիւն , աղքատութիւն , և
այլն , շատ անգամ մեզի բարիք է . անոր
համար կը խնդրենք Աստուծմէ որ պահէ¹
զմեզ այն չարէն , որ իրաւցընէ մեզի վսա-
սակար է :

Հ . Ի՞նչ ըսել է Զի ո՞ո է ար+այս-Եիւն և
ուօրու-Եիւն և իսուն+ յա-իպէտնա . ամէն :

Պ . Ըսել է թէ ինքն է մեր ամենակա-
րող թագաւորը , և իրեն միայն կը վայը յա-
ւիտենական փառք : Եւ ամէն ըսելով , որ
Եղիշի ըսել է , կը հաստատենք մեր ամենայն
խնդիրքները :

ԺԵ .

Ողջունատրուրիւն Հրեշտակային .

Հ . Հայր մերէն ետքը ո՞ո ալօմքը շատ
անգամ պէտք է ընենք :

Պ . Ուշոյն ո՞ո Մարիամը , որ Ողջունա-
տրութիւն Հրեշտակային կ'ըսուի : Ու սուրբ
Աստուծածնին կը մատուցանենք՝ զինքը
պատուելու ու իր բարեխօսութիւնը խնդրե-
լու համար :

Հ . Ըսէ որ տեսնամ :

Պ . Ողջոյն քեզ Մարիամ , լի շնորհօք .
Տէր ընդ քեզ . որհնեալ ես դու 'ի կա-

նայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո
Յիսուս: Սրբուհի Մարիամ, մայր Աստու-
ծոյ, բարեխօսեած վասն մեր մեղաւորացս
այժմ, և 'ի ժամու մահուան մերոյ: ամէն:

Հ. Այս աղօթքը ովէ շարադրեր:

Պ. Գաբրիէլ հրեշտակապետը, սրբու-
հի Եղիսաբեթու Եկեղեցին:

Հ. Գաբրիէլ հրեշտակապետը ո՞ր խօս-
քերն է զուրցեր:

Պ. Այս խօսքերս. Ուրախ Ներ Բերէւեալու:
Տեր ընդ ունդ, Վի Գուեր Շնորհու Ասպուծոյ. ու
այս խօսքերէս շարադրած է Ողջոյնին առ-
ջի մասը. Ուշոյն ուն Մարիամ, Վի Շնորհօտ,
Տեր ընդ ունդ:

Հ. Եղիսաբեթ ո՞ր մասն ըստ:

Պ. Օքննեալ էս դու 'ի կանայս, և օքննեալ է
պատող որոշայնի ոս:

Հ. Եղիսաբեթ ովէ էր:

Պ. Յովհաննու Մկրտչին մայրը ու սուրբ
Աստուածածնայ աղգականը:

Հ. Յովհաննէս Մկրտիչն ովէ էր:

Պ. Գրիստոսի կարապետը, որ ծնանե-
լէն առաջ սուրբ Աստուածածնայ այցելու-
թեամբը սրբեցաւ:

Հ. Եկեղեցին Ողջոյնին ո՞ր մասը շարա-
դրեց:

Պ. Սրբուհի Մարիամ, Տայը Ասպուծոյ,
Բարեխօսեած վասն մեր մեղաւորացս այժմ, և 'ի
Ճամու մահուան մերոյ. ամէն:

Հ. Ինչու սուրբ Աստուածածնայ Վի Շնո-
րհօտ կ'ըսենք:

Պ. Վասն զի միշտ Աստուծոյ սիրելի ե-

դաւ, ու միշտ մեծամեծ առաքինութիւններ
ըով զարդարուած էր, և ոչ երբէք պզափկ
մեղք մ'ալ գործեց :

Հ. Սուրբ Գիրք ուրիշ առաքերուն հա-
մար ալ չընաեր թէ լի էին շնորհօք :

Պ. Հրամեր էք. բայց որովհետեւ սուրբ
Աստուածածին ամէն սուրբերէն աւելի մեծ
պատուոյ հասաւ Աստուծոյ մայր ըլլալովը,
անոր համար ամենէն ալ եւել շնորհք առ-
նելու արժանի եղաւ :

Հ. Սուրբ Աստուածածին ակզբնական
մեղք ունեցաւ :

Պ. Իրաւ այս բանս դեռ Եկեղեցին ի-
րեւ հաւատոյ մաս որոշած չէ, բայց բաւա-
կանապէս իր գիտաւորութիւնը կը ցուցընէ
Անարատ Յզութեան տօնը կատարելովը,
ու արդելելով որ ամեննեին մէկը այս բա-
նիս գէմ ցխուի ¹:

Հ. Ի՞նչ ըսել է Տէր ընդ +եռ :

Պ. Ըսել է թէ սուրբ Աստուածածնայ

1 Եպիսկոպոսք Սրբազնն Պապէն խըն-
դրեցին այս ետքի ատեններս, որպէս զի
հաստատէ իբրև հաւատքի մաս թէ սուրբ
Աստուածածին անաշտացզացաւ, և այս խըն-
դիրքս որոշուելու համար Եկեղեցւոյ մէջ
շատ ջերմեռանգութիւններ կ'ըլլան հիմու-
թելի ճշմարատութիւնը այս խնդրոյս վրայ իր
պատգամը կու տայ:

սիրաը ու ամէն փափաքները բոլորտվնն մաս
նաւոր կերպով մը Աստուծոյ նուիրած է :

Հ . Ի՞նչ ըսել է Օքնեալ ես դու 'ի կա-
նայս :

Պ . Ըսել է որ սուրբ Աստուծածին
այնպիսի շնորհք մը ունեցաւ , որ ոչ ոք ու-
նեցեր է , որ կոյս ու մայր ըլլայ . անոր հա-
մար արժան է որ ամէն մարդիկ իլեն երա-
նի ասն :

Հ . Ինչո՞ւ կ'ըսենիք Օքնեալ է պատուալ որ-
շայնի գույն :

Պ . Որպէս զի ցուցընենիք թէ սուրբ Աս-
տուծածին ալ գործակից եղեր է Մար-
դեղութեան մեծ խորհրդոյն . և ինչպէս որ
Յիսուս օրհնեալ է ու ամէն բանէ վեր , ա-
սանկ ալ սուրբ Աստուծածին ամէն արա-
րածներէն վեր է :

Հ . Ինչո՞ւ համար աւելցուցեր է Եկեղե-
ցին Սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ , բարե-
խօսեալ շասն մը մշղաւորացս այժմ :

Պ . Որպէս զի սուրբ Աստուծածնայ
սրբութեան մեծութիւնը իմացընէ , և թէ
իրեն զօրաւոր բարեխօսութեամբը ինչ շը-
նորհքի որ կարօտութիւն ունինիք , ինքը իր
Որդիէն կրնայ ընդունիլ :

Հ . Ինչո՞ւ համար կ'ըսենիք 'ի ժամռա մա-
հուան մը ըս :

Պ . Որպէս զի սուրբ Աստուծածածնայ
բարեխօսութեամբը բարի մահ ունենանիք ,
որ ամէն շնորհքէ աւելի մեծ շնորհքն է :

Հ . Աստուծածածնայ Աւրափոխման տօնն
ընէ է :

Պ . Այն օրուան յիշատակն է , որ սուրբ Աստուածածին մեռնելքն ետևյարութիւն առաջ , ու հոգւով ու մարմնով երկինք փոխադրուեցաւ . ինչպէս որ ընդհանուր Եկեղեցւոյ աւանդութիւնն է :

Ժ Զ .

Պաշտօն կորսին Մարիամու .

Հ . Ի՞նչ սովորութիւն է որ քրիստոնէից երկիրը օրն իրեք անգամ մասնաւոր կերպով մը զանգակ կը զարնեն :

Պ . Որպէս զի իմանանք թէ մեր փրկութեանը վտանգներու ու թշնամիներու մէջը պէտք է որ շատ անգամ սուրբ Աստուածածնայ հզօր բարեխօսութեանը դիմենք :

Հ . Չըվայլեր որ սուրբ Աստուածածնայ իբրև մայր Աստուածոյ ուրիշ սուրբերէն զատ մասնաւոր պաշտօն մը մատուցանենք :

Պ . Հրամեր էք . արժան է որ Յիսուսէն ետքը՝ ամէն հրեշտակներէն ու ամէն սուրբերէն եւել սուրբ Աստուածածինը պատուենք , զոր Եկեղեցին Գերծառայութիւն կը կոչէ :

Հ . Կոյնապէս պէտք չէ որ մասնաւոր սէր մը ու մասնաւոր վստահութիւն մը ունենանք սուրբ Աստուածածնայ վրայ :

Պ . Հրամեր էք . վասն զի ոչ միայն մայր Աստուածոյ է , հապա մեզի ալ մայր շնորհաց է :

Հ . Ի՞նչպէս սուրբ Աստուածածին մեզի
մայր շնորհաց է :

Պ . Վասն զի Որդին Աստուծոյ մարդ
ըլլալով մեզ իրեն եղբայրագիր ըրաւ . ու
րեմն սուրբ Աստուածածնայ ալ որդիքներն
եղանք :

Հ . Այս բանս ովլ մեզի սորվեցուցեր է :

Պ . Յիսուս , որ խաչին վրայ Յովհաննու
աւետարանցին ըսելով՝ ամենուս ըսաւ թէ
Ահա մայր +*, ու ցուցուց սուրբ Աստուածա-
ծինը : Եւ անանկով մեզի սորվեցուց թէ
ինչ որդիսկան մեծարանք ու սէր պէտք է
ունենանք սուրբ Աստուածածնայ վրայ :

ԺԷ .

Ուր Աստուծոյ , սէր լնկերին և սէր
անձին .

Հ . Սէրն ի՞նչ է :

Պ . Առաքինութիւն մըն է որ Հոգին
սուրբ մեր սիրաը կը հեղու , որովզ Աստուած
վասն Աստուծոյ ամէն բանէ վեր կը սիրենք ,
և մեր ընկերը իբրև մեր անձը կը սիրենք Աս-
տուծոյ սիրոյն համար :

Հ . Ի՞նչ է սէրն Աստուծոյ վասն Աս-
տուծոյ :

Պ . Ե զԱմառած սիրել չէ թէ այն ամե-
նայն բարեաց համար որ մեզի ըրեր է ու
դեռ պիտի ընէ , հապա վասն զի ինքը ար-

Ժանի է մեր սիրոյն իր անհուն կատարելու
թեանցը համար :

Հ. Զնստուած ամէն բանէ վեր սիրելն
ի՞նչ է :

Պ. Մեր ազգականներէն ու քարեկամ
ներէն վեր ու մեր անձէն ալեւելզԱստուած
սիրել, ու պատրաստ ըլլալ՝ իրեն դէմ բան
մը ընկելու համար ամէն չարչարանք քաշել,
մինչև մեռնիլ ալ աչքը առնուլ :

Հ. Ի՞նչ նշանով կրնանք իմանալ թէ ար
դեօք զԱստուած ամէն բանէ վեր կը սիրե՞նք
թէ չէ :

Պ. Թէ որ իրեն պատուիրանիքները լաւ
պահենք :

Հ. Աստուծոյ սէրը մէկալ պատուիրանիք
ներէն ու առաքինութիւններէն տարբե՞ր է :

Պ. Հրամեր էք. զատ առաքինութիւնն
է, որ մերթ ընդ մերթ բերնով ալ խոստո
վանութիւնը պիտի ընենք :

Հ. Գանի՞անդամ Աստուծոյ սիրոյն խոս
տովանութիւնը պէտք է ընենք :

Պ. Եկեղեցին թիւ որոշած չէ. բայց
Աստուծոյ սէրը ամէն առաքինութենէն
վեր ըլլալով՝ պէտք է որ շատ անդամ այդ
խոստովանութիւնը ընենք :

Հ. Ըսէ աեմնամ թէ ի՞նչ դիպուածնե
րու մէջ Աստուծոյ սիրոյն խոստովանու
թիւնը պէտք է ընել :

Պ. Երբոր մաքերնիս կը բացուի ու զԱս
տուած կը սկսինք ճանչնալ, մահուան վր
տանդի մէջ, ու երբեմն երբեմն ուրիշ ի՞նչ
և իցէ ատեն :

Հ . Սիրոյն երկրորդ սլատուիրանը մընէ :

Պ . Սիրել զընկերն :

Հ . Ընկեր ըսելով ի՞նչ կը հասկընաս :

Պ . Չէ թէ միայն իմ աղբականներս ու բարեկամներս , հապա ամէն մարդիկ , իմ թշնամիներս ալ :

Հ . Ամէն մարդիկ սիրենք ու մէկ մարդ մը միայն չափենք նէ՝ սիրոյն սլատուիրանը կատարած կ'ըլլանք :

Պ . Չէ . Վասն զի սէրը ընդհանուր առաքինութիւնն է , ու ամէն մարդու վրայ պիտի տարածուի :

Հ . Օրինակով մը այդ բանիը բացատրէ :

Պ . Թէ որ մէկը հաւատքին մէկ մասը միայն չհաւատար , ու մէկալ բոլոր մասերը կը հաւատայ , հաւատք չունենար . նոյնպէս թէ որ մէկ սլատուիրանիք մը չպահէ , չըրնար ըլլալոր Աստուծոյ սէրը ունենայ :

Հ . Բայց ի՞նչպէս կրնայ ըլլալոր թշնամիներն ալ սիրենք :

Պ . Վասն զի Քրիստոս ասանկ հրամայեց և որովհետեւ մենք որ մեղքով իրեն թշնամին էինք , ու ինքը մեզի համար մեռաւ , կ'ուզէ որ մենք ու ուրիշները անանկ սիրենք՝ ինչպէս որ ինքը զմեզ սիրեց :

Հ . Աղբականնիս ու բարեկամնիս ու թիշներեն եւել կրնանք սիրել :

Պ . Հրամեք էք . սիրոյն կարգն ալ այդ է :

Հ . Ի՞նչ պատճառի համար մեր ընկերը պիտի սիրենք :

Պ . Աստուծոյ համար , ու մեզի նման Աստուծոյ պատկերը ըլլալուն համար , ու

Յիսուսի արիւնովը գնուած ըլլալուն համար : Այս պատճառներուս համար պէտք է որ մեր ոէրը ընդհանուր ըլլայ :

Հ . Թէ որ մէկը իր ընկերը անոր համար սիրէ՝ որ իրեն ախորժելի է կամ իրեն բարեկ կ'ընէ, սիրոյ պատուիրանը կը կատարէ՛ թէ չէ :

Պ . Չէ . այդ սէրը բնտկան սէր է, ու մեր փրկութեանը համար օգուտ մը չունի :

Հ . Ինչո՞ւ այս տեսակ սէրը փրկութեան համար օգուտ չունի :

Պ . Վասն զի այն բանին համար Աստուած երկինքը վարձք կու տայ՝ որ իրեն սիրոյն համար կ'ընենք :

Հ . Ընկերնիս ի՞նչպէս պիտի սիրենք :

Պ . Մէր անձին պէս :

Հ . Թէ որ Աստուած կ'ուզէ որ ընկերնիս մեր անձին պէս սիրենք, ուրեմն կ'ուզէ որ մենք զմեզ ալ սիրենք :

Պ . Հրամեր էք . և կարգաւորեալ սէրը կը պահանջէ որ մենք զմեզ ուրիշէն առաջ սիրենք :

Հ . Մէնք զմեզ ի՞նչ կերպով պիտի սիրենք :

Պ . Աստուծոյ համար և ըստ Աստուծոյ գլխաւորապէս մեղքէ հեռու կենալով, որ մեր սաոյգ մնան է . և մեր փրկութեանը հոգ ունենալով, որ մեր Ճշմարիտ բարիքն է :

Հ . Մէնք զմեզ ի՞նչպէս ուրիշէն առաջ պիտի սիրենք :

Պ . Ուրիշի հաճոյիցը կամ մարդկային նկատման համար ամենելին չար դորձք մը

շընելով, ու մեր սկարտուցը դէմբան շընելով:

Հ. Այն որի հոգւոյն վնասովը աշխարհային զուարձութեան ետևէ կ'ըլլայնէ՝ ինք զինք կը սիրէ:

Պ. Չէ. մանաւանդ թէ ինքն իրեն մեծագոյն թշնամին է:

Հ. Այս անկարգ սէրը ի՞նչ կ'ըսուի:

Պ. Անձնասիրութիւն:

Հ. Այն որ ընկերոջը մօլութիւններուն ու կրիցը գործակից կ'ըլլայ՝ կը սիրէ իր ընկերը:

Պ. Չէ. մանաւանդ թէ կ'ատէ. որովհետեւ անոր գատապարառութեանը գործակից կ'ըլլայ:

Հ. Ուրեմն մեր ու ընկերոջը սիրոյն նողատակը ի՞նչ պիտի ըլլայ:

Պ. Մեր ու այլոց փրկութիւնը:

Հ. Ընկերսիրութեան ի՞նչ ընդհանուր կանան կայ:

Պ. Այս երկու կանոնները. նախ այն որ չենք ուզեր որ ուրիշները մեզի ընեն, մենք ուրիշի ընենք: Երկրորդ՝ այն բարիքն որ կ'ուզենք որ ուրիշները ըստ Աստուծոյ ընեն մեզի, մենք աւ իրենց ընենք:

ԺՂ.

Պատուիրանք Աստուծոյ . և առաջին պատուիրանք :

Հ . Առ Աստուծոյ , առ ընկերն և առանձն ունենալու սիրոյն պարագերը ի՞նչ բանով կը սորվի՞մք :

Պ . Աստուծոյ պատուիրանքներովը :

Հ . Աստուծոյ պատուիրանքները քանի են :

Պ . Տասն են . անոր համար Տասնաբանեայ պատուիրանք կ'ըսուին :

Հ . Ասպատուիրանքները Աստուծոյ երբ տուեր է մարդուն :

Պ . Մովսէս մարդարէին ձեռքովը՝ Խարայելացւոց Եղիսպտոսէն ելլուէն յիսուն օր ետքը : Յիսուս ալ նոյն պատուիրանքները աւետարանին մէջ հաստատեց :

Հ . Հին օրինաց մէջ այն օրը ի՞նչ կը սուէր :

Պ . Պեհտեկոստէ . նոյն օրն է որ Հոգին սուրբ ինջաւ Առաքելոց վրայ՝ նոյն պատուիրանքները կատարելագործելու և հաւատացելոց սիրաը ապաւորելու համար :

Հ . Մովսէսէն առաջ առ պատուիրանքները պահելու պարագ չկամք :

Պ . Հրամեր էք , կար . վասն զի բնական օրինաց բացասրութիւնն են , որ ուղիղ բանը ամէն մարդու տուն կու տայ . անանեկ

որ հեթանոսներն ալ պէտք էր որ պահէին :
Հ . Ըսէ տասը պատուիրանկներն որ տես-
նամ :

Պ . Ես եմ տէր Աստուած քո .

1 Մի ունիցիս այլ Աստուած առաջի իմ :

2 Մի առնուցուս զանուն Աստուածոյ քո
ընդունայն :

3 Յիշեա զօր շաբաթուն որբել զնա :

4 Պատուեա զհայր քո և զմայր , զի եր
կայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի :

5 Մի սպանաներ :

6 Մի չնար :

7 Մի դողանար :

8 Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ :

9 Մի ցանկար կիսոջ ընկերի քո :

10 Եւ մի ամենայնի որ նորա է :

Հ . Այս խօսքերը ի՞նչ կը նշանակեն Ես
է տէր Աստուած :

Պ . Կը նշանակեն թէ ի՞նչ պատճառի հա-
մար Աստուածոյ պատուիրանկները պիտի
պահէնք :

Հ . Ի՞նչ պատճառի համար պիտի պա-
հէնք :

Պ . Կամ արդարութեան համար , վասն
զի Աստուած է պատուիրեր , որ մեր արա-
րին ու տէրն է : Երկրորդ երախատգիտու-
թեան համար , որ զմեզ փրկեր ու սատա-
նայի գերութենէն խալքուեր է :

Հ . Ի՞նչ ըսէլէ . Մի ունիցիս այլ Աստուած
չէ իմ :

Պ . Ըսէլ է որ պիտի հաւտանք որ Աս-
տուած մէկ է , զօր պիտի պատուենք ու

պաշտենք, ու ուրիշ բան սկիտի չափաշտենք :

Հ. Աստուածային պաշտօնը ի՞նչ յարդութիւն սկիտի ունենայ :

Պ. Պիտի ըլլայ ներքին ու տրապէին :

Հ. Ինչու ներքին ալ սկիտի ըլլայ, արտաքինը բաւական չէ :

Պ. Վասն զի Աստուած հոգի ըլլալով կ'ուզէ որ զինքը հոգւով ու ճշմարտութեամբ պաշտենք :

Հ. Ինչու համար արտաքին ալ սկիտի ըլլայ :

Պ. Վասն զի մարդը հոգւով ու մարմնով բաղադրած ըլլալով պէտք է որ հոգին ալ մարմինն ալ Աստուածոյ նուիրէ, ու պէտք է որ Աստուած ուրիշներուն առջևն ալ փառաւորէ :

Հ. Աստուած այս պատուիրանքով ի՞նչ կ'արդիլէ :

Պ. Կռապաշտութիւնն, կախարդութիւնն, տւելորդապաշտութիւնն, կեղծաւորութիւնն, ու ինչ որ Աստուածոյ պաշտամանը դէմ մեղք ըլլայ :

Հ. Կռապաշտութիւնն ի՞նչ է :

Պ. Աստուածոյ պաշտօնը ինչ և իցէ արարածոյ մատուցանելն է :

Հ. Կախարդութիւնն ի՞նչ է :

Պ. Սատանային ձեռքովը հրաշք մը ընել ուզելու վարպետութիւնը, ինչպէս ըլլալու բաները գուշակել :

Հ. Աւելորդապաշտութիւնն ի՞նչ է :

Պ. Փուճքաներու վրայ յոյար գնել, ինչ որէս երազի հաւատատլ, կախարդներու գու-

շակութիւններուն մաիկ ընել, և այն :

Հ . Կեղծաւորութիւնն ի՞նչէ :

Պ . Մոլութիւն մըն է, որ արտաքուստ ասառուածպաշտութիւն կը ցուցընէ, ու սիրաը բոլորովին դատարկ է երկիւզածութենէ :

ԺԹ .

Առաջին պատուիրանք և պաշտօն արդոց.

Հ . Առաջին պատուիրանքը պահելու կողմանէ բաւական է որ մէկը միայն Աստուծոյ հաւատաւայ, ու պաշտէ :

Պ . Պէտք է որ սիրէ ալ զԱստուած, ու այս պատուիրանքը ամէն պատուիրանքէն աւելի մեծն է :

Հ . ԶԱստուած ի՞նչսկէս պիտի սիրենք :

Պ . Այս բանը Յիսուս մեզի այս խօսքովս սորվեցուց : Սէւեսոյէս ՀՏէր Աստուած +ու յտմէնայն սրբէ +ու մէն, յամէնայն պօքութեն է գումանէ և յամէնայն ճգաղ +ու : Բայց այսպիսի սէլք արքայութեան մէջ կատարեալ կ'ունենանք :

Հ . Ինչու համար ուրեմն Յիսուս այս պէս պատուիրեց :

Պ . Որպէս զի դիանանք թէ միշտ պիտի ջանանք Աստուծոյ սէրը մեր սրտին մէջ աւելցընէլ, ու մտածենք թէ որչափ որ ալ զԱստուած սիրենք, միշտ իրեն արժանաւորութենէն պտկաս կը սիրենք :

Հ . Ինչ պաշտօն որ սուրբ Աստուածա-

Ճնայ ու սրբոց որ կընծայենք նէ՝ Աստու-
ծոյ պաշտամանը դէմ չէ:

Պ. Չէ. վասն զի սուրբ Աստուծածածինն
ու սուրբերը չէ թէ իբրև Աստուծած կը պա-
տուենք, այլ իբրև բարեկամք Աստուծոյ.
ասանկով սրբոց պաշտօնն ալ Աստուծոյ կը
նուիրուի:

Հ. Շնորհք ընդունելու համար սուր-
բերը բարեխօս բռնելը Յիսուսի բարեխօ-
սութեանը դէմ չէ:

Պ. Չէ. վասն զի կ'աղացենք որ սուրբե-
րը բարեխօս ըլլան մեզի համար, որ Յիսու-
սի արդեամբքը Աստուծոյ շնորհացը արժա-
նի ըլլանք:

Հ. Սրբոց մասունքը պէտք է պատուել:

Պ. Հրամեր էք. որովհեան սուրբերուն
մարմինը հոգւոյն սրբոյ տաճարն եղեր են,
ու եաքը իրենց փառաւոր հոգւոյն հետ սի-
սի միանան. անոր համար պատուոյ արժա-
նի են:

Հ. Սուրբերուն պատկերներուն ու ար-
ձաններուն ալ պէտք է պատիւ տալ:

Պ. Հրամեր էք. սուրբերուն յիշատակին
համար:

Հ. Երբոր Յիսուսի, կամ սուրբ Աս-
տուծածնայ, կամ սրբոց պատկերը կամ
արձանն որ կը պատուենք նէ, ոսկին կամ
փայտը կամ նկարն է որ կը պատուենք:

Պ. Չէ. հազար Յիսուս, կամ սուրբերն
որ երկինք են, և այն պատկերը անոնց յի-
շատակը մեր միաքը կը բերէ:

Հ. Բայց Աստուծաշունչին մէջը ար-

գիլած է՝ թէ ՄԻ առանիցներ չեւ չեւադութիւն
կամ ուսումնական:

Պ. Բայց մենք չեւ թէ պատկերը կամ ար-
ձաննը կը պաշտենք . հապա ամենայն պատի-
ւը անոր կ'ընծայենք , որ այն պատկերը կամ
արձաննը մեր միտքը կը բերէ :

ի .

Աստուծոյ երկրորդ պատուիրանքը .

Հ. Աստուծած այս խօսքերով ՄԻ առ-
աջական պատուան Աստուծոյ + ընդուանայն , ի՞նչ
կը հրամայէ , ու ի՞նչ կ'արգելու :

Պ. Կը հրամայէ իր սուրբ անունը պա-
տուել , և կ'արգելու որ չպղծուի :

Հ. Աստուծոյ սուրբ անունը ի՞նչպէս
կրնանք պատուել :

Պ. Միշտյիշելու ատեն պատուով յիշե-
լով , և մեր կարօտութեան ատենը վտուահու-
թեամբ առ նա դիմելով :

Հ. Աստուծոյ սուրբ անունը ի՞նչպէս
կը պղծուի :

Պ. Անձքով , հայհոյութեամբ ու եր-
դումով :

Հ. Մեծ մեղք է Աստուծոյ սուրբ անու-
նը հայհոյելը :

Պ. Հրամեր էք . մեծ մեղքերէն մէկն է ,
զոր մարդիկ ալ կը պատժէն : Գաղղիոյ
սուրբ Լուգովիկոս թագաւորը հրաման հա-
նեց որ հայհոյիներուն լեզուն ծակծըկեն :

Հ . Միայն Աստուծոյ անունը հայհոյելը մեծ մեղք է :

Պ . Սրբոց անունն ալ ու սրբազան բաներն ալ արհամարհութեամբ յիշելը մեծ մեղք է :

Հ . Երդումն ի՞նչ է :

Պ . Զնստուած ճշմարտութեան վկայկանչել :

Հ . Պարասպ տեղը երդումընելի ի՞նչ է :

Պ . Առանց հարկաւորութեան ու փուծքանի համար երդումընել :

Հ . Թոյլ տրուած է երբեմն երդումընելը :

Պ . Հրամեր էք . միայն թէ երդումը ըլլայ խելքով , արդարութեամբ ու ճշմարիտ :

Հ . Խելքով երդումն ի՞նչ է :

Պ . Հարկաւոր դիպուածի երդումընել զոր օրինակ թէ որ եկեղեցական կամաշխարհական իշխան մը պահանջելու ըլլայ որ երդումընենք :

Հ . Արդարութեամբ երդումի՞նչ է :

Պ . Ոչ երբեք երդումընել՝ մեղք մը ընելու համար , կամ այնպիսի բանի՝ որ մեր ընկերոջը վնասակար է :

Հ . Ճշմարիտ երդումն ի՞նչ է :

Պ . Պէտք չէ երբեք երդումընել այն բանին վրայ , որ չենք դիտեր որ արդեօք իրաւ է թէ չէ :

Հ . Թէ որ մէկը գէշբան մը ընելու , զոր օրինակ մէկէ մը վրէժ առնելու համար , երդումընել , սպարտականն է երդումը կատարել :

Պ . Ամենելին չէ . այնպիսի Երդումը ընելովը կը մեղանչէ , ու Երդումը կատարելովը աւելի կը մեղանչէ :

Հ . Ուխտն ի՞նչէ :

Պ . Աստուծոյ եղած խոստմունք մըն է լաւագոյն բարի մը ընելու համար :

Հ . Թէ որ մէկը ուխտ ընէ , պարտական է կատարելու :

Պ . Հրամեր էք . ու աւելի լաւ է ամենելին ուխտ չընել , քան թէ ուխտ ընել ու չկատարել . անոր համար ուխտ մը չըրած խելոցի մարդիկներու պէտք է խորհուրդ հարցընել :

Հ . Թէ որ մէկը ուխտ ըրած ըլլայ ու իրաւացի պատճառի մը համար չկարենայ ուխտը կատարել , ի՞նչ պիտի ընէ :

Պ . Անոնցմէ որ իշխանութիւնն ունին պէտք է տնօրինումն խնդրէ , կամ խնդրէ որ ուխտը ուրիշբանի փոխեն :

Ի Ա .

Երտրոյ պատուիրանը .

Հ . Բնական օրէնքն , որ ուրիշ պատուիրանքները կը հրամայէնէ , կը հրամայէ Երսորդ պատուիրանքն ալ , որ է Զօր Հաբենան սբէլ :

Պ . Բնական օրէնքը կը հրամայէ որ քանի մը օր Աստուծոյ նուիրենք . բայց թէ որ օր , այն չորտէր :

Հ . Աստուած ինչո՞ւ հրեից հրամայեց
որ շաբաթ օրը սուրբ տահեն :

Պ . Արարչութեան յիշատակին համար ,
որ վեց օրուան մէջ Աստուած ամէն բան
տաեղծելէն ետքը դադրեցաւ , զոր Աստուա-
ծաշունչը հանդիստ տեառն կը կոչէ :

Հ . Քրիստոնեայք շաբաթ օրուան տեղ
ինչո՞ւ կիրակին սուրբ կը պահեն :

Պ . Քրիստոսի յարութեան ու չոգոյն
որբոյ գալստեանը յիշատակին համար Ա-
ռաքեալք անանկ հրամայեցին . վասն զի եր-
կու բանն ալ կիրակի օր հանդիպեցան :

Հ . Կիրակի բառը ի՞նչ կը նշանակէ :

Պ . Յունաց լեզուով Տէրունական , կամ
օր տեառն :

Հ . Կիրակի օրը ի՞նչպէս պէտք է սուրբ
պահել :

Պ . Նախ՝ ծառայական գործքերէ զգու-
շանալով , և երկրորդ՝ հոգևոր գործքերը ը-
նելով :

Հ . Ի՞նչ հոգևոր գործք պէտք է ընել :

Պ . Եկեղեցին կը հրամայէ որ քրիստո-
նեայք կիրակի օր պատարագ տեսնան , և
թէ շահանան՝ մահուչափ կը մեղանչեն , ու
կը յորդորէ որ ժամերգութեան ալ ներկայ
ըլլան , ու քարողական :

Հ . Եկեղեցւոյ մէջ ի՞նչպէս պէտք է կե-
նալ :

Պ . Ամենայն յարգութեամբ , լուսթը
ու ջերմեւանդութեամբ :

Հ . Եկեղեցւոյ մէջ յարգութիւն ընելը
մեծ մեղք է :

Պ . Հրամեր էք . ու հաւատքի թեթևութեան նշան է , մանաւանդ որ պրիստոս սուրբ Հաղպատութեան խորհրդովը հսն ներկայ է :

իԲ .

Չորրորդ պատուիրամբ .

Հ . Պատուեա պհայը ու լվայը ըսելով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

Պ . Կը հրամայէ որ որդիք իրենց հայրն ու մայրը սիրեն ու պատուեն , հնազանդին ու օգնութիւն ընեն իրենց :

Հ . Ո՞ր բանի մէջ ծնողաց պէտք է հնազանդիլ :

Պ . Ամէն բանի մէջ՝ Երբոր Աստուծոյ հրամանին դէմբան մը չէ : Թէ որ մեր ծնողաց ուղածը Աստուծոյ ուղածին դէմբլայ , Աստուծոյ պէտք է հնազանդինք և ոչ իրենց :

Հ . Ե՞րբ ու ի՞նչպէս պէտք է ծնողաց օգնութիւն ընել :

Պ . Ինչ պէտք որ ունենան՝ թէ հոգեոր եղեր է թէ ժամանակաւոր . ու որչափ որ ձեռուընուս դայ . մանաւանդ իրենց ծերութեանը ատեն : Եւ այս պատուիրանքս լաւ պահողներուն Աստուած այս աշխարհքը ալիր օրհնութիւնը կու տայ՝ ըսելով . Զի Երիայնակեաց լինիցի՞ն չէրայ Երիէ :

Հ . Պէտք է ջանան որ որդիք իրենց ծնողաց օրհնութեանը արժանի ըլլան :

Պ . Հրամեր էք .ու պէտք է շատ զգու-
շանան որ անշահ դործքելով անոնց անէծ-
քը չառնեն :

Հ . Այս պատուիրանը ծնողաց վրայ ալ
պարտք մը կը դնէ :

Պ . Հրամեր էք . պէտք է որ իրենց զաւ-
կըները սիրեն , անոնց կենացը հարկաւոր
բաները հոգան , մանաւանդ իրենց վիճա-
կին յարմար դաստիարակութիւն տան , ու
անոնց բարի օրինակ ըլլան :

Հ . Այս պատուիրանը ծնողաց վրայօք
միայն կ'իմացուի :

Պ . Չէ . ուրիշ մեր ազգականաց ալ կ'եր-
ժայ . վասն զի զանոնք ալ պէտք է սիրենք
ու յարգենք . և մասնաւորապէս եկեղեցա-
կան ու աշխարհական մեծաւորները :

Հ . Եկեղեցական մեծաւորներու ի՞նչ
պարտք կ'ունենանք այս պատուիրանիս ու-
ժուլը :

Պ . Պէտք է որ սրբազան Պատրի , Եպիս-
կոպոսները , և ուրիշ եկեղեցականները
պատուենք , ու հոգեւոր բաներու մէջ իրենց
հնազանդինք :

Հ . Աշխարհական մեծաւորներու ի՞նչ
պարտք կ'ունենանք այս պատուիրանիս ու-
ժուլը :

Պ . Թագաւորները ու իշխանները յար-
գել , ու քաղաքական և ժամանակաւոր բա-
ներու մէջ իրենց հնազանդիլ :

Հ . Ո՞ր բանի մէջ եկեղեցական կամ աշ-
խարհական մեծաւորներու օգնելու պարտք
ունինք :

Պ . Տէրութեան օգտին համար թագաւորին առւըքը հաւասարմութեամբ վճարելով, ու Եկեղեցւոյ հրամայած տասանորդը :

Հ . Այս պատուիրանը աշակերտաց ու ծառայից վրայ ալ պարաք մը կը դնէ :

Պ . Հրամեր էք . կը հրամայէ աշակերտաց ու ծառայից, որ իրենց վարպետը ու տէրը յարգեն, և ամէն կերպով հնազանդին անոնց ինչքաներուն պարագն որ Աստուածանոնց յանձներ է :

Հ . Մեծաւորներն ալ իրենց հպատակներուն պարաք մը ունին :

Պ . Հրամեր էք . պէտք է որ իրենց աստիճանին, ու իրենց պատուոյն յարմաք իրենց հպատակացը վրայ հոգ ունենան :

ԻԳ .

Հինգերորդ ու վեցերորդ պատուիրանք .

Հ . Մի սպանանէր ըսելով ինչքան կը հասկըցուի :

Պ . Այս կը հասկըցուի, որ ոչ ոք իր ընկերոջը կենացը վնաս մը կրնայ ընել. ուրիշքան է թէ որ թագաւորի կամ իշխանի օրինաւոր հրամանաւը ըլլայ :

Հ . Թէ որ մէկը ուրիշի կենացը վնաս ընկելու միայն փափաքի, մեղք կը սեպուի :

Պ . Թէ որ մէկը փափաքի ու կամի զուրիշը սպաննել, թէ և չկարենայ ալ սպան .

ՆԵՐ՝ միշտ Աստուծոյ առջև մարդասական
կը սեպուի :

Հ. Կընայ մէկը ինք զինք սպաննել, որ
պէս զի մեծ նեղութենէն մը խալսի :

Պ. Ոչ երբէք, վասն զի մեր կեանքը Աս-
տուծոյ ձեռքն է, մենք մեր կենացը տէր
չենք :

Հ. Այս պատուիրանը միայն մարդա-
սպանութիւնը կ'արդիլէ :

Պ. Չէ. հապա կ'արդիլէ ատելութիւն,
վրէժինդրութիւն, ու մեր ընկերոջը ինչ և
իցէ անիրաւութիւն ընելը :

Հ. Չար մարդիկ ատելը օրինաւոր չէ :

Պ. Չէ. իրենց ախտերը պիտի ատենք,
բայց զիրենք պիտի սիրենք :

Հ. Այս պատուիրանը ընկերոջը միայն
մարմնոյն վնասելը կ'արդիլէ :

Պ. Չէ. հապա հոգւոյն կենացն ալ վնա-
սելը, կ'արդիլէ, որ չըլայ թէ չար օրինա-
կով կամ գայթակղութեամբ մեղքի մէջ
ձգենք մեր ընկերը :

Հ. Գայթակղութիւնն ի՞նչ է :

Պ. Այնպիսի խօսք մը կամ գործք մը, որ
մեր ընկերը կընայ մեղքի մէջ ձգել :

Հ. Մի նար ըսելով Աստուած ի՞նչ կ'ար-
դիլէ :

Պ. Ընդդէմ մաքրութեան եղած ամէն
գործք կ'արդիլէ, թէ արտաքին և թէ ներ-
քին մասց հաւանեութեամբ : Աւ այս պա-
տուիրանիս գէմ եղած ամէն մեղք ծանր է :

Հ. Մաքրութեան գէմ գործքերը ու
մասցութիւնները միայն արդելած են :

Պ . Արդելած են նուև մաքրութեան առաքինութեանը դէմ մեղքի գրգոօլ խօսքեր , երդեր ու գիրքերը : Եւ այս տեսակ մեղքը Խօսուծոյ շատ ատելի է , որ շատ անգամ այս աշխարհքիս մէջն ալ սոսկալի պատուհաններով պատժեր է :

Հ . Խյո մեղքին դէմինչ դեղ կայ :

Պ . Ազօթք , սուրբ խորհրդոց մերձենալ , սղանք , և ուրիշ մարմնոյ մահացուցմունքներ , և յառթից փախչիլ :

Հ . Մեղք է կամաւորապէս ինք զինքը մերձաւոր առթի մէջ գնելը , զոր օրինակ վնասակար ընկերութեան մէջ մանալով . թէպէտ և մէկը փորձութեան ալ դէմ կենայ :

Պ . Հրամեր էք . վասն զի յանդգնութիւնն ու յանձնապատանութիւնն ալ մեղք է :

Հ . Թէ որ մէկը անխորշելի առթի մը մէջ գտնուի , ի՞նչ պիտի ընէ :

Պ . Խելացի հոգեոր հօր սիրաը բանայ , զգայարանացը վրայ , մանաւանդ աչացը վրայ արթուն կենայ . ու շատ անգամ ազօթք ընէ ու սուրբ խորհրդոց մերձենայ :

իդ.

Եօրներորդ և Ուրերորդ պատուիրան .

Հ . Մի գողանար ըսելով Աստուած ի՞նչ
կ'արդիլէ :

Պ . Ընկերոջը ունեցածին ամեննեին վնաս
մը չհասցընել :

Հ . Քանի՞ կերպով այս պատուիրանիս
դէմ մեղք կրնայ ըլլալ :

Պ . Շատ կերպով , բայց գլխաւորապէս
յափշտակութեամբ , գոզութեամբ , վաշ-
խով և ուրիշ անիրաւութեամբք :

Հ . Գողցած բանը ո՞րչափ պիտի ըլլայ ,
որ մահուչափ մեղք ըլլայ :

Պ . Այս բանս սկսրագաններէն կը կա-
խուի . վասն զի աղքատէ մը քիչ մը բան
գողնալը այնչափ ծանը մեղք է , ի՞նչպէս որ
մեծատունէն մէկը շատ բան գողնար :

Հ . Մէկն որ ընկերոջմէն բան գողնայ
կամ ընկերոջը վնաս հասցընէ , ի՞նչ պարտք
կ'ունենայ :

Պ . Պէտք է որ գողցած բանը ետ գար-
ձնէ , ու ըրած վնասին ճարը գտնայ :

Հ . Մէկն որ ուրիշին բանը գտնայ նէ
ի՞նչ պիտի ընէ :

Պ . Տէրը վինաղռւէ , ու տիրոջը տայ . ու
թէ որ մեռած է , անոր ժառանգներուն :

Հ . Թէ որ խել մը առեն տէրը վինաղռւէ-
լէն ետև՝ չդանուի նէ , ի՞նչ պէտք է ընել :

Պ . Ապահովը է . գտնած բանը աղքատ-ներուն տալ :

Հ . Այս պատուիրանը չփողնամլ միայն կը հրամայէ :

Պ . Կը հրամայէ նաև , որ մարդ իր ունեցածէն կրցածին չափ իր կարօտ ընկերոջն ալ այս . և այս կ'ըսուի պատուիրան ողորմածութեան :

Հ . Ուրեմն աղքատաց ողորմութիւն ընելը միայն խրատ չէ :

Պ . Չէ . հապա պատուիրան ալ է , որով Աստուած կը հրամայէ իրարու օգնել :

Հ . Մի սուպ վայեր ըսելով Աստուած ի՞նչ կ'արգիլէ :

Պ . Այս պատուիրանով կ'արգիլէ որ մեր ընկերոջը անուանը վնաս չհասցընենք :

Հ . Մեր ընկերոջը անուանը ի՞նչ զնէս վնաս կը հասցընենք :

Պ . Զրադարտութեամբ ու չարախօսութեամբ :

Հ . Զրադարտութիւնն ի՞նչ է :

Պ . Ընկերոջը վրայ այնպիսի յանցանք ձգել՝ որ չը ըրած :

Հ . Ընկերը զրադարտով ի՞նչ պարտք ունի :

Պ . Անոր վրայ ըսածը ետ առնել , և եղած վնասին ճար ընել :

Հ . Զարախօսութիւնն ի՞նչ է :

Պ . Եղքօրը ըրած չար գործքը չփեացով ներուն յայտնել , որոնք պարտք ալ չունին այնպիսի գործքի մը ճար մը գտնալ :

Հ . Կրնայ օրինաւոր ըլլալ երբեմն եղօրը ըրած չար գործքը յայտնելը :

Պ . Հրամեր էք . երբոր հետեանքը վասն-
գաւոր ըլլայ : Վրիստոս կը հրամայէ որ Ե-
կեղեցւոյն ըառւի , այս ինքն անոնց՝ որոնց
որ պարագն է Ճարը դանալ :

Հ . Այս պատուիրանովս Աստուած ու-
ժեշինչ կ'արգիլէ :

Պ . Կ'արգիլէ որ ոչ միայն այնազիսի սուտ
քունք , որ մեր եզրօրը վնաս մը կրնայ բե-
րել , հապա նաև խօսակցութեան մէջ ամե-
նեին բերնէն ճշմարտութեան դէմ խօսք ըս-
հանել :

ԻԵ

Խնմերորդ և տասներորդ պատուիրան .

Հ . Մի շանիար ինո՞ւ ընիւշի + ըսելով Աս-
տուած ի՞նչ բան կ'արգիլէ :

Պ . Աստուած վեցերորդ պատուիրանու-
վը մաքրութեան դէմ գործքերը արգիլելին
ետև , այս պատուիրանովս ալ կ'արգիլէ որ
մէկը և ոչ փափաք ունենայ մոքրութեան
դէմ մեղքի :

Հ . Հապա այս խօսքովս ի՞նչ կ'արգիլէ .
Ես մը ամենայնի որ նորա է :

Պ . Նոյնակս այս պատուիրանքովս ալ
կ'արգիլէ որ մեր ընկերոջ բանը գողեալու
և ոչ մաքէ պիտի անցընենք . որ չպողնալն
ալ եօթներորդ պատուիրանովը արգելած
է Աստուած :

Հ . Արտելած է որ ուրիշի ամենալին մէկ
բանին չփափաքինք :

Պ . Կրնանք ուրիշի բանը առնելու վա-
փաքիլ , միայն թէ օրինաւոր կերպով ըլլայ .
զոր օրինակ թէ որ դնել ուղենանք . բայց
տագօրինաւոր կերպով ունենալու փափաքի-
լը՝ ամենայն կերպով արգելած է :

Հ . Ինչո՞ւ համար Աստուած մասնաւոր
կերպով իրեն դրած սպասուիրանացը դէմ
փափաքն ալ ու մտածութիւնն ալ կ'արգե-
լու :

Պ . Վասն զի գործքը փափաքէ ու մտա-
ծութենէ առաջ կու գայ . և թէ որ մէկը
մեղանչական մտածութեանց դէմ կենայ՝
մեղքի մէջ չինկնար :

Հ . Հապա ինչո՞ւ մարդկային օրէնքնե-
րը մարդուս գործքը միայն կ'արգելուն ու
կը սպասժեն և ոչ երբէք մտածութիւնը :

Պ . Վասն զի մարդիկ դրասուանց միայն
կը տեսնան . բայց որովհետեւ Աստուած ա-
մէն ներքին բան ալ կը տեսնայ , կ'ուզէ որ
մեր հոգին ալ սիրոն ալ իր աչքին առջեր
մաքուր ըլլայ :

Հ . Աստուծոյ սպասուիրանացը դէմ ա-
մէն մտածութիւն մեղք է :

Պ . Հրամեր էք . միայն՝ թէ որ ուղելով
երկայն բարակ կենանք մտածենք ու զուար-
ձութիւն մը զգանք . բայց թէ որ մաքեր-
նէս դուրս վարնանք ու դէմ կենանքնէ ,
մեղի վարձքի սպասձառ կ'ըլլայ :

Հ . Սովորաբար դէշ մտածութիւններ
ու չար ցանկութիւններ ի՞նչ բանէ առաջ
կու գան :

Պ . Ծուռութենէ ու գատարկութենէ .

անոր համար ծուլութիւնը մայր ախախց
կը զուրցուի :

Հ . Ինչո՞ւ գտատարկութենէն մոլութիւն-
ներ առաջ կուգան :

Պ . Վասն զի մարդկային սիրազ անանկ
ապականած է , որ միշտ դէպ 'ի չարը կը յօ-
ժարի , թէ որ օգտակար ու բարի բաներու
չղբաղի նէ :

Հ . Գէշ մտածութիւններու և չար ցան-
կութիւններու գէմազդու գեղը ո՞րն է :

Պ . Գլխաւորներէն մէկը՝ ժամանակիլ ա-
ղէկ բանի գործածելն է :

ԵԶ.

**Եկեղեցոյ սռաջին , երկրորդ և երրորդ
պատուիրանները .**

Հ . Աստուծոյ պատուիրաններէն զատ
ուրիշ պատուիրաններ ալ կա՞ն :

Պ . Հրամեր էք . Եկեղեցոյ պատուի-
րանները :

Հ . Եկեղեցոյ պատուիրաններն ալ պա-
հելու պարագ կա՞յ :

Պ . Հրամեր էք . Վասն զի Աստուծոյ որ
հայրերնիս է , սուրբ Եկեղեցին ալ մեր
մայրն է , որուն պիտի հնազանդինք :

Հ . Եկեղեցոյ պատուիրանները որո՞նք
են :

Պ . Մասնաւոր պատուիրաններ շատ կան-
քայց անոնցմէ զատ՝ գլխաւոր գիտավերը

այս չորսն են, զօր ամենայն հաւատացեալք
պարտական են պահելու:

1 Յաւուրս կիւրակեից և տօնից տեսա-
նել զպատարագ:

2 Խոստովանիլ դոնէ մի անդամ'ի տար-
ոջն:

3 Հաղորդիլ 'ի Զատկի յարութեան
Տեառն:

4 Պահել զպահս և զծոմապահս հրա-
մայեալս:

Հ. Առջի պատուիրանը ի՞նչպէս պէտք
է սպահել:

Պ. Կիւրակի ու տօն օրեր ամբովշ պա-
տարագ մը տեսնալ. ու չէ թէ միայն մարմ-
նով պատարագին ներկայ ըլլալ, հապա-
մագրութեամբ ու ջերմեանդութեամբ
տեսնալ:

Հ. Պատարագը ամբովշ սեպուելու հա-
մար ո՞ր մասին պէտք է դանուիլ:

Պ. Գոնէ Սուրբ Աստուածէն կամ Ա-
ւետարանէն մինչև Օրհնեալք եղերուք.
բայց անհոգութեամբ ամբովշ պատարագին
չգտնուիլը շատ մեղագրելի է:

Հ. Թէ որ մէկը կամաւորապէս միաքը
ցրուած կենայ պատարագին ատենը նէ,
պատարագ տեսած կը սեպուի:

Պ. Չէ, ու աւելի յանցաւոր կ'ըլլայ՝ թէ
որ խօսակցութիւնն ընէ, ու անսլարկեցաւ-
թեամբ կենայ:

Հ. Գոնէ երբեմնքարող ու հոգեոր կըր-
թութիւններ լսելու պարտք կայ:

Պ. Հրամեր էք. վասն զի թէ որ մէկը իր

պարագերը սորվելու փոյթ չունենայ նե ,
այնպիսւոյն տգիտութիւնը մեղադրելի է :

Հ . Եկեղեցին երկրորդ պատուիրանով
ինչ կը հրամայէ :

Պ . Կը հրամայէ , որ հաւատացեալք դո-
նէ տարին անդամ մը ապաշխարութեան
խորհրդոյն մերձենան :

Հ . Այս պարագը մարդուս ո՞ր տարիքէն
կը սկսի :

Պ . Երբոր բանավարութիւնը բացուի :

Հ . Ուրիշ դիպուածի մէջ ալ խոստովա-
նանք ըլլալու պարտք կայ :

Պ . Հրամեր էք . թէ որ մէկը սրբութիւն
պիտի առնէ , ու մահացու մեղքի խղճմը
տանք ունենայ , պէտք է խոստովանի . նոյն
պէս մահուան վտանգի մէջ ալ պէտք է խո-
տովանիլ :

Հ . Կատարեալ զղջումն ընելը բաւական
է :

Պ . Չէ . վասն զի Եկեղեցին վճռեր է , որ
առանց խոստովանելու՝ սրբութիւն չառնէ
մէկը , թէ որ մահացու մեղքի խղճմուանք
ունի , թէպէտ զղջացած ալ ըլլայ :

Հ . Եկեղեցին երրորդ պատուիրանով
ինչ կը հրամայէ :

Պ . Ամէն չափահան հաւատացելոց
պարտք կը դնէ , որ տարին դոնէ մի անդամ
Զատկին սրբութիւն առնեն :

Հ . Զատկին օրը պէտք է սրբութիւն
առնել :

Պ . Չէ . Ծաղկազարդէն մինչև Նոր կի-
րակի կրնայ ըլլալ . քահանայ քիչ եղած տե-
ղը՝ աւելի երկայն կրնայ ըլլալ այս միջոցը :

Հ. Թէ որ մէկը այս որոշեալ միջոցին սրբութիւն չկարենայ նէ առնել, ազատ կ'ըլլայ որ ուրիշ ատեն չառնէ :

Պ. Չէ. նոյն տարուան մէջ երբոր կարենայ, պէտք է որ մէկէն սրբութիւն առնէ :

Հ. Սրբութիւն առնելու պարտքը միայն Զատկին է :

Պ. Չէ. մահուան ատենը յետին թոշակն ալ առնելը պարտք է :

Հ. Տարին մի անգամ միայն խոստովանիք ըլլալը ու սրբութիւն առնելը բաւական է :

Պ. Եկեղեցւոյ պատուիրանը կատարելու համար բաւական է. բայց պակասութիւնները ուղղելու ու առաքինութեան մէջ առաջ երթալու համար բաւական չէ :

Հ. Ուրեմն Եկեղեցին ինչո՞ւ տարին մի անգամ միայն պարտք է դրեր :

Պ. Մի անգամ միայն պարտք գնելովը կը ցուցընէ Եկեղեցին թէ ո՞րչափ կը փափաքի որ սոէալ մերձենանք այս սուրբ խորհրդոցը :

Հ. Սրբապիղծ խոստովանութեամբ ու հաղորդութեամբ մարդ այս իր պարտքը կատարած կ'ըլլայ :

Պ. Չէ. մանաւանդ թէ որ մէկը այսպիսի սոսկալի մեղքի մէջ ինկնայ, մէկէն պիտի ջանայ որ նորէն խոստովանի, ու ջերմեռանդութեամբ սրբութիւն առնէ :

իէ .

Եկեղեցոյ չորրորդ պատուիրանը .

Հ . Եկեղեցին չորրորդ պատուիրանովը
լինչ կը հրամայէ :

Պ . Կը հրամայէ որ ամէն չորեքշաբթի և
ուշրբաթ ու ուրիշ հրամայեալ պահքի օրեր
մսեղէն ու կթեղէն չուտուի :

Հ . Ո՞ր տարիքէն պահք պահելու պարտ-
քը կը սկսի :

Պ . Թէ որ տղայ մը եօթը տարին անցնի ,
պահք պահելու պարտքը կը սկսի :

Հ . Ծոմապահութիւնն ի՞նչ է :

Պ . Արգելած կերակուրներէն հեռու
կենալէն զատ , օրը մի անգամ միայն կերա-
կուր ուտել :

Հ . Մեծ պահքը ո՞րն է :

Պ . Զատկէն առաջ քառասուն օրուան
պահքը :

Հ . Մեծ պահքը ո՞վէ հաստատեր :

Պ . Առաքեալք հրամայեր են Յիսուսի
տեսաւն մերոյ քառասուն օրուան պահքին
յիշատակը պահելու համար , և Զատկի տօ-
նին ու հաղորդութեան պատրաստուելու
համար :

Հ . Ի՞նչ կը նշանակէ մեծ պահոցն սկիզ-
բը մոխիր առնելը :

Պ . Որպէս զի լաւ մը հասկընանք թէ այն
օրերը ապաշխարութեան օրեր են , ու մա-

հուան մտածութեամբ մենք զմեզ յորդո-
րենք լաւ ապաշխարութիւն ընելու :

Հ . Ծոմապահութեան պարտքը ո՞ր տա-
րիքին կը սկսի :

Պ . Եկեղեցին հաստատեր է որ քսանիք-
մէկ տարուընէ ետքը սկսի ծոմապահու-
թեան պարտքը :

Հ . Մէկը եկեղեցական մեծաւորներու
հրամանաւ կրնայ պահքէ կամ ծոմէ ազատ
ըլլալ :

Պ . Հրամեր էք . միայն թէ օրինաւոր ու
հաստատուն պատճառ ունենայ ազատ ըլ-
լալու համար . չէ նէ սուտ պատճառներով
մարդ Աստուծոյ առջև ազատ ըլլար :

Հ . Թէ որ մէկը օրինաւոր պատճառաւ
պահքէ կամ ծոմապահութենէն ազատ ըլ-
լայ նէ , ուրիշ ի՞նչ պէտք է ընէ :

Պ . Պէտք է որ պահքին ու ծոմապահու-
թեան տեղը ողօրմութիւն և ուրիշ բա-
րեգործութիւններ ու մահացուցմունքներ
ընէ :

Ի՞ն .

Խորհուրդնք Եկեղեցւոյ .

Հ . Խորհուրդն ի՞նչէ :

Պ . Արտաքին ու զդալի նշան մը , որ ներ-
քին ու անզգալի շնորհք կը բերէ :

Հ . Խորհուրդը ի՞նչու արտաքին ու զդա-
լի նշան մը սիմառ ըլլայ :

Պ . Վասն զի մարդը հոգինէ ու մարմինէ բաղկացած ըլլալով՝ Աստուած կ'ուզէ , որ շնորհքն որ անտեսանելի է , այնպիսի նշանով մը մեր հոգւոյն ազդէ , որ մարմնոյ զգայաբանաց տակը ինկնայ :

Հ . Արտաքին նշանը ո՞րն է :

Պ . Նիւթն է ու չւն է : Մկրտութեան խորհրդոյն նիւթ կ'ըսուի ջուրը , իսկ ձև կ'ըսուի այն խօսքերն որ մկրտողը կը զուրցէ :

Հ . Խորհրդութները միշտ մեր հոգւոյն վրայ շնորհք կ'ազդեն :

Պ . Հրամեր էք . միայն թէ խորհրդութը ընդունողը աղէկ պատրաստութիւնն չունենալով իր կողմանէ արգելք մը չդնէ :

Հ . Առանց հարկաւոր պատրաստութեան խորհրդութ մը ընդունելը մեծ մեղք է :

Պ . Հրամեր էք . սոսկալի սրբապղծութիւն է :

Հ . Սրբապղծութիւնն ի՞նչէ :

Պ . Սուրբ բան մը դէշ կերպով դորժածէլ :

Հ . Խորհրդոյն ազդեցութիւնը մատակարարողէն ալ կը կախումի :

Պ . Չէ . այլ խորհրդութ մատակարարողը թէ մահուչափ մեղքի մէջ ըլլայ , թէ սուրբ ըլլայ , հաւասարապէս օդուտ կ'ընէ ընդունողին :

Հ . Ինչու համար խորհրդոյն ազդեցութիւնը մատակարարողէն կախում չունի :

Պ . Վասն զի խորհրդոյն պաշտօնեայն չէ թէ իր անուամբը խորհրդութ կը մատակարէ , հապա Յիսուսի անուամբը . և ին-

քըն Յիսուս է որ կը մկրտէ , կ'արձակէ , և
այլն :

Հ . Ուրեմն խորհուրդը մատակարարո-
ղը մեծ մեղքի մէջ ալ ըլլայ վնաս մը չը-
ներ :

Պ . Ինքը մեծ մեղք կը գործէ . բայց Աս-
տուած կամեցեր է որ իր մեղքը իրեն միայն
վնաս ընէ , և խորհուրդը ընդունող հաւա-
տացելոց վնաս մը չըլլայ :

Հ . Խորհուրդ մը վաւերական ըլլալու
համար մատակարարողին կողմանէ ինչ բան
հարկաւոր է :

Պ . Բաւական է որ խորհրդոյն սահ-
մանած նիւթը ու ձեզ 'ի գործ գնէ , ու գի-
տաւորութիւն ունենայ , որ ինչ որ կ'ուզէ
Եկեղեցին՝ ինքն ալ այն ընէ :

Ի՞՞ :

Դարձեալ՝ Խորհուրդը Եկեղեցոյ .

Հ . Գանի՞ են խորհուրդք Եկեղեցոյ :

Պ . Եօթն են :

Հ . Որո՞նք են :

Պ . Մկրտութիւն .

Դրոշմ .

Ապաշխարութիւն .

Հաղորդութիւն .

Վերջին օծումն .

Կարգ քահանայութեան .

Պատկ :

Հ . Եկեղեցւոյխորհուրդներն ովէ հաս-
աստեր :

Պ . Քրիստոս տէրն մեր քանի որ աշ-
խարհքս էր :

Հ . Առաքեալք կամ իրենց յաջորդները
ամեննեին խորհուրդ մը հաստատած չե՞ն :
Կամ չընկընար Եկեղեցին խորհուրդ մը վեր-
ցընել, կամ նոր խորհուրդ մը հաստատել :

Պ . Ամեննեին չէ . ամեն շնորհք բերող
խորհուրդները Յիսուս հաստատեց մարդ-
կան փրկութեանը համար, որ մինչև 'ի կա-
տարած աշխարհքի հաստատուն մնան :

Հ . Խորհուրդները մատակարարելու ա-
րարողութիւնները ովէ հաստատեր :

Պ . Եկեղեցին, որպէս զի պատկառան-
քով ու ջերմեռանդութեամբ ընդունինք
խորհուրդները :

Հ . Արարողութիւնները խորհուրդնե-
րուն բացարձակապէս հարկաւոր են :

Պ . Առանց հարկաւորութեան զանց առ-
նելը մեղք է . բայց արարողութիւնները
զանց առնելով ալխորհուրդը վաւերական
կըլլայ :

Հ . Ընդհանրապէս խորհուրդներուն պր-
տուղները ի՞նչ են :

Պ . Գլխաւորապէս աս երկուքն են . մէկ
մը՝ շնորհք բերել կամաձեցընել, մէկ մ'ալ
կան խորհուրդներ, որ շնորհաց հետ հո-
գւոյն վրայ անջնջելի կնիք մ'ալ կը տալա-
ւորեն :

Հ . Ո՞ր խորհուրդները շնորհք կը բերեն :

Պ . Ասոնք . Մկրտութիւն և Արաշխա-

բութիւն . բայց թէ որ ասպաշխարութեան խորհուրդը ընդունողը միայն ներելի մեղք ունենայ , այն ատենը չէ թէ շնորհք կը բերէ , հապա շնորհքը կ'աճեցրնէ :

Հ . Աս երկու խորհուրդները ի՞նչ կ'ըսուին :

Պ . Խորհուրդ մեռելոց կ'ըսուին . վասն զի մեղքով մեռելոց շնորհաց կեանիք կը պարգևեն :

Հ . Մէկալ հինգ խորհուրդները ի՞նչ կ'ըսուին :

Պ . Խորհուրդ կենդանեաց կ'ըսուին . վասն զի արժանաւորապէս ընդունելու համար այս խորհուրդները պէտք է շնորհաց մեջ ըլլալ :

Հ . Խորհուրդները ամէն ընդունողներուն հաւասարապէս շնորհք կու տան :

Պ . Մկրտութիւնը ամենայն տղայոց հաւասար շնորհք կու տայ . բայց չափահաները խորհուրդները ընդունելու ատեն իրենց պատրաստութեանը համեմատ շատ կամքիչ շնորհք կ'առնեն :

Հ . Ո՞ր խորհուրդները հոգւոյն վրայ կնիք կը տպաւորեն :

Պ . Աս երեքը . Մկրտութիւն , Դրոշմ , և կարգքահանայութեան :

Հ . Կնիքն ի՞նչ է :

Պ . Մէր հոգւոյն վրայ տպաւորած ճըշմարիտ ու սրբազան նշան մը , որ կը ցուցընէ թէ այն խորհուրդներովը մասնաւոր կերպով մը Աստուծոյ նուիրած ենք :

Հ . Ինչպէս որ մեղքով շնորհքը կը կոր-

սընցընենք նէ , ասանկ ալ կնիքը կը կորսընցընենք թէ չէ :

Պ . Ոչ երբէք . և չէ թէ միայն այս աշխարհքս , այլ և ոչ անդիի աշխարհք կնիքը կը կորսուի . ասոր համար այս իրեք խորհուրդը մարդ մի անդամ միայն կրնայ ընդունիլ :

Լ .

Մկրտութիւն .

Հ . Մկրտութիւնն ի՞նչէ :

Պ . Խորհուրդ մը Եկեղեցւոյ , որ սկզբընական մեղքը կը ջնջէ , և զմեզ Աստուծոյ ու Եկեղեցւոյ որդի կ'ընէ :

Հ . Մկրտութիւնը միայն սկզբնական մեղքը կը ջնջէ :

Պ . Թէ որ մկրտութիւնն ընդունովուներդորժական մեղք ալ ունենայ , անոր արատներն ալ կը մաքրէ , և ամենայն մեղաց սկատիմներէ ալ կ'ազատէ : Ուստի թէ որ մէկը մկրտուելէն ետքը մէկէն մեռնի , շխատկ արքայութիւն կ'երթայ :

Հ . Սկզբնական մեղաց ազգեցութիւնները մկրտութենէն ետքն ալ կը մնան , թէ չէ :

Պ . Հրամեր էք . որ Են տգիտութիւն , ցանկութիւն , և հիւանդութեանց ու մահուան Ենթակայ ըլլալ :

Հ . Ինչո՞ւ մկրտութիւնն զմեզ այս բաներէն չաղատեր :

Պ . Վասն զի Աստուած ասանկ կամեցեր է , որպէս զի յիշենք թէ մեղքի մէջ ենք ծնած . չէ նէ այս բաներէն ազատ կ'ըլլայինք . բայ ասկից՝ որպէս զի պատերազմելու ու վարձք վասարկելու առիթ ունենանք :

Հ . Ինչո՞ւ է այն սովորութիւնն որ աղաքը շուտ մը կը մկրտեն . ու չեն սպասեր՝ որ մեծնան ու բանավարութիւննին բացուի :

Պ . Որպէս զի սկզբնական մեղքէն շուտ ազատին , ու ըլլայ որ վտանգ մը ըլլայ չմը կը բարտուած մեռնելու :

Հ . Ուրեմն մկրտութիւնը ամենահարկա անը է :

Պ . Հրամեր էք . Եկեղեցւոյ առաջին խորհուրդն է . ու չմկրտուած Եկեղեցւոյ ուրիշ խորհուրդները ընդունիլ չըլլար . ու առանց մկրտութեան արքայութիւն չեր թըցուիր :

Հ . Ուրեմն թէ որ աղաք չմկրտուած մեռնին՝ ի՞նչ կ'ըլլան :

Պ . Յայտնի է որ արքայութիւն չեն երթար . բայց ուրիշ կողմանէ Եկեղեցին որոշ վճիռ մը չէ ըրած . շատ սուրբք ալ կ'ըսէն՝ թէ Աստուծոյ տեսութենէն միայն զըրկուած են և ուրիշ պատիժ չեն ունենար : Անոր համար ծնողք փոյթ պիտի ունենան որ չըլլայ թէ իրենց անհոգութեանը պատճառաւ՝ զաւկընին չմկրտուած մեռնի . չէ նէ իրենք շատ մեծ մեղք կը դործեն :

Հ . Թէ որ մէկը մահուան վտանգի մէջ չկարենայ մկրտուիլ , մկրտութեան տեղը ուրիշ բան կընայ բռնել :

Պ . Հրամեր էք . մկրտութիւն փափաքանաց ու մկրտութիւն արեան , ջրով մկրտութեանը տեղ կրնան բռնել :

Հ . Մկրտութիւն փափաքանաց ի՞նչ է :

Պ . Մեղացը վրայ ճշմարիտ ու կատարեալ զղջումն ունենալ , ու փափաքիլ ու առաջադրել որ մկրտուի՝ թէ որ յարմար առիթ մը ըլլայ :

Հ . Մկրտութիւն արեան ի՞նչ է :

Պ . Մկրտուելին առաջ հաւատքի համար մարտիրոս ըլլալ . ինչպէս որ Եկեղեցւոյ սկիզբը շատ սուրբեր եղեր են :

Հ . Ի՞նչպէս կը մկրտեն :

Պ . Մկրտուողին գլուխը ջուր կը լեցընեն , ու լեցընելու ատեն այս խօսքը կ'ըսեն . Ես մէրգէմ ստեղծածան հօր և Ուրբոյ և Հագայն սբոյ . կամ Մէրգի ծառաց յանուն հօր և Ուրբոյ և Հագայն սբոյ :

Հ . Մկրտելու համար ի՞նչ ջուր պէտք է դորժածել :

Պ . Բնական ջուր . ծովու եղեր է , գետի եղեր է , աղբիւրի կամ անձրեւի : Ու բաւական է որ ջուրը մկրտուողին գլխին վրայէն վաղէ : Բայց թէ որ մէկը մկրտելու համար արուեստական ջուր գործածէ , ինչպէս վարդի ջուր , մկրտութիւնը մկրտութիւն ըլլար : Կմանապէս վերի ըսած խօսքէն բառ . մը պակաս պիտի ըլլայ . չէ նէնորէն պէտք է մկրտել :

Հ . Ո՞վ կրնայ մկրտել :

Պ . Եսպիսկոսպոսը , կամ քահանայն . բայց հարկաւորութեան ատեն ամէն մարդ

կրնայ մկրտել, անոր համար պէտք է որ ա-
մէնքը մկրտելու կերպը գիտնան :

Հ. Թէ որ մէկը հերետիկոսէ կամ ան-
հաւատէ մկրտուած ըլլայ, մկրտութիւնը
մկրտութիւն կը սեպուի :

Պ. Հրամեր էք. բաւական է որ խոր-
հըրդոյն նիւթն ու ձեւը գործածած ըլ-
լայ, ու դիտաւորութիւն ունեցած ըլլայ
թէ Եկեղեցին ինչ որ կ'ուզէ, ինքն ալ այն
կ'ընէ :

Հ. Թէ որ տարակոյս ըլլայ մէկուն վրայ՝
թէ արդեօք ողջ է, կամ թէ մկրտուած է
արդեօք՝ չէ նէ չէ, ինչ ընելու է :

Պ. Պէտք է պայմանաւ նորէն մկրտել ու
ըսել. « Ենէ ողջ է», կամ Ան Ան Ան Ան
Էն Ան Ան Ան Հօր և Որդուայ և Հոգ-
ույն սրբուայ » :

Հ. Մահուան վտանգի մէջ հարկաւո՞ր
է որ Եկեղեցւոյ դրած աղօթքներով ու
արարողութիւններով կատարուի մկրտու-
թիւնը :

Պ. Չէ. բայց վտանգէն ազատելէն ե-
տեւ պէտք է արարողութիւնները վրան
կատարել :

Հ. Ինչո՞ւ մկրտուած տղուն կնքահայր
մը կ'ըլլայ :

Պ. Որպէս զի ինքը տղուն կողմանէ հա-
ւատքի դաւանումը ու մկրտութեան խոստ-
մունքները ընէ :

Հ. Մկրտութեան խոստմունքները որո՞նք
են :

Հ. Սատանայէն ու իր ամէն գործքերէն

ու փառքէն հրաժարիլ, ու Յիսուսի խրա-
տուցը հետեւիլ:

Հ. Կնքահայրը իր սանին պարագ մը
կ'ունենայ:

Պ. Հրամեր էք. թէ որ տղուն ծնողքը
անհոգ ըլլան, կնքահօրը պարագն է հա-
ւատքին Ճշմարտութիւնը ու ըրած խոստ-
մունքները իր սանին սորվեցընել:

Հ. Ինչո՞ւ մկրտելու ատեն տղուն սուբ-
բի մը անուն կը դնեն:

Պ. Որպէս զի տղուն պաշտպան ըլլայ,
և տղան ջանայ անոր վարքին նմանել:

Ա.

Դրոշմ .

Հ. Դրոշմն ի՞նչ է :

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մըն է, որով
Հոգին սուրբ մեր վրայ կու գայ ու զմեզ
կատարեալ քրիստոնեայ կ'ընէ, ու կը զօ-
րացընէ, որ մեռնելու վտանգի մէջ ալ
ինկնանք՝ Քրիստոսի սուրբ հաւաագը չու-
րանանք :

Հ. Փրկութեան հասնելու համար հար-
կաւոր է այս խորհուրդը :

Պ. Չէ. բայց թէ որ մէկը զանցաւու-
թեամբ չընդունի, կը մեղանչէ. վասն զի
Աստուծոյ շնորհքէն ինքը զինքը կը զիկէ :

Հ. Այս խորհուրդը երբ սէագ է ընդ-
ունիլ:

Պ. Արեւմտեան Եկեղեցւոյն սովորութիւնն է՝ որ բանավարութիւնը բացուածներուն կու տայ : Բայց արեւելեան Եկեղեցին տղան անմիջապէս մկրտելէն Ետքը դրոշմն ալ կու տայ :

Հ. Ի՞նչ է այս խորհրդոյն պատուղը :

Պ. Սրբարար շնորհքը կ' աւելցընէ , ու Հոգւոյն սրբոյ շնորհացը հազորդ կ' ընէ , որ հաւատքնիս հաստատուն պահենք , ու բարեպաշտութեան մէջ առաջ Երթանք :

Հ. Այս խորհրդը ընդունելու ի՞նչ պատրաստութիւն պէտք է :

Պ. Կախ մկրտուած ըլլալ , ու Ետքը հաւատքին գլխաւոր խորհրդները գիտնալ , ու մեղաց մէջ չըլլալ : Բայց որովհեաւ մեր Եկեղեցւոյն սովորութիւնն է , որ աղան մկրտելէն Ետեւ՝ անմիջապէս դրոշմն ալ կը տրուի , մկրտուած ըլլալը միայն բաւական է :

Հ. Դրոշմը ո՞վ կու տայ :

Պ. Արեւմտեան Եկեղեցւոյն մէջ միայն եպիսկոպոսը . բայց արեւելեան ազգաց սովորութիւնն է որ քահանային կու տայ :

Հ. Դրոշմ տալու ատենը ի՞նչ կ' ընեն :

Պ. Մաշտոցին մէջի աղօթքները ընելէն ետքը՝ դրոշմ տուողը մեռոնով Երախային Տակարը , աշուշները , ականջները .քիթը . բերանը , ձեռուշները , ոտուշները , կըռնակը ու սիրար խաչաձեւ կ' օծէ , ու այս խօսքս կ' ըսէ Հայոց անոյն հեղեաւ յանոսն Քըրիո պռսի 'ի վէրայ ո՞ո ի՞նի+ Երինատուը պարգեւացն Զ :

Հ. Մեռոնն ի՞նչ է :

Պ. Բազարութիւն մ' է որ ձիթով ու
բալասանով կը շնուրի , ու եպիսկոպոսը
աւագ հինգշաբթի օրը կ' օրհնէ :

Հ. Ինչո՞ւ խաչաձեւ կ' օծեն :

Պ. Որպէս զի գիտնանք թէ միշտ մեր
սուրբ հաւատքը համարձակ պիտի խօստո-
վանինք , ու քրիստոնեայ ըլլովնուս վրայ
շամքնանք :

Ա.Բ.

Ապաշխարուրիւն .

Հ. Ապաշխարութեան խորհուրդն ի՞նչ
է :

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մը , որով մկրո-
տութենէ ետքը գործած մեղքերնուս թո-
ղութիւն կ' առնենք :

Հ. Յիսուս այս խորհուրդը ե՞րբ հաս-
տառեց :

Պ. Երբոր ըստ Առաքելոց . « Առեւ
հագի սուրբ . ուր իտիշէ + յերիշի , նշիշի կո-
պէալ յերիշնս , և զար արյակիշէ + յերիշի՝ եւիշի
արյակիշալ յերիշնս » :

Հ. Ե՞րբ պէտք է այս խորհուրդս ընդ-
ունիլ :

Պ. Այս բանս Եկեղեցւոյ երրորդ պա-
տուիրանին մէջ ըսինք : Բայց մեր մահուան
ատենը անսասոյգ ըլլալով շատ անխելքու-
թիւն է որ մէկը մահուչափ մեղք ունենայ ,
ու այս խորհուրդս ընդունելը ուշացընէ :

Հ . Այս խորհրդոյն պառւղը ի՞նչ է :

Պ . Երեք գլխաւոր պառւղ ունի :

Հ . Առջևնը ո՞րն է :

Պ . Թէ որ մէկը արժանաւոր պատրաստութեամբ խոստովանի մահուչափ ու ներելի մեղքերը , բոլորին ալ թողութիւն կ'առնէ :

Հ . Երկրորդ ո՞րն է :

Պ . Մահուչափ մեղաց պատիմն որ յաւիտենական է , կը փոխէ ժամանակաւոր կ'ընէ :

Հ . Երրորդը ո՞րն է :

Պ . Թէ որ սրբարար շնորհքը կորանցուցած ըլլանիք , նորէն աս խորհրդոյս ձեռքովը նոյն շնորհքը կ'ընդունինք . նոյնպէս մահուչափ մեղք չգործած ինչ արդիւնիք որ ունէինք , նոյնն ալ նորէն կը շահինք , ու փորձութեանց ալ գէմ կենալու ուժ կ'առնենք :

Հ . Ապաշխարութեան խորհուրդը լաւ ընդունելու համար ի՞նչ պատրաստութիւններ հարկաւոր են :

Պ . Այս իրեքս . զզջումն , խոստովանութիւն , ու ապաշխարանաց վճարումն , կամ փափաք վճարելու :

Հ . Զզջումն ի՞նչ է :

Պ . Հոգւոյն ցաւը , ու գործած մեղքէն դանիլը , ու մէյ մ' ալ չգործելու համար հաստատ առաջադրութիւն :

Հ . Զզջումը քանի՞ կերպ կ'ըլլայ :

Պ . Երկու . կատարեալ ու անկատար :

Հ . Կատարեալ զզջումն ի՞նչ է :

Պ. Յաւ մը Աստուծոյ գէմ գործելուն
համար , որովհետեւ Աստուած անհուն
բարի ու կատարեալ է , և ըստ ինքեան ար-
ժանի , որ մենք ամէն բանէ վեր զինքը սի-
րենք , ու իրեն ծառայենք :

Հ. Անկատար զղջումն ի՞նչ է :

Պ. Աստուծոյ գէմ գործած յանցան
քին վրայ ցաւ՝ մեղաց ագեղութեանը պատ-
ճառաւ , կամ պատժի վախին պատճա-
ռաւ , որ անդիի աշխարհք Աստուած կը
պատժէ , կամ յաւիտենական կենաց զըր-
կելուն պատճառաւ :

Հ. Կատարեալ զղջումն ի՞նչ կ'ընէ :

Պ. Կատարեալ զղջումով ապաշխարու-
թեան խորհուրդն ալ ընդունած մեղաց
թողութիւն կ'ըլլայ . միայն թէ որ մէկը
մահուչափ մեղքի խղճմտանք ունենայ ,
պէտք է որ ետքը խոստովանի :

Հ. Անկատար զղջումը ի՞նչ ազդեցու-
թիւն ունի :

Պ. Զապաշխարովը կը պատրաստէ , որ
ապաշխարութեան խորհրդովը մեղացը թո-
ղութիւն ընդունի :

Հ. Թէ որ մէկը մահուան վտանգի մէջ
չկարենայ ապաշխարութեան խորհուրդը
ընդունել , անկատար զղջումով մեղքերը
չըքաւուիր :

Պ. Չէ . պէտք է որ կատարեալ զղ-
ջումն ունենայ . անոր համար ամէն խո-
տովանութեան մարդ պէտք է որ ջանայ որ
կատարեալ զղջումն ունենայ :

Հ. Խոստովանութիւն կատարեալ զըզ-
ման ի՞նչպէս ընելու է :

Պ. Այս կերպով . Ասառած իմ , կը ցաւիմ բոլորով սրտիւ , որ քեզի դէմ մեղք դործեցի . վասն զի դուն անհուն բարի ես , անհուն կատարեալ և անհուն սիրելի , ու մեղքէ բոլորովին կը զգուիս : Յիսուսի փրկչին իմոյ արդեամբը մեղացս թողութիւն կը խնդրեմ , և հաստատուն կամք կ' առաջադրեմ , որ քու շնորհքովդ՝ աւելի յանձն առնում մեռնիլ , քան թէ քեզի դէմ մեղք մը դործել :

ԼԳ .

Զηօռմն . Խոստովանորիւն .

Հ . Զղջումը թէ կատարեալ եղեր է և թէ անկատար , ի՞նչ յասկութիւններ սկիտի ունենայ :

Պ . Չորս . սկիտի ըլլայ ներքին , գերբնական , ընդհանուր ու ծայրագոյն , ու պէտք է որ ուղղութեան հաստատուն առաջադրութիւն ալ մէջը հասկըցուի :

Հ . Ի՞նչ ըսել է նէրդին :

Պ . Ըսել է թէ զղջումը խօսքով միայն սկիտի չըլլայ , հասպա սրտանց սկիտի ըզգանք . ու սկիտի մեղքէն զգուինք :

Հ . Ի՞նչ ըսել է գերբնական :

Պ . Ըսել է որ զղջումը շնորհքէ առաջ սկիտի գայ , ու այնապիսի պատճառէ մը որ մեղքի հաւատքը կը սորմեցընէ . բնական պատճառէ մը առաջ սկիտի չգայ :

Հ . Ի՞նչ կը նշանակէ ընդհանուր :

Պ. Կը նշանակէ թէ զղջումը ամենայն մեղաց վրայ պիտի ըլլայ . գոնէ մահուչափ ներուն վրայ . վասն զի թէ որ մէկ մեղք մը միայն դուրս հանուի , մէկալոնց վրայի զըդ ջումն ալ սուտ կ' ըլլայ :

Հ. Ինչո՞ւ համար :

Պ. Վասն զի ամէն մեղք ալ Աստուծոյ սիրոյն գէմ ըլլալով , պէտք է որ մարդ ամենէն ալ զզուի :

Հ. Ի՞նչ ըսել է ծայրադոյն :

Պ. Ըսել է թէ մեղաց վրայ զգացած ցաւը ամէն ցաւէ վեր պիտի ըլլայ , ու մեղքը ամէն խառնէ աւելի ծանր լիսաս պիտի սեպէնք :

Հ. Պէտք է որ մեղաց ցաւն ալ անանկ զգալի ցաւ ըլլայ , ինչպէս որ է հօր մօր մեռնելու ցաւը :

Պ. Չէ . վասն զի այդ ցաւը արտաքին ըլլալով , զգայարանաց վրայի տպաւորութիւնն ալ աւելի սասափիկ կ' ըլլայ . հապաբաւական է որ ներսուանց ամէն բանէն աւելի ցաւինք ու զղջանք , որ Աստուծոյ գէմ գործք ենք ըրեր :

Հ. Հաստատուն առաջադրութիւնն ի՞նչ է :

Պ. Զմեղ ուղղելու հաստատուն կամքը . և անոր համար ինչ հարկաւոր հնարքներ որ կան՝ պէտք է 'ի գործ գնենք :

Հ. Ի՞նչ պատճառաւ շատերը ապաշխարութեան խորհրդովը իրենց մեղացը թողութիւն չեն առներ :

Պ. Շատ անգամ՝ զղջումն , ու մէյ մ' ալ

մեղք չգործելու անկեղծ առաջադրութիւնն ըստնենալինուն համար :

Հ . Ճշմարիտ զղման ստոյդ նշանը ո՞րն է :

Պ . Ջանիքն որ ապաշխարովը ինքը զինքը շտկելու համար կ'ընէ :

Հ . Թէ որ մէկը նորէն մեղքի մէջ ինկնայ՝ կրնայ ըստիլ թէ առաջադրութիւնը անկեղծ չէ եղեր :

Պ . Չէ . վասն զի ապաշխարութեան խորհուրդը անմեղանչական ըներ զմեզ . բայց թէ որ մէկը շատ անդամ ու շուտ մը մանաւանդ ծանր մեղաց մէջ ինկնայ , պէտք է վախնայ , որ իր զզջումն ու առաջադրութիւնը անկեղծ չեն եղեր :

Հ . Խոստովանութիւնն ի՞նչ է :

Պ . Մեղաց ամբաստանութիւնն որ մարդքահանային կ'ընէ որ արձակումն առնէ :

Հ . Ի՞նչ պէտք է որ մարդ արձակումն առնելու համար մեղքերը քահանային ըաէ :

Պ . Վասն զի խոստովահայրն որ մեղքերէ կապելու ու արձակելու իշխանութիւն ունի , մինչեւ որ մեղքերը չիմանայ , իր իշխանութիւնը չկրնար գործածել :

Հ . Խոստովանանքէն առաջ ի՞նչ պէտք է ընէլ :

Պ . Պէտք է խղճմտանքը քննել որ մարդգործած մեղքերը միտք բերէ :

Հ . Ի՞նչպէս պէտք է մարդ խղճմտանքը քննել :

Պ . Կայելով օր Աստուծոյ ու Եկեղեցւոյ պատուիրանաց գէմ բան մը ըրելու է , ու

իր վեճակին մէջ ինչ պարտք որ ունի առ
Աստուած , առ ընկերն և առ անձն՝ կա-
տարե՞ր է :

Հ . Խղճմտանքի քննութիւնը լաւ ըլլա-
լու համար ի՞նչ զպէս պէտք է ընել :

Պ . Չափաւոր ատեն մտածելով ու Աս-
տուծմէ շնորհք խնդրելով որ մեղքերնիս
ճանչնանք , ու վրան զվաճնք :

Հ . Քննութենէն ետքը զվաճումը պէտք
է ընել , չէ նէ խոստովանանքէն ետքը :

Պ . Հարկաւոր է որ մարդ զզչումն ալ
առաջադրութիւնն ալ անմիջապէս քըն-
նութենէն ետքը ընէ :

Հ . Ո՞ր մեղքերը բացարձակապէս պէտք
է որ մարդ խոստովանի :

Պ . Եմէն միաքը եկած մահուչափ մեղ-
քերը :

Հ . Բաւական է որ մարդ ընդհանրա-
պէս ըսէ՛ թէ այս մելքը գործեցի :

Պ . Չէ . Հապա պէտք է ըսէլ մեղքին
թիւն ու սլարագաներն ալ , որ մեղքին
տեսակը կը փոխեն , կամ խոստովանահօրը
լաւ դատաստան ընելու լոյս կուտան :

Հ . Այս բանս օրինակով մը բացատրէ :

Պ . Օրինակի համար . բաւական չէ ըսէ-
լը թէ սուտ մը ըսի , հապա պէտք է ըսէլ
ալ թէ այն սուտը ընկերոջս իսաս մը հա-
սուց : Բաւական չէ ըսէլ թէ գողութիւն
ըրի , հապա պէտք է ալ ըսէլ թէ ըսած
գողութիւնը ծանր էր թէ չէ , և որչափ
կ'աժէ գողցած բանը , ու թէ որ եկեղեցւոյ
բան ըլլայ , այն ատենը սրբապղծութիւն
ալ կ'ըլլայ :

ԼԴ.

Խոստովանութիւն և Արձակումն .

Հ . Ներելի մեղքերն ալ պէտք է խոստովանիլ :

Պ . Շատ օգտակար է խոստովանիլ :

Հ . Մէկն որ մեղքի մը վրայ տարակոյսունենայ՝ Բ'նչ պիտի ընէ :

Պ . Թէ որ տարակուսի թէ արդեօք մահուչափ է , պէտք է որ խոստովանի :

Հ . Մէկն որ խոստովանութեան միայն ներելի մեղք ունենայ , պէտք է որ զզջայ :

Պ . Հրամեր էք . պէտք է որ զզջայ և առաջադրութիւն ընէ որ մէյ մ' ալ՝ գոնե կամաւորապէս՝ այն մեղքերը չդործէ , ու ջանայ որ հետ զհետէ թիւը պակաեցընէ :

Հ . Թէ որ մէկը ամընալուն կամ լաւքնութիւն ընելուն մահուչափ մեղք մը շխոստովանի նէ , վաւերական կ' ըլլայ խոստովանութիւնը :

Պ . Ոչ երբէք . պարապ կ' ըլլայ խոստովանութիւնը , մանաւանդ թէ սրբապղծութիւն կ' ըլլայ :

Հ . Ուրեմն Բ'նչ պէտք է ընել :

Պ . Պէտք է որ ամէն մեղքէ առաջ պահած մեղքը խոստովանի , ու ըսէ թէ Բ'նչ պատճառի համար պահեր է . ու սրբապղծ խոստովանութիւնները պէտք է որ նորէն ըլլայ :

Հ . Յէ որ մէկը ակամայ մահուչափ
մեղք մը մոռնայ նէ , խոստովանութիւնը
սրբապիղծ կ'ըլլայ :

Պ . Չէ . բայց ետեւի խոստովանութեան
մէջ պէտք է մոռցած մեղքը խոստովանի :

Հ . Ի՞նչապէս պէտք է խոստովանանք ըլ-
լալ :

Պ . Անկեղծութեամբ , մեղքերը ոչ պըզ-
տիկցընելով և ոչ մեծցընելով , ու խոնար-
հութեամբ ինքը զինքը յանցաւոր սեպելով ,
ու պարկեշտութեամբ մեղքերը զուրցել :

Հ . Մեղքերը ըսելէն ետքը ի՞նչ պէտք
է ընել :

Պ . Խոստովանահայրն ինչ որ ըսէ՝ հե-
ղութեամբ մտիկ ընել , ու զդժմամբ ու
յարգութեամբ արձակումն առնել :

Հ . Կրնայ խոստովանահայրն երեւմն
արձակումն չտալ :

Պ . Հրամեր էք . երբոր տեսնայ որ խոս-
տովանորդին պէտք եղած պատրաստու-
թիւնը չունի . զոր թէ արձըկելու ըլլայ ,
ինքն ալ խոստովանորդին ալ դատապար-
տութեան արժանի կ'ըլլան :

Հ . Խոստովանահայրն որ արձակումն
չտայ , խոստովանորդին ի՞նչ պիտի ընէ :

Պ . Պիտի հնազանդի , և ջանայ որ լաւ
պատրաստութիւն տեսնայ . և ինչ ատեն որ
ըսեր է խոստովանահայրը՝ դառնայ նորէն
խոստովանանք ըլլայ :

Հ . Խոստովանահայրը մեղքերը ծածուկ
պահելու պարտք ունի :

Պ . Հրամեր էք . ամենայն աստուածայ .

ին և մարդկային օրէնք այս պարտքը սաստիկ կը գնեն : Եւ չէ թէ միայն խոստովանահայրը, հապա թէ որ ուրիշ մ'ալ դիպուածով մէկուն խոստովանած մեղքը լսէ, նոյնապէս կը պարտաւորի ծածուկ պահել:

Ե.

Ապաշխարանք և Ներողուրիւն .

Հ. Ապաշխարանքն ի՞նչ է :

Պ. Խոստովանահօր մեղաց քաւութեանը համար դրած պատիժը :

Հ. Ուրեմն ապաշխարութեան խորհրդով մկրտութեան պէս ամէն մեղաց պատմին թողութիւն չըլլար :

Պ. Չէ . Աստուծոյ արդարութիւնը այս խորհրդովս մեղքը ու յաւիաենական պատիժը կը ներէ . բայց կ'ուզէ որ մեղացը համեմատ ժամանակաւոր ապաշխարանք մը քաշենք :

Հ. Թէ որ մէկը խոստովանահօր դրած ապաշխարանքը չկատարէ, խոստովանութիւնը վաւեր կ'ըլլայ :

Պ. Թէ որ միտքը դրած ըլլայ որ ապաշխարանքը չկատարէ, անվաւեր է խոստովանութիւնը . իսկ թէ որ միտքը դրած ըլլայ որ կատարէ, բայց անհոգութեամբ չկատարէ նէ, խոստովանանքը վաւեր է, բայց մեղք կը գործէ . ուստի պէտք է որ խոստովանանք ըլլալու ատեն այն մեղքն աւ յիշէ :

Հ. Արձակումն առնելէն առաջ պէտք է որ ապաշխարանքն ըրած ըլլայ :

Պ. Չէ. բաւական է ապաշխարանքը կատարելու կամք ունենալ . և ետքը պէտք չէ ուշանալ, մէյմը՝ որ ըլլայ թէ մոռցուի, մէյմ'ալ՝ որ քանի որ մարդ շնորհքի մէջ է՝ լաւ է որ ապաշխարանքն ալ կատարէ :

Հ. Թէ որ մէկը իր ընկերոջը վնաս մը հասուցած ըլլայ՝ թողութիւն գտնալու համար բաւական չէ՝ քանի մը աղօթք ընել կամ ապաշխարանք մը կատարել :

Պ. Չէ. տուած վնասին պէտք է փոխարէնը ընել, թէ սատակ եղեր է, թէ անուն, ինչ կերպով որ խոստովանահայրը կը կարգաւորէ :

Հ. Թէ որ մէկը դրած ապաշխարանքը չկարենայ կատարել, ինչ պէտք է որ ընէ :

Պ. Պէտք է խոնարհութեամբ խոստովանահօրը հասկըցընէ . բայց այս ալ իրաւէ՝ որ ով որ ճշմարիտ զզջմունք ունենայ, ամէն ապաշխարանք թեթեւ կը սեպէ, ու մանաւանդ իր կողմանէ նոր ապաշխարանք ալ ինքն իրեն կը գնէ իր մեղացը քաւութեանը համար :

Հ. Ուրեմն խոստովանահօրը դրած ապաշխարանքը ամբողջ կատարելը բաւական չէ մեղքերը բոլորովին քաւելու :

Պ. Չէ. Եկեղեցին ալ հին ատենուան ապաշխարող մեղաւորաց ծանր ու երկայն ապաշխարանքները ու պատիժները թեթեցուց նէ, ազատ չըրաւ որ մեր կողմանէ Աստուծոյ տրդարութեան փոխարէնը չընենք :

Հ. Ի՞նչ կը հանդիսի անոնց որ այս
աշխարհքս Աստուծոյ արդարութեան փո-
խարէնը չեն վճարեր :

Պ. Քաւարանի մեջ սաստիկ պատիժ կը
քաշեն . այս աշխարհքս ալ շատ անգամ
նորէն նոյն մեղքերուն մեջ կ'ինկնան :

Հ. Այս աշխարհքիս նեղութիւնները
ապաշխարանքի տեղ կ'անցնին :

Պ. Հրամեր էք . թէ որ խոնարհու-
թեամբ ու համբերութեամբ քաշենք :

Հ. Մեր վիճակին աշխատութիւններն
ու պարտքերն ալ ապաշխարանքի տեղ
կ'անցնին :

Պ. Հրամեր էք . միայն թէ անհոգու-
թեամբ ու ժամանակաւոր շահու համար
չկատարենք . հապա մտադրութեամբ ու
Աստուծոյ հաճոյ ըլլալու համար , ու իր
արդարութեան փոխարէնը վճարելու հա-
մար :

Հ. Այս աշխարհքս մեր մեղաց պատիժը
քաւելու համար Եկեղեցին ուրիշ միջոց
ալ դրե՞ր է :

Պ. Հրամեր էք . ներողութեանց գանձը :

Հ. Ներողութիւն ի՞նչ ըսել է :

Պ. Մեղաց համար ժամանակաւոր պա-
տիժներու թողութիւն , որ թէ որ լիակա-
տար ներողութիւն ըլլայ՝ ամեն պատժոց
թողութիւն կը գտնանք . իսկ թէ որ լիա-
կատար ըլլայնէ , պատժոց մէկ մասին միայն
թողութիւն կը գտնանք :

Հ. Ներողութիւնը ի՞նչ բանի վրայ հա-
տատուած է :

Պ. Եկեղեցւոյ իշխանութեան վրայ , որ
կրնայ Յիսուսի անհուն արդիւնքը ու սուրբ
Աստուածածնայ ու սրբոց արդիւնքը հա-
ւատացելոց մերձեցընել :

Հ. ‘Սերողութիւն շահելու համար ի՞նչ
կը պահանջուի :

Պ. Մէյ մը՝ որ մարդ Աստուածոյ շնոր-
հաց մէջը գտնուի , մէյ մ' ալ որ ներողու-
թեան կոնդակին մէջ ինչ որ հրամայած է՝
Ճիշդ պէտք է կատարել :

Հ. Կ՞նչալէս պէտք է որ մարդ Աստու-
ծոյ շնորհացը մէջ գտնուի :

Պ. Պէտք է որ նախ մեղաց թողութիւն
գտնալով Աստուածոյ հետ հաշտուած ըլ-
լայ , որ ետքը մեղացը պատժին ալ կարե-
նայ ներումն գտնալ :

Հ. ‘Սերողութիւնը ուրիշ ապաշխարանիք
ներէն ազատ կ'ընէ :

Պ. Չէ . մանաւաւանդ թէ Եկեղեցւոյ դի-
տաւորութիւնն այն է , որ զմեզ ապաշխա-
րանք ընելու յորդորէ . իսկ ներողութիւնը
մեր տկարութեանը պակսութիւնը լցոցնե-
լու համար է :

L9.

Հաղորդուրիւն .

Հ. Հաղորդութիւնն ի՞նչ է :

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մըն է ; որ
հացին ու գինւոյն աեսակին կամ արտա-

քին երեւութին տակը իրապէս ու ճշմար-
տութեամբ կը բովանդակէ տեառն մերոյ
Յիսուսի մարմինը , արխւնը , հոգին և աս-
տուածութիւնը :

Հ . Տեսակ կամ արտաքին երեւոյթ ը-
սելով ի՞նչ կը հասկըցուի :

Պ . Կը հասկըցուի այն բանը որ մեր ըզ-
գայարանիքներովը կ'իմանանք , ինչու գոյ-
նը , ձեւը ու համը :

Հ . Յիսուս այս խորհուրդը երբ հաս-
տատեց :

Պ . Աւագ հինգշաբթի իրիկուն իր չար-
չարանաց օրէն օր մը առաջ , երբոր ինքը
հացն ու գինին իր մարմինը ու արիւնը
դարձուց . և Առաքելոց ալ իշխանութիւնն
առաւ որ նոյն բանը ընեն :

Հ . Եկեղեցւոյ մէջ այս իշխանութիւնը
որուն անցած է :

Պ . Միայն քահանայից :

Հ . Քահանայն սրբագործութեան բա-
ռերը ըստած նշխարքն ի՞նչ է , ու սկիհին
մէջ ի՞նչ կայ :

Պ . Նշխարքը միայն հաց է , և սկիհին
մէջ գինի ու քիչ մը ջուր կայ :

Հ . Քահանայն սրբագործութեան բա-
ռերը ըստէն ետեւ ի՞նչ կըլլայ :

Պ . Հացը կը փոխուի Քրիստոսի մարմի-
նը կ'ըլլայ , գինին ալ արխւն Քրիստոսի .
ու անկէց ետեւ միայն հացին ու գինւոյն
դուրսէն երեւոյթը կը մնայ :

Հ . Եկեղեցին այս հրաշալի խորհուրդը
ի՞նչ կ'անուանե :

Պ . Գոյացածնիւնիւն , որ է ըսել թէ գոյացութիւն մը կը փոխուի ուրիշ գոյացութիւն մը կ'ըլլայ : Եւ այս բանս կ'ըլլայ Յիսուսի խօսքերուն ամենակարող զօրութեամբը , զորոնք քահանայն յանուն Յիսուսի կը զրուցէ :

Հ . Հաղորդութեան մէջ ի՞նչպէս է Յիսուսի մարմինը :

Պ . Ճշմարիտ մարմին , այն որ 'ի սուրբ Աստուածածնայ ծնաւ , ու մեզի համար խաչ ելաւ , ու յարութիւն առաւ , ու հիմա արքայութիւնն է :

Հ . Յիսուս Հաղորդութեան մէջ գալու առեն երկինքն կը հեռանայ :

Պ . Չէ . նոյն վայրկենին թէ երկինքն է . և թէ ամենայն սրբագործեալ նշխարքներուն մէջ :

Հ . Ուրեմն նշխարքին մէջ միայն Յիսուսի մարմինն է ու բաժակին մէջ միայն արիւնը :

Պ . Յիսուս թէ նշխարքին մէջ և թէ բաժակին մէջ ամբողջ է . ու միայն նշխարքը ընդունելով արիւնն աւ ընդունած կ'ըլլանք . որովհետեւ Հաղորդութեան մէջ Յիսուս կենդանի է , ու մարմինը առանց արեան չըլլար , և ոչ արիւնը առանց մարմինյ :

Հ . Հապա ինչու քահանան նշխարքն ու բաժակը զատ զատ կը սրբացընէ :

Պ . Յիսուսի չարչարանաց և մահուանը յիշատակին համար , որպէս զի իմացընէ թէ Յիսուսի փրկչին մերոյ արիւնը չար-

շարանաց ատենը մարմինէն բաժնուեցաւ :
Եւ Հաղորդութիւնը այս խորհուրդը հրա-
շալի կերպով մեր աչքին առջեւ կը բերէ :

Հ . Թէ որ նշխարքն երկու կտոր ըլլայ ,
Յիսուսի մարմինն ալ երկու կտոր կ'ըլլայ :
Հ . Ոչ երբէք . հապա գուրսի երեւոյ
թը միայն երկու կտոր կ'ըլլայ : Եւ ամէն
մէկ կտորին մէջ ամբողջ է Յիսուսի մար-
մինը :

Հ . Ի՞նչպէս կարելի է որ ամբողջ մար-
մին մը պղտիկ նշխարքի մը մէջ ըլլայ , ու
նոյն վայրկենին բիւրաւոր տեղուանիք միան-
գամայն :

Պ . Այս ու ուրիշ հրաշքներ ալ , որ
սուրբ Հաղորդութեան վրայ կը տեսնուին ,
մեր խելքէն վեր են . բայց Աստուծոյ առ-
ջեւ անկարելի չեն , և Յիսուս՝ որ այս բանս
ըսաւ , և Եկեղեցին որ մեզի կը պատուիրէ
որ հաւատանիք , զմեզ չեն կրնար խաբել :

ԼԵ .

Մրտորիւն .

Հ . Հաղորդութեան մէջ ոլէաք է որ Յի-
սուսի երկրապատճիւն ընենիք :

Պ . Հրամեր էք . վասն զի իրօք ներկայ
է , ու սկսաք է որ միշտ իրեն երկրապատ-
ճիւն տանիք :

Հ . Յիսուս ինչո՞ւ Հաղորդութեան մէջ
ներկայ է :

Պ . Որպէս զի իրեն երկրապատճիւն
տալէն զատ՝ զինքը կարենանիք ընդունիլ :

Հ. Սրբութիւն առնելու պարագ կայ :

Պ. Հրամեր էք . վասն զի Յիսուս ըստ . ԵԱՆ ու ռադիշետ ովարմեն որդոյ մարդոյ՝ ու ունիշիտ իւսնա յանչինս :

Հ. Արժանաւորապէս Սրբութիւն առնելու համար ինչ պատրաստութիւն պէտք է ընել :

Պ. Երկու կերպ . ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ :

Հ. Ըստ մարմնոյ պատրաստութիւնը որն է :

Պ. Նախ որ ծոմ ըլլանք , որ է կէս գիշերուընէ բերաննիս ոչ ուտելու և ոչ խմելու բան առնենք . իսկ մահուան թոշակը կերակուր կերած ալ կ'առնուի : Երկրորդ որ հագուստնիս սլարկեցտ ու համեստ ըլլայ :

Հ. Ըստ հոգւոյ պատրաստութիւնը որն է :

Պ. Երկուք է . հեռաւոր ու մերձաւոր :

Հ. Հեռաւոր պատրաստութիւնը որն է :

Պ. Նախ՝ որ հաւատոյ խորհուրդները գիտնանք , մանաւանդ անոնք՝ որ այս սուրբ խորհրդոյս վրայօքն են . և երկրորդ՝ որ կեանքերնիս ջերմեռանդութեամբ ու բարեկարգութեամբ անցընենք :

Հ. Մերձաւոր պատրաստութիւնը որն է :

Պ. Առաջին և հարկաւորը՝ որ ամէն մահացու մեղքէ մաքուր ըլլանք . նոյնպէս պէտք է ջանանք որ ներելի մեղքերէ ալ մաքուր ըլլանք : Երկրորդ՝ որ սրբութիւն առնելն առաջ ու ետքը ինչ սլատշաճաւոր բան պէտք է ընել նէ ընենք :

Հ . Թէ որ մէկը մահացու մեղքի մէջ
ըլլալով Սրբութիւն առնէ նէ , Յիառասի
ոռւրբ մարմինը կ'ընդունի :

Պ . Հրամեր էք . բայց Յուդայի նման ,
իր դատապարտութիւնը կ'ընդունի , և սոս-
կալի սրբապղծութիւն կը դործէ :

Հ . Թէ որ մէկը Սրբութիւն առնելու
վայրկեանին միտքը գայ որ մահացու մեղք
մը խոստովանանք ըլլալու մոռցեր է , ի՞նչ
պէտք է ընէ :

Պ . Թէ որ ուրիշի մեծ դայթակղութիւն
ըլլար նէ՝ լաւ է որ ետ քաշուի , ու նախ
այն մեղքն ալ խոստովանի ու ետքը դայ
սրբութիւն առնէ . բայց թէ որ դայթակ-
ղութիւն կ'ըլլայ , պէտք է որ որչափ որ
ձեռքէն կու դայ ջանայ կատարեալ զըզ-
մունք ընելով սրբութիւնը առնէ , բայց
հաստատ առաջադրութիւն ալ ընելով որ
մէկէն խոստովանանք ըլլայ նոյն մեղքը :

Հ . Արժանաւոր սրբութիւն առնելուն
պտուղն ի՞նչ է :

Պ . Իրեք դլսաւոր պտուղ ունի :

Հ . Առջինը ո՞րն է :

Պ . Ամէն խորհուրդներէ եւել սրբարար
շնորհքը կ'աւելցընէ :

Հ . Երկրորդը ո՞րն է :

Պ . Հոգւոյն նոր ոյժ կու տայ բարեգոր-
ծութիւններ ընելու ու առաքինութեանց
մէջ առաջ երթալու . ինչպէս կերակուրը
մարմինը կը սնուցանէ ու կ'ուժովցընէ :

Հ . Երրորդը ո՞րն է :

Պ . Կերելի մեղքերը կը մաքրէ . ու մե-

դաց փորձութեանց ու առթից գէմ կենալու ուժ կու տայ :

Հ . Որովհետեւ Սրբութիւն առնելը մեր հոգւոյն այսչափ օգուտ կը բերէ , քիչ անդամառնելը կրնա՞նք բաւական սեպել :

Պ . Չէ . և ամէն բանեն օգտակարն է շատ անդամ Սրբութիւն առնելը , միայն թէ արժանաւոր պատրաստութեամբ ըւլայ :

Հ . Շատ անդամ Սրբութիւն առնելու համար , ինչպէս ութը օրը հեղ մը , մահու չափ մեղքէ միայն զգուշանալը բաւական է :

Պ . Սրբապղծութիւն ընելու համար բաւական է . բայց այսպիսի մեծ խորհրդոյ մը յարգը կը պահանջէ , որ ներելի մեղքերէ ալ զգուշանանք :

Հ . Անոնք որ գաղջութեամբ Սրբութիւն կ'առնեն , ամէն առջի ըսած պառելները կը քաղէն :

Պ . Այն պառեղները կը կախուին մեր ջանքէն ու ջերմեռանդութենէն՝ որով որ կը պատրաստուինք ու կ'ընդունինք աս սուրբ խորհուրդը :

Հ . Սրբութիւն առնելէն առաջ ի՞նչ պէտք է ընենք :

Պ . Կենդանի հաւաապ ունենանք ու խորին խոնարհութիւն , ու փափաք ու սէր առ տէր մեր Յիսուս :

Հ . Սրբութիւն առնելէն ետեւ ի՞նչ պէտք է ընել :

Պ . Քիչ մը ատեն սրտանց շնորհակալ ըլլանք ու մենք զմեզ Յիսուսին նուիրենք .

ու հարկաւոր առաջադրութիւններ ու խընդիրներ ընենք, և օրուան մէջն ալ շատ անդամ այդ մեծ շնորհքը միտքերնիս բերենք. ու չնմանինք անոնց որ առանց ջերմէ եռանդութեան մէկէն եկեղեցիէն դուրս կ'ելլան ու բոլոր օրով զբօսանքներով կ'անցընեն :

Ա. Լ.

Խորհուրդ արքոյ Պատարագի .

Հ. Հաղորդութիւնը միայն խորհուրդ Եկեղեցւոյ կը սեպուի :

Պ. Զէ. Հապանաեւնոր օրինաց զոհնէ :

Հ. Զոհն լինչէ :

Պ. Արտաքին բան մը Աստուծոյ նուիրել զինքը պատուելու, ու ներքին նուիրմունքը արտաքուստ ալ ցուցընելու համար, որով որ մենք զմեզ Աստուծոյ կը նուիրենք :

Հ. Հին օրինաց զոհերն լինչէին :

Պ. Այլ և այլ կենդանիներու նուիրմունք :

Հ. Այն զոհերը Աստուծոյ հաճոյ էին, և անով կ'ըլլա՞ր զԱստուած պատուել :

Պ. Նոր օրինաց զոհին պատկերը ըստ լով անով միայն հաճոյ կ'ըլլային Աստուծոյ, ու կը պատուեին զԱստուած :

Հ. Նոր օրինաց զոհը ո՞րն է :

Պ. Այն որ Յիսուս մեզի համար իր արիւնը թափելով ու խաչին սեղանոյն վրայ մեռնելով նուիրեց :

Հ. Այս զոհը հին օրինաց բոլոր զոհերը
վերջացրեց :

Պ. Հրամեր էք . վասն զի ճշմարտու-
թիւնն եկաւ ու շուքն ու օրինակը դադրե-
ցուց :

Հ. Քրիստոս մի անգամ խաչին վրայ
զոհ ըլլալով, ուրիշ ալ զոհ չըլլար :

Պ. Խաչին զոհը միշտ կ'ըլլայ և մինչեւ 'ի
կատարած աշխարհի միշտ պիտի ըլլայ պա-
տարագին զոհովը , որ նոյն զոհն է ինչ որ
խաչին վրայ կատարուեցաւ :

Հ. Ի՞նչպէս Պատարագին զոհը խաչին
վրայի զոհին հետ նոյն է :

Պ. Վասն զի այն մարմինն ու այն արիւնն
որ Քրիստոս խաչին վրայ զոհագործեց ,
նոյնը քահանայք կը զոհագործեն հացին
ու գինւոյն աեսակաւը :

Հ. Այս երկու զոհագործութեանց մէջ
տարբերութիւնն մը կայ :

Պ. Այս տարբերութիւնը միայն կայ՝ որ
խաչին զոհը արեամբ կատարուեցաւ , իսկ
պատարագին զոհը անարիւն է :

Հ. Պատարագին զոհը որո՞ւն կը մատու-
ցուի :

Պ. Միայն Աստուծոյ , ու Աստուծմէ
զատ ուրիշի մատուցանել չըլլար :

Հ. Հապա Աստուծածնայ ու որբոց
համար որ պատարագ կ'ըլլայ նէ , զոհը ա-
նոնց չըլլար :

Պ. Չէ . Հապա Աստուծոյ կը մատու-
ցուի , շնորհակալ ըլլալով ինչ շնորհք որ
Աստուծած այն սրբոց ըրեւէ , և ինչ շնորհ-

քի որ կարօտութիւն ունինք՝ անոնց բարեթոսութեամբն ընդունելու համար :

Հ. Այսպիսի սուրբ զոհագործութեան ի՞նչպէս պէտք է ներկայ ըլլալ :

Պ. Մեծ յարգութեամբ ու ջերմեռան գութեամբ, իբրեւ թէ խաչն զոհագործութեանը ներկայ ըլլայինք . և պէտք է որ մեր դիտաւորութիւնն ալ միաբանենք Յիսուսի և սուրբ Եկեղեցւոյ դիտաւորութեանը, որ այս զոհը մեզի համար կը մատուցանէ :

ԼԹԱ.

Վերջին օծումն, կարգ քահանայուրեան ու Պատկ .

Հ. Վերջին օծումն ի՞նչ է :

Պ. Խորհուրդ մը Եկեղեցւոյ, որ հաստատուած է հիւանդաց սիրտ տալու ու մնացորդ մեղաց թողութիւն տալու և սըրբութեամբ մեռնելու օգնելու համար :

Հ. Վերջին օծումը ի՞նչպէս սիրտ կուտայ հիւանդաց :

Պ. Կամ մարմնոյ առողջութիւն պարգևելով թէ որ իրենց յաւիտենական փրկութեանը օգտակար է նէ, կամ արիութիւն տալով որ հիւանդութեանը համբերէն :

Հ. Ի՞նչպէս մնացորդ մեղաց թողութիւն կուտայ :

Պ . Չքաւուած ներելի մեղաց քաւութիւն տալտվ . միայն թէ պէտք է որ հիւանդը բաւական զզջումն ունեցած ըլլայ . անգիտութեամբ գործած մահացու մեղաց ալ թողութիւն կու տայ :

Հ . Ի՞նչպէս սրբութեամբ մեռնելու կօգնէ :

Պ . Քաջալերելով հիւանդն , որ այն վայրկենին ինչ առաքինութիւն որ հարկաւոր է՝ ի գործ դնէ , և փորձութեանց դէմ դնէ , որ այն վայրկենին շատ վախնալու են :

Հ . Այս խորհուրդը ընդունելու բացարձակ պարագան կայ :

Պ . Չէ . բայց թէ որ մէկը ընդունելու անհոգ ըլլայ , յանցանք կը գործէ , ու մեծ օգնականութենէ կը զրկուի :

Հ . Այս խորհուրդը ընդունելու ի՞նչ պատրաստութիւն հարկաւոր է :

Պ . Աստուծոյ շնորհաց մէջ պէտք է ըլլալ . ու թէ որ կարելի է՝ խոստովանանք ալ ըլլալ . չէ՝ թէ որ կարելի չէ , զզջումն ընել . ու որչափ որ կրնայ ազօթքները քահանային հետ մէկտեղ ընել :

Հ . Բանավարութիւնը չբացուած արդու ալ այս խորհուրդը կրնայ տրուիլ :

Պ . Չէ . վասն զի մկրտութենէն ետքը մեղք գործած չեն , որ այս խորհրդովս քաւութիւն առնեն :

Հ . Կրնայ այն հիւանդներուն տրուիլ որ իրենք զիրենք կորանցուցած են :

Պ . Հքամեր էք . բայց ամէն մարդու ջանքն այն պիտի ըլլայ՝ որ խելքը դլուխը

ընդունի , որպէս զի կարենայ պառւզ
քաղել . չէ թէ մինչեւ ետքի վայրկեանը
թողուլ :

Հ . Վերջին օծումը կրնայ մարդ շատ
անգամ ընդունիլ :

Պ . Հրամեր էք . քանի որ մէկը վտան-
գաւոր հիւանդութեան մէջ որ գտուի՝ կըր-
նայ ընդունիլ . միայն թէ մէկ վտանգէն
մինչեւ մէկալը քիչ մը ատեն անցած ըլլայ :

Հ . Այս խորհուրդը ովլ կրնայ տալ :

Պ . Քահանայն :

Հ . Կարգն ի՞նչ խորհուրդ է :

Պ . Եկեղեցւոյ խորհուրդ մը , որով
մարդ իշխանութիւն ու շնորհք կ'ընդունի
եկեղեցական պաշտօնը արժանապէս կա-
տարելու :

Հ . Քահանայութեան կարգն ի՞նչ է :

Պ . Եկեղեցւոյ խորհուրդ մը , որ իշխա-
նութիւն կու տայ Յիսուսի մարմինն ու ա-
րիւնը սրբագործելու , ու կարգէն կամ
ձեռնադրութենէ զատ ուրիշ ամէն խոր-
հուրդները մատակարարելու :

Հ . Եպիսկոպոսութիւնը քահանայու-
թենէն զատ խորհուրդ է :

Պ . Չէ . հապա քահանայութեան լր-
րումն է :

Հ . Պատկին ի՞նչ է :

Պ . Խորհուրդ մը Եկեղեցւոյ , որ այր և
կին իրարու կը միացընէ , որ սրբութեամբ
ապրին , ու աստուածալաշտութեամբ ի-
րենց զաւկըները դասախարակեն :

Հ . Այս խորհուրդը ընդունելու հա-
մար պէտք է շնորհաց մէջ ըլլալ :

Պ . Հրամեր էք . ով որ մահուչափ մելաց մէջ ընդունի՝ սրբապղծութիւն կը դորձէ :

Հ . Մէկն որ բանութետմբ կամ առանց վկայի պսակուի՝ կ'ընդունի՝ այս խորհուրդը :

Պ . Չէ . պէտք է որ երկու կողմանէ ազատ հաւանութիւն ըլլայ , որն որ պէտք է արտաքին նշանով մը յայտնել . ու պէտք է որ պսակը ժողովրդապետին ու արժանահաւատ վկայից առջեւն ըլլայ . թէ որ ասանկ ըլլայ՝ պսակը վաւերական ըլլար :

Հ . Կրնայ այս խորհուրդը արձըկուիլ :

Պ . Ոչ երեէք . բայց միայն երկանը կամ կնկանը մահուամբ :

Խ .

Մեղք .

Հ . Մէղքն ի՞նչ է :

Պ . Աստուծոյ օրինացը անհնազանդութիւն :

Հ . Մէղքը քանի՞ տեսակ է :

Պ . Երկու . Սկզբնական ու Կերպործական :

Հ . Սկզբնական մեղքը ո՞րն է :

Պ . Այն որուն մէջն որ կը ծնանինք , ու Ագամայ մեր նախահօրը պատճառաւ մեզի անցաւ այս մեղքը :

Հ . Ամէն մարդ այս մեղաց աէքն է :

Պ . Հրամեր էք , բայց Տրիդենտեան ժո-

լովքը կը բացատրէ թէ ամենքը լսելով ժու-
ղովքին դիտաւորութիւնն այն չէ՝ որ Անա-
րատ Մայրն Աստուծոյ ալ մէջն հասկընայ:
Հ. Սկզբնական մեղքէն ի՞նչպէս կ'ազա-
տինք :

Պ. Մերտութեամբ :

Հ. 'Ներգործական մեղքը ո՞րն է :

Պ. Այն մեղքն որ մենք ազատութեամբ
մեր կամքովը կը գործենք :

Հ. 'Ներգործական մեղքը քանի՞ տե-
սակ է :

Պ. Երկու . մահուչափ ու ներելի :

Հ. Մահուչափ մեղքը ո՞րն է :

Պ. Այն որ մեր հոգին կը մեռցընէ ,
սրբարար շնորհքէն զնկելով որ մեր հոգ-
ւոյն կեանքն է , ու դժոխոց արժանի ընե-
լով որ յաւիտենական մահ է :

Հ. 'Ներելի մեղքը ո՞րն է :

Պ. Այն որով թէսլէտ Աստուծոյ շնորհ-
քը չենք կորացնցըներ , բայց սէրը կը պա-
ղեցընէ , ու զմեզ ժամանակաւոր պատժոց
արժանի կ'ընէ , զոր կամ այս աշխարհքո
կամ մահուընէ ետեւ քաւարանին մէջ
պէտք է կրենք :

Հ. Քանի՞ կերպով ներգործական մեղք
կրնայ գործուիլ :

Պ. Չորս կերպով . խորհրդով , բանիւ .
գործով ու զանցաւութեամբ :

Հ. Խորհրդով ի՞նչպէս մեղք կը գոր-
ծուի :

Պ. Երբոր մէկը ազատաբար մաքին մէջ
հաւանաւթիւն տայ այն բանին , որ Աստու-

ծոյ օրինացը գեմ է . զոր օրինակ եղբօրը
վնասուն փափաքիլ :

Հ . Զանցառութեան մելքն ի՞նչ է :

Պ . Հրամայած բան մը կատարելէն մարդ
իր յանցանքովը ետ մնալ . զոր օրինակ տօնի
օր պատարագ չտեսնալ :

Հ . Ի՞նչո՞ւ իր յանցանքովը կ'ըսես :

Պ . Վասն զի՝ օրինակի համար թէ որ
մէկը առանց իր յանցանքին չգիտնայ որ
տօնի օր է , կամ մէկ օրինաւոր արգելք մը
ունենայ , մեղք ըըլար թէ որ այն օրը պա-
տարագ չտեսնայ :

Հ . Երբեմն ուրիշի մեղքը մեզի կընայ
սեպուիլ :

Պ . Հրամեր էք . Երբոր մեր յանցանքովը
անոր մեղացը պատճառ եղած ըլլանք :

Հ . Քանի՞ կերպով ուրիշի մեղացը պատ-
ճառ կընանք ըլլալ :

Պ . Եօթը կերպով . չար օրինակով . չար
խրատով . գէշ գործք մը հրամայելով .
գէշ գործքի մը համելով . գէշ գործք ը-
նողը գովելով . գէշ գործք ընողին գործա-
կից ըլլալով . ու երբոր ձեռուենուս կու
գայ գէշ գործքը չարգելելով :

ԽԱ.

**Մահացու մեղք , ու Մեղք ընդդեմ
Հոգայի սրբոյ .**

Հ . Մահացու մեղքելը քանի՞ են :

Պ . Եօթը . Հպարտութիւն .

Նախանձ .

Բարկութիւն .

Ագահութիւն .

Ծուլութիւն .

Որկրամոլութիւն .

Բղջախոհութիւն :

Հ . Ինչո՞ւ մահացու կ'ըսուին :

Պ . Վասն զի ամէն մեղաց գլուխն ու
սկիզբն ըլլալով հոգեւորապէս հոգւոյն
մեռնելու պատճառ կ'ըլլան :

Հ . Հպարտութիւնն ի՞նչ է :

Պ . Ինքն իրեն վրայ անկարգ համարմունք
ունենալ , ու անանկով ուրիշներէն վեր
ուզել ըլլալ , և այն բարիքն որ մեր վրայ
կը տեսնանք՝ փառքը մենք մեզի տալ :

Հ . Նախանձն ի՞նչ է :

Պ . Ուրիշն աղէկութեանը վրայ տըխ-
րիլ , ու ձախորդութեանը վրայ ուրախա-
նալ :

Հ . Բարկութիւնն ի՞նչ է :

Պ . Սրախն անկարգ շարժմունքը , որով
սասաիկ կիրք կ'ելլանք թէ որ մեզի մվասա-
կար կամ տհաճելի բան մը լսենք կամ տես-
նանք :

Հ. Ագահութիւնն ի՞նչ է :

Պ. Անկարդ ախորժակ մը , փափաք մը
ժամանակաւոր հարստութեան ու բա-
րեաց :

Հ. Ծուլութիւնն ի՞նչ է :

Պ. Հանգելու անկարդ ախորժակ մը ,
որով մեր սպարտքերը կատարելու ձանձ-
րութիւն կու գայ մեղի ու սպարտքերնիս
տոքի տակ կ'առնենք :

Հ. Որկրամոլութիւնն ի՞նչ է :

Պ. Ուտելու ու խմելու անկարդ ախոր-
ժակ մը :

Հ. Բղջախոհութիւնն ի՞նչ է :

Պ. Գեշ ախտ մը , որ մարմնոյ ապօրինա-
ւոր զուարձութեան մեղ կը յորդորէ :

Հ. Հոգւոյն սրբոյ գէմ' եղած մեղքերը
որո՞նք են :

Պ. Այս վեցս . Յուսահատութիւն .

Յանդդնութիւն .

Ծանուցեալ ճշմարտութեան գէմ'
կենալ .

Ուրիշի շնորհացը վրայ նախանձ .

Մեղաց վրայ յամառիլ .

Վախճանական անզզօնութիւն :

Հ. Ո՞ր մեղքերը երկնքէն վրէժխըն-
դրութիւն կը բոլոքէն :

Պ. Դլասաւորները աս չորսն են .

Կամաւոր մարդասպանութիւն .

Աղքատը նեղը խոթել .

Վարձուորին վարձքը չտալ .

Գարշելի մեղքն , որուն համար եր-
կինքէն Սոդոմ գոտորին վրայ կրակ թա-
փեցաւ :

Հ . Ունակութեան մեղք ո՞րը կ'ըսուի :

Պ . Այն մեղքն որ մարդ այնչափ շատ մէջը կ'ինկնայ , որ ետքը խիստ շատ գժուարութիւն կը քաշէ ինքը զինքը շակելու . անոր համար պէտք է որ մարդ շատ փոյթունենայ չար սովորութեան դէմն առնելու , և շուտով ինքը զինքը շակէ :

Հ . Ո՞ր մեղքն է որ Չարութեան մեղք կ'ըսուի :

Պ . Այն մեղքն որ մարդ առաջուց մտածելով ու ուզելով կը գործէ խղճմանքին զարնելուն դէմ :

Հ . Տկարութեան ու չարութեան մեղքին մէջ ի՞նչ տարբերութիւն կայ :

Պ . Թէպէտ երկուքն ալ մեղք են , բայց չարութեան մեղքը աւելի ծանր է :

Հ . Տգիտութեան պատճառաւ մարդ մեղքէ ազատ կրնայ ըլլալ :

Պ . Թէ որ տգիտութիւնը իրաւցընէ անյաղթելի ըլլայ՝ մեղքէ ազատ կ'ըլլայ . բայց թէ որ մէկը կարենայ ու պարտական ըլլայ սորվելու ու չսորվի տգէտ մնայ , մեղքէ ազատ չէ :

ԽԲ .

Առաքինորիշնիք .

Հ . Փրկութեան համելու համար չար գործքէ միայն զգուշանալը բաւակա՞ն է :

Պ . Պէտք է աղէկ գործք ալ ընել ու առաքինութիւն վաստըկիլ :

Հ . Փրկութեան աւելի հարկաւոր եղած
առաքինութիւնները որո՞նք են :

Պ . Աստուածաբանական ու Գլխաւոր
ըսուած առաքինութիւնները :

Հ . Աստուածաբանական առաքինութիւնները որո՞նք են :

Պ . Այս իրեքս , Հաւատք , Յոյս , Սէր ,
ասմաց վրայ առաջները երկայն խօսեցանք :

Հ . Ինչո՞ւ այս առաքինութիւնները Աս-
տուածաբանական կ'ըսուին :

Պ . Ասման զի Աստուածմէ կու դան ու առ
Աստուած կը վերաբերին :

Հ . Որովհետեւ այս առաքինութեանց
խօսատովանութիւնը երբեմն երբեմն պէտք
է ընել , ընդհանրապէս հաւատքի խօսատ-
վանութեան կերպ մը ըսէ տեսնամ :

Պ . Տէր իմ և Աստուած իմ , հաստա-
տութեամբ կը հաւատամ՝ ինչ որ Սուրբ ,
Կաթուղիկէ , Առաքելական ու Հռոմէական
Եկեղեցին կը հաւատայ ու կը սորվեցընէ .
Վասն զի դուն՝ որ Ճշմարտութիւն ես , ու
ոչ կը խաբուիս և ոչ կը խաբես , բոլոր դուն
ես յայտնած :

Հ . Յուսոյ խօսատովանութիւնը ի՞նչապէս
կ'ընես :

Պ . Տէր իմ և Աստուած իմ , վատահու-
թեամբ կը յուսամ որ քու անխաբելի
խօսամամբ , ու Յիսուսի միրկչին իմոյ ար-
դեամբքը այս աշխարհիս մէջ ինձի պէտք
եղած շնորհը պարզեւես , ու անդին յա-
ւիտենական փառքգ :

Հ . Սիրոյ խօսատովանութիւնն ալ ըրէ
տեսնամ :

Պ . Տէր իմ և Աստուած իմ, բոլորով
սրաիւս ու ամէն բանե վեր կը սիրեմ զքեզ .
վասն զի անհուն սիրելի ու կատարեալ ես,
հազար անդամ կը փափաքիմ մեռնիլ քան
թէ մի անդամքեզի գէմմեզք գործել . նոյն
պէս քու սիրոյդ համար իմ անձիս պէս կը
սիրեմ իմընկերս ալ :

Հ . Քանի՞ են Գլխաւոր ըստւած առաքի-
նութիւնները ու որո՞նք են :

Պ . Չորս են . Խոհեմութիւն .

Արդարութիւն .

Արիութիւն .

Ժուժկալութիւն :

Հ . Խոհեմութիւնն ի՞նչ է :

Պ . Առաքինութիւն մը , որով կրնանքը ըն-
տրել թէ մեր վախճանին հասնելու ճշմա-
րիտ միջները որո՞նք են . այս ինքն , ինչ որ
չար բան է՝ հեռու կենալ , ու ինչ որ բարի
է՝ գործքով կատարել :

Հ . Արդարութիւնն ի՞նչ է :

Պ . Առաքինութիւն մըն է , որ կը սոր-
վեցընէ մեզի , որ ամէն մէկուն իրեն ինկա-
ծը տանք , Աստուծոյ , ընկերոջը ու մեր
անձին :

Հ . Արիութիւնն ի՞նչ է :

Պ . Առաքինութիւն մըն է , որ մեզի կը
սորվեցընէ դժուարութիւններու յաղթել,
ու Աստուծոյ օրէնքը պահելու համար պէտք
որ ըլլայ մեռնիլ ալ յանձն առնուլ :

Հ . Ժուժկալութիւնն ի՞նչ է :

Պ . Առաքինութիւն մըն է , որ մեր ամէն
փափաքանաց ու կրիցը սահմ ու կարգ գնել
կը սորվեցընէ :

Հ . Եօթը մահացու մեզաց ներհակ ա-
ռաքինութիւնները որո՞նք են :

Պ . Խոնարհութիւն՝ հպարտութե դէմ,
Եղբայրսիրութիւն՝ նախանձու դէմ, հե-
զութիւն՝ բարկութեան դէմ, առատաձեռ-
նութիւն՝ ագահութեան դէմ, եռանդն՝
ծուլութեան դէմ, պահեցողութիւն՝ որ-
կրամոլութեան դէմ, մաքրութիւն՝ բոլո-
խոհութեան դէմ:

Հ . Հոգւոյն սրբոյ պարդեւքը քանի՞ են
ու որո՞նք են :

Պ . Եօթն են . իմաստութիւն .

Հանձար .

Խորհուրդ .

Զօրութիւն .

Գիտութիւն .

Աստուածալաշտութիւն .

Երկիւղածութիւն :

ԽԳ .

Բարի գործք .

Հ . Առտքինութեանց դլսաւոր պառուզը
ո՞րն է :

Պ . Բարի գործքերն են :

Հ . Արքայութեան հասնելու համար
հարկաւո՞ր են բարի գործքերը :

Պ . Հրամեր էք . մէյ մը որ արքայու-
թիւնը վարձք է , որուն որ պէտք է բարի
գործքերով արժանի ըլլալ . մէյ մ'ալ որ

Յիսուս ամէն մէկուն իրեն դործքին յար-
մար վարձք պիտի տայ :

Հ . Մէր դործքերն որ ոչինչ բան են ,
ինչպէս արքայութեան արժանի կրնան ըլ-
լալ :

Պ . Աստուծոյ բարութեամբն արժանի
կ'ըլլան . որովհետեւ որ ինքը մեր բարի
դործքերը Յիսուսի անհուն արգեանցը հետ
կը միացընէ :

Հ . Ի՞նչ պէտք է որով բարի դործքը
վարձուց արժանի ըլլայ :

Պ . Պէտք է որ բարի դործքը ընելու ա-
տեն՝ նախ Աստուծոյ շնորհաց մէջը ըլլանք .
երկրորդ՝ գերբնական պատճառի մը հա-
մար դործենք :

Հ . Պէտք է որ միշտ սիրոյ պատճառաւ
դործենք բարի դործքը :

Պ . Չէ . հաւատոյ , յուսոյ ու ուրիշ
քրիստոնէական առաքինութեանց պատ-
ճառաւ ալ կրնանք դործել :

Հ . Թէ որ մէկը Աստուծոյ շնորհաց մէ-
ջը ըլլայ նէ , իր բարի դործքերը մեղք կը
սեպուին :

Պ . Չէ . բարի են միայն բարոյապէս .
բայց արքայութեանը վարձուց արժանի չեն :
Հ . Ուրեմն թէ որ մէկը Աստուծոյ շնոր-
հաց մէջը չէ , կրնայ բարի դործք չընել , ո-
րովհետեւ արքայութեան վարձուց արժա-
նի չեն ըլլար :

Պ . Մանաւանդ թէ աւելի բարի դործք
պէտք է ընէ , որպէս զի մեղքէ ազատելու
համար պէտք եղած օգնութիւնները ընդու-

նի . ու թէ որ հրամայեալ պարտքերն որ
չկատարէ , նորէն մեղք կը դորձէ :

Հ . Ընդհանրապէս քանի տեսակ բարի
դորձք կայ :

Պ . Գլխաւորները իրեք են . Աղօթք ,
Պահք և Ողորմութիւն :

Հ . Աղօթք ըսելով ի՞նչ կը հասկընաս :

Պ . Ամէն տեսակ բարեսփառութեան
կրթութիւններ , զոր օրինակ մտաւոր կամ
ձայնաւոր աղօթք , պատարագ , շատ ան-
դամ սուրբ խորհրդոց մերձենալ , հոգե-
որ գրքեր կարդալ . Աստուծոյ խօսքը լսել .
և այլն :

Հ . Պահք ըսելով ի՞նչ կը հասկըցուի :

Պ . Ամէն տեսակ մարմնոյ ասլաշխարհք :

Հ . Ողորմութեամբ ի՞նչ պէտք է հասկը-
նալ :

Պ . Սիրոյ , գթութեան ու ողորմութեան
ամէն տեսակ դորձք :

Հ . Գործք ողորմութեան քանի են :

Պ . Եօթը հոգեւոր , ու եօթը մարմնա-
որ դորձք ողորմութեան :

Հ . Հոգեւոր դորձք ողորմութեան ո-
րոնք են :

Պ . 1 Ուսուցանել զտգետս .

2 Խորհուրդ տալ աարակուսելոց .

3 Խրառել զմոլորեալս .

4 Մխիթարել զվատացեալս .

5 Կերել յանցաւորաց .

6 Համբերել պակասութեանց այ-

լոց .

7 Աղօթել վասն կենդանեաց և մե-
ռելոց :

Հ . Մարմնաւոր դործք ողորմնեթեան
որո՞նք են :

Պ . 1 Կերակրել զքաղցեալս .

2 Արբուցանել զջարաւեալս .

3 Զգեցաւցանել զմերկս .

4 Տալ օժեւանս պանդխտաց .

5 Ծառայել հիւանդաց .

6 Այց առնել բանաարդելոց .

7 Թաղել զմեռեալս :

ԽԴ .

**Երանութիւնը և Աշետայանական
խրատը .**

Հ . Երանութիւնըն ի՞նչ են :

Պ . Յիսուսի ութը խօսքը , որով աշ-
խարհիս առջեւ ողորմելի սեսպուտղները՝
Աստուծոյ առջեւ երանելի են , կ'ըսէ :

Հ . Առաջին երանութիւնը ո՞րն է :

Պ . Երանի աղքատաց հոդւով , զի՞նոցա-
է աղքայութիւն երկնից :

Հ . Երկրորդ երանութիւնը ո՞րն է :

Պ . Երանի հեղոց , զի՞նոքա ժառան-
գեսեն զերկիր :

Հ . Երրորդ երանութիւնը ո՞րն է :

Պ . Երանի սգաւորաց , զի՞նոքա մի-
թարեսցին :

Հ . Չորրորդ երանութիւնը ո՞րն է :

Պ . Երանի որ քաղցեալ իցեն արդա-
րութեան , զի՞նոքա յագեսցին :

- Հ. Հինգերորդ Երանութիւնը ո՞րն է :
- Պ. Երանի՛ ողորմածաց , զի նոքա ողորմութիւն գտցեն :
- Հ. Ակցերորդ Երանութիւնը ո՞րն է :
- Պ. Երանի՛ որ սուրբ Են սրտիւք , զի նոքա զԱստուած տեսցեն :
- Հ. Եօթներորդ Երանութիւնը ո՞րն է :
- Պ. Երանի՛ խաղաղաբարարաց , զի նոքա որդիք Աւետարանուական կոչեսցին :
- Հ. Ութերորդ Երանութիւնը ո՞րն է :
- Պ. Երանի՛ այնոցիկ , որ հալածեալիցեն վասն արդարութեան , զի նոցա է արքայութիւն Երկնից :
- Հ. Աւետարանուական խրատ ո՞ր բանը կ'ըսուի :
- Պ. Կան քանի մը մասնաւոր առաքինութիւններ , որ աւետարանուական խրատ կ'ըսուին . վասն զի պարագի տակ չեն ձրդել . բայց Յիսուս թէ ինքը գործեց այն առաքինութիւնները և թէ որոնք որ կատարելութեան կը փափաքին նէ՝ խրատ տուաւ որ իրենք ալ պահեն :
- Հ. Քանի՛ Են այս աւետարանուական խրատները ու որո՞նք Են :
- Պ. Գլխաւորները իրեք Են . Կամաւոր աղքատութիւն .
- Մշտնջենաւոր կուսութիւն .
- Հնազանդութիւն այն ամէն բանի մէջ որ մեղք չէ :
- Հ. Այս իրեք աւետարանուական խրատները ի՞նչպէս կ'ըլլայ պահելը :
- Պ. Ուխտով կ'ըլլայ , ինչպէս որ կրօնաւորական կարգաց մէջ սովորութիւն է :

Հ. Աս ուխտերն ընելը աղէկ բան է
թէ չէ :

Պ. Հրամեր էք, շատ լաւ և շատ գովելի
բան է. բայց այդ բանը ամենուն համար
չէ, ու մարդ ինքը զինքը նախ լաւ չըափած՝
պէտք չէ ընէ :

ԽԵ

Ներգործական շնորհը .

Հ. Կրնա՞նք մենք մեր ուժովը միայն մեր
փրկութեանը համար հարկաւոր եղած ա-
ռաքինութիւնները շահիլ ու բարի գործ-
քերը կատարել :

Պ. Չէ. առանց Աստուծոյ շնորհացը
բան չենք կրնար ընել :

Հ. Շնորհը քանի տեսակ է :

Պ. Երկու. Ներգործական և Ունա-
կական :

Հ. Ներգործական շնորհը ո՞րն է :

Պ. Ներքին ու գերենական օգնութիւնն
մըն է, որ Աստուծած մեզի կու տայ՝ որպէս
զի չարէն զգուշանանք ու բարին գործենք :

Հ. Փրկութեան օգտակար եղած ամէն
գործքի այս օգնութիւնը հարկաւոր է :

Պ. Հրամեր էք. անանկ որ առանց ա-
նոր և ոչ մէկ աղէկ մտածութիւն մը կրնանք
ունենալ :

Հ. Շնորհաց օգնութիւնը ո՞րն է :

Պ. Երկնային լուսով մը մեր միայը կը

Ըւստաւորէ , ու մեր կամացը յորդոր ու
օդնական կ'ըլլայ :

Հ . Աստուած մեղաւորաց դարձին ու
արդարոց յարատեւութեան համար հար-
կաւոր եղած շնորհքները կու տայ :

Պ . Հրամեր էք . որովհետեւ կը հրա-
մայէ որ թէ մեղաւորք դարձի դան և թէ
արդարք իրենց ճամբէն ետ չդառնան , և
ոչ երբէք անկարելի եղած բանը կը հրա-
մայէ . անոր համար ամէն մարդ դոնէ ա-
զօթքի շնորհքը ունի , որ ինչ որ իրեն հար-
կաւոր է՝ անով ընդունի :

Հ . Շնորհքը ձրի պարգեւ մը չէ , որ
Աստուած ուզէ նէ կրնայ շտալ :

Պ . Հրամեր էք . բայց որովհետեւ Յի-
սուս ամենուն համար մեռնիլ յանձն ա-
ռաւ , զամէնքը փրկութեան հարկաւոր ե-
ղած շնորհացը արժանի ըրաւ :

Հ . Թէ որ Աստուած փրկութեան հար-
կաւոր եղած շնորհքը ամենուն կու տայ
նէ , ինչու ամէն մարդ փրկութեան չհաս-
նիր :

Պ . Վասն զի ամէն մարդ շնորհքը ինչ-
պէս որ պէտք է չգործածեր :

Հ . Կրնայ ըլլալ որ մարդ ներքին շնոր-
հաց դէմ կենայ :

Պ . Հրամեր էք . և շատերը կան որ ազատ
կամօք դէմ կը կենան . վասն զի շնորհքը
մարդուս վայ հարկ չդներ :

Հ . Ինչու շնորհքը հարկ չդներ :

Պ . Վասն զի թէ որ հարկ դնելու ըլլար ,
ազատ կամաց դէմ կ'ըլլար :

Հ . Միթէ մարդո շնորհաց հետ մէկ տէղ իր կամաց ազատութիւննալ կը պահէ:

Պ . Հրամեր էք . վասն զի թէ որ մարդ ազատ չըլլար նէ , ոչ առաքինութիւն կ'ըլլար և ոչ մոլութիւն , ոչ արդիւնք և ոչ մեղք :

Հ . Շնորհաց հետ ի՞նչպէս կրնայ ազատութիւնը միանալ :

Պ . Այս գաղանիք մըն է , որուն խելք չենք կրնար հասցընել , ինչպէս ուրիշ խորհրդոց ալ . բաւական է գիտնալ որ Աստուած յայտներ է , և Եկեղեցին կը պատուիրէ որ հաւատանք :

Հ . Աստուած հեթանոսաց և անհաւատից ի՞նչ շնորհք ու ի՞նչ փրկութեան ճամբայ տուեր է :

Պ . Հարկ չէ որ մենք այդ բանը գիտնանք . բաւական է որ գիտենք՝ թէ Աստուած կ'ուզէ որ ամէնքը փրկութեան համնին , և Աստուած անոր համար մարդն ստեղծեր է՝ որ զինքը ճանչնայ , զինքը սիրէ , իրեն ծառայէ և յաւիտենական կենաց արժանի ըլլայ :

Հ . Կրնանիք մենք մեղմէ շնորհաց արժանի ըլլալ :

Պ . Չէ . չէ նէ շնորհք չէր ըլլար . բայց Յիսուսի արդեամբը շնորհք ընդունելու համար՝ Աստուած ճամբաներ դրեր է :

Հ . Որո՞նիք են այդ ճամբաները :

Պ . Գլխաւորաբար ազօթքն ու սուրբ խորհուրդներն են :

ԽԶ.

Ունակական շեորհիք .

Հ . Ունակական շնորհքն որ սրբարար
շնորհք ալ կ'ըսուի նէ , ի՞նչ բան է :

Պ . Գերբնական և մնայուն պարգեւ մը ,
որ Աստուած մեր հոգւոյն կը պարգեւէ՝
մեր մեղացը թողութիւն տալով :

Հ . Սրբարար շնորհքը ի՞նչ կ'ընէ :

Պ . Զմեզ կ'արդարացընէ , ու կ'ընէ որ-
դի Աստուծոյ , աաձար հոգւոյն սրբոյ ,
ժառանգակից Յիսուսի , ու արժանաւոր
յաւիտենական կենաց :

Հ . Սրբարար շնորհաց հետ մէկտեղ ո՞ր
առաքինութիւնները կ'ընդունինք :

Պ . Հաւատոյ , Յուսոյ ու Սիրոյ հեղա-
կան առաքինութիւնները :

Հ . Սրբարար շնորհքը կը նայ աճիլ :

Պ . Հրամեր էք . ուստի պիտի նայինք որ
մեր կողմանէ աճեցընելու փոյթ ունենանք ,
ու ըրլայ թէ անհոգութեամք կորսընցը-
նենք :

Հ . Սրբարար շնորհքը Երք կը կորսընցը-
նենք :

Պ . Երբոր մահուչափ մեղք գործենք :

Հ . Սէկն որ սրբարար շնորհքը կորսըն-
ցընէ նէ՝ Հաւատք , Յոյս և Սէրն ալ կը
կորսընցընէ :

Պ . Սէրը կը կորսընցընէ , բայց Հաւատ-

քըն ու Յոյսը չէ . միայն թէ անոնք ալ կը կորսընցընէ , թէ որ այն առաքինութեանց գէմ մեղք գործէ , այս ինքն անհաւատութիւն և յուսահասութիւն :

Հ . 'Ներելի մեղքերը սրբարար շնորհքին ի՞նչ կընեն :

Պ . Սիրոյ եռանդը կը պակսեցընեն , ու մահուչափ մեղաց մէջ ինկնալու վտանգի մէջ կը ձգեն . մանաւանդ թէ որ մէկը շատ անգամ ու գիտութեամբ գործէ . անանկով շնորհքը կորսընցընելու ճամբայ կը բանան :

Հ . Սրբարար շնորհքը ի՞նչպէս կրնանք աճեցընել :

Պ . Քրիստոնէական առաքինութիւններ շահելով , բարի գործքերով , և մասնաւորապէս շատ անգամ սուրբ խորհրդոց մերձենալով :

Հ . Սրբարար շնորհք ունենալնուս ապահով կրնանքը ըլլալ :

Պ . Չէ . առանց մասնաւոր յայտնութեան ոչ ոք գիտէ թէ արգեօք սիրոյ՝ չէ նէ ատելութեան է արժանի , և Աստուած ասանկ կ'ուզէ , որպէս զի արթուն կենանք ու խոնարհութեան մէջ մնանք չի պահպատահանուի :

Հայք յո նախաւառար շիշան

մի զգական ականք դամական . զի դմուսդ . թ մ . զայզայ յո նախաւառար դամականք քնչ ին չի մի միմասաւառար մաքամնաւառ որ չոյ սպասաւար մաքամնաշքնչ , և օւառանի ոյ առ , մաքամնաւար մէջում դամբա չի մի չայզայ դմուսդ միշտա ականքաց զայ

Այս առ զնումն է մասին . այս պարբ առ նոյն
ընտանիքում դասաւոր պարբ էն . անունուով
առաջաւագ մասին առ առ անունի առ առ անունի առ :

Վերջինի մարդոյ .

Հ . Մեզ չարէն հեռու բանելու և բա-
րի գործքը ընելու գլխաւոր յարդորը ո՞րն է :
Պ . Մեր վերջինիքը շատ անգամ յիշելն է :
Հ . Քանի են վերջինիք մարդոյ , ու ո-
րո՞նք են :

Պ . Չորս են . Մահ .

Դատաստան .

Դժոկք .

Արքայութիւն :

Հ . Մահուան վրայ գլխաւորակէս ի՞նչ
մտածութիւնն պէտք է ընենք :

Պ . Թէ մահը ստոյգ է , ու մարդ անկէց
չկրնար փախչիլ . իսկ ժամանակը անըս-
տոյգ է :

Հ . Մահուընէն ետեւ ի՞նչ կը հանդիպի :

Պ . Մարմիննիս հող կը դառնայ , ու հո-
գինիս Աստծուծոյ առջեւ կ'ելլայ որ իրեն
առանձին դատաստանն ընդունի , ու իր
դործոցը վարձքը կամ պատիժը առնէ :

Հ . Առանձնական դատաստանէն զատ
ուրիշ դատաստան ալ կայ :

Պ . Հրամեր էք . աշխարհքիս եաքը պի-
ախ ընդհանուր դատաստան ալ ըլլայ . և
ի՞նչ որ առանձնական դատաստանին մէջ
վճռուած է , ընդհանրական դատաստա-
նին մէջ պիտի նորէն հասաւատուի , ու բո-
լոր աշխարհիս առջին յայտնի ըլլայ :

Հ . Ընդհանրական գատաստանէն ետեւ
ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . Արդարք հոգւով ու մարմնով ար-
քայութիւն պիտի թռչն , իսկ մեղաւորք
դժոխք պիտի թափին :

Հ . Արքայութիւնն ի՞նչ է :

Պ . Զուարձութեանց տեղ մըն է , ուր
որ արդարք զԱստուած պիտի տեսնան , ու
առատութեամբ ամէն երանութիւն պիտի
վայելեն՝ առանց թշուառութեան մը :

Հ . Դժոխքն ի՞նչ է :

Պ . Տանջանաց տեղ մը , ուր որ մեղա-
ւորք Աստուծոյ տեսութենէն ու ամէն մխի-
թարութենէ պիտի զուրկ մնան , և այնպի-
սի կրակով մը պիտի տանջուին , որ այս
աշխարհքիս կրակը և ոչ անոր շուքն է :

Հ . Ո՞րչափ ատեն արդարք արքայու-
թիւնը պիտի մնան , ու մեղաւորք դժոխքը :

Պ . Յաւիտեան . արդարք ոչ երբէք վախ
պիտի ունենան իրենց երջանկութեան վեր-
ջը տեսնալու . մեղաւորք աւ ոչ երբէք
յոյս պիտի ունենան իրենց տանջանաց
ծայրը հասնելու :



ածուն մէտառապունք մայթագծած բաշի . 2
լու լուս վայրի չեղի կա ի

զա յանձնան առ յաւրան պայտի / . 3
զարաքան ձան անձան վայրի մայթագծած

: մէտիւնի վայրի գախե՞ր :

: 2 չեղի մայթագծած / . 2

զա . 3 այց յան ըմաննաւուառ զ . 3
առ մասն առ հայր օնուառ / ից պայտի զա

: զա մասն առ առ այցի ըմաննաւուառ :

: 3 չեղի մայթագծած / . 3

այց զա զան զա յան ըմաննաւուառ . 3
հայր մասն առ մայթագծած ըմաննաւուառ / զա :

հայր մասն առ այց հայր մասն այցան /
զա զա . մասն մասն հայր զա յայլայդ փա

: 3 սպառ կամ չումայիսան անդ յանդա
այցան զա յայլայդ մասն հայր / . 3

: զայր զա յայլայդ առ , մասն վայրի կայալ /
մայտի զայր զա յայլայդ . մասն կայալ / . 3

զայր մասն այցան զա յայլայդ մասն մասն հայր ի

հայր զա յայլայդ . մասն մասն այլ
բամանան ըմանի մասն մասն մասն այլ


այլ մասն այլ մասն այլ մասն մասն այլ մասն այլ


այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ

այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ

այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ

այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ մասն այլ





۲۰





